

**ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0811.05.5 <<ՆՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ>>**

**ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 0811.05.01.5 <<ՏԵԽՆԻԿ - ՆՈՂԱՇԻՆԱՐԱՐ>> ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ**

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ**



### III. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԼԱՆԸ

N	Առարկաների անվանումը և մոդուլները	Ատեսավորումը ըստ կիսամյակների			Ուսանողի ուսումնական բեռնվածությունը (ժամ)			Բաշխումն ըստ կուրսերի և կիսամյակների						
		Քնն.	Ստուգարք	Կուրսաշխ.	Պարտադիր լսարանային բեռնվածություն			2-րդ կուրս		3-րդ կուրս		4-րդ կուրս		
					Ընդամենը	Այլ թվում		3-րդ կիս. 16 շաբ	4-րդ կիս. 18 շաբ.	5-րդ կիս. 14 շաբ.	6-րդ կիս. 11 շաբ.	7-րդ կիս. 12 շաբ.	8-րդ կիս. 9 շաբ	
				Տես. ուսուց.		Լաբոր. և գործն. աշխ	Սեմինար պարապմունք							
	<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ, ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ</b>													
1.	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ		3; 4տ		72	54	18		32	40				
2.	Տնտեսագիտության հիմունքներ		6տ		54	44	10				54			
3.	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ		5տ		54	46	8			54				
4.	Իրավունքի հիմունքներ		5տ		36	30	6			36				
5.	Պատմություն		3; 4տ		54	46	8	32	22					
6.	Ռուսաց լեզու		3; 4տ		72	54	18	32	40					
7.	Օտար լեզու		3; 4տ		72	54	18	32	40					
8.	Լանդշաֆտագիտության և էկոլոգիայի հիմունքներ		5տ		36	30	6			36				
9.	Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		4տ		28	24	4		28					
10.	Ֆիզիկական կուլտուրա		3-7; 8տ		160	152	8	32	36	28	22	24	18	
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				<b>638</b>	<b>534</b>	<b>88</b>	<b>16</b>	<b>160</b>	<b>206</b>	<b>154</b>	<b>76</b>	<b>24</b>	<b>18</b>
	<b>ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>													
1.	Հաղորդակցություն		3տ		36	10	26	36						
2.	Անվտանգություն և առաջին օգնություն		3տ		36	12	24	36						
3.	Համակարգչային օպերատորություն		5տ		36	4	32			36				
4.	Աշխատանքային գործունեության ընդհանուր հմտություններ		6տ		54	20	34				54			
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				<b>162</b>	<b>46</b>	<b>116</b>		<b>72</b>		<b>36</b>	<b>54</b>		
	<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ</b>													
1.	Գյուղատնտեսական, մելիորատիվ, շինարարական մեքենաներ և մեքենայացում		3տ		72	36	36	72						
2.	Հողագիտություն		3տ		36	20	16	36						
3.	Ընդհանուր երկրաբանություն		3տ		54	30	24	54						
4.	Գյուղատնտեսագիտության հիմունքներ		3տ		54	30	24	54						
5.	Ընդհանուր երկրագործություն		4տ		54	32	22		54					

6.	Անասնապահության հիմունքներ		4տ		54	40	14			54			
7.	Հողաշինարարական գծագրություն		3տ		72	18	54		72				
8.	Ընդհանուր գեոդեզիա		3տ		54	18	36		54				
9.	Թեոդոլիտային հանույթ		4տ		72	30	42			72			
10.	Գրունտների մեխանիկա և շինարարական նյութեր		4տ		54	36	18			54			
11.	Տախիոմետրական և մենզուլային հանույթ		4տ		72	30	42			72			
12.	Նիվելիրացման աշխատանքներ		4տ		54	28	26			54			
13.	Հողագիտություն, հողային քարտեզագրում		5տ		36	12	24				36		
14.	Գյուղատնտեսական արտադրության էկոնոմիկա և մարքեթինգ		5տ		54	30	24				54		
15.	Գյուղատնտեսական արտադրության կազմակերպում և կառավարում		6տ		54	30	24					54	
16.	Տեղեկությունների մշակման վիճակագրական մեթոդները		7տ		54	24	30						54
17.	Ձեռներեցություն		7; 8տ		72	22	50						36 36
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				<b>972</b>	<b>466</b>	<b>506</b>		<b>342</b>	<b>360</b>	<b>90</b>	<b>54</b>	<b>90 36</b>
	<b>ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ</b>												
1.	Գյուղական բնակավայրերի նախագծում		5տ		54	30	24				54		
2.	Հողային իրավունք		4տ		72	42	30		72				
3.	Քարտեզագրություն		5տ		18	10	8				18		
4.	Հողաշինարարություն և հողաշինարարական նախագծում		5տ		54	22	32				54		
5.	Ներհամայնքային հողաշինարարություն		6տ		72	28	44					72	
6.	Հողային կադաստր, հողերի պետական գրանցում և հաշվառում		6տ		72	40	32					72	
7.	Տեղական նշանակության ճանապարհների նախագծում		5տ		72	32	40				72		
8.	Քարտեզագրության մոդելավորում		7տ		36	14	22						36
9.	Քարտեզների նախագծում		7տ		36	16	20						36
10.	Հողաբարելավում և հողավերականգնում		7տ		72	30	42						72
11.	Հողային ռեսուրսների կառավարում		6տ		54	30	24					54	
12.	Հողային ռեսուրսների օգտագործման կանխատեսում		7տ		54	28	26						54
13.	Ֆոտոգրամմետրիա		7տ		72	40	32						72
14.	Միջհամայնքային հողաշինարարություն		8տ		72	40	32						72
15.	Հողերի գնահատում և մոնիթորինգ		8տ		72	40	32						72
16.	Հողաշինարարական և հողակադաստրային գեոդեզիական աշխատանքներ		8տ		72	40	32						72

	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				<b>954</b>	<b>482</b>	<b>472</b>	<b>16</b>		<b>72</b>	<b>198</b>	<b>198</b>	<b>270</b>	<b>216</b>
	<b>ԸՆՏՐՈՎԻ</b>		7ս; 8ս		90								<b>42</b>	<b>48</b>
	<b>ՊԱՀՈՒՍԱՅԻՆ ԺԱՄԵՐ</b>				64				2	10	26	14	6	6
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				<b>2880</b>				<b>576</b>	<b>648</b>	<b>504</b>	<b>396</b>	<b>432</b>	<b>324</b>
	<b>ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>													
	Շաբաթվա ժամերի քանակը								36	36	36	36	36	36

	<b>IV. ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ</b>			N	<b>VII. ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱՔԻՆԵՏՆԵՐԻ, ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԵՎ ԱՐՇԵՍԱՆՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ</b>
1	Ընտանեկան կյանքի նախապատրաստում				<b>ԿԱՔԻՆԵՏՆԵՐ</b>
2	Տարիքային հոգեբանություն			1	հայոց լեզվի և խոսքի մշակույթի
				2	ռուսաց և օտար լեզուների
				3	գծագրության
	<b>V. ՊՐԱԿՏԻԿԱ</b>	Կիսամյակ	Շաբաթ	4	տնտեսագիտության
1	Ուսումնական	3-7	15	5	գյուղատնտեսական և մեյիորատիվ շինարարական մեքենաների
2	Մասնագիտական	6	7	6	ավարտական ամփոփիչ ատեստավորման նախապատրաստման
3	Նախաավարտական	8	4	7	համակարգչային
					<b>ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ</b>
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		26	1	ուսուցման տեխնիկական միջոցների
				2	գեոդեզիայի և քարտեզագրության
	<b>VI. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ</b>				
	<b>Ավարտական (դիպլոմային) առաջադրանքի կատարում մայիսի 4-ից հունիսի 21-ը շրջանում, պաշտպանություն՝ հունիսի 22-ից հունիսի 28-ը շրջանում:</b>				<b>ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ</b>
				1	Մարզադահլիճ
				2	Մարզահրապարակ

**VIII. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ**

1. Ուսանողների գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով, հաստատության ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել առանձին առարկաների /մոդուլների/ ընթացիկ /միջանկյա/ քննություններ, ստուգարքներ, ստուգողական աշխատանքներ: Ստուգարքներն, այդ թվում՝ տարբերակված, անցկացվում են առարկայի /մոդուլի/ համար սահմանված ժամերի հաշվին: Ըստ առարկաների /մոդուլների/ ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը: Քննությունների և ստուգարքների անցկացման կարգը սահմանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:
2. Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի, ինչպես նաև ուսումնամեթոդական խորհրդի կողմից երաշխավորված առանձին առարկաների /մոդուլների/ գծով ուսումնական պարապմունքների, կուրսային նախագծման և արհեստանոցներում արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը բյուջետային ֆինանսավորման դեպքում կարող է բաժանվել ենթախմբերի՝ յուրաքանչյուրում առնվազն 8 ուսանող՝ ելնելով ուսուցանվող առարկայի /մոդուլի/ յուրահատկությունից: Համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ /անհատական պարապմունքներ, ուսուցման անհատական ստեղծագործական ձևեր և այլն/: Ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ առանձին առարկաների /մոդուլների/ տեսական դասընթացը կարող է կազմակերպվել հոսքային պարապմունքի ձևով: Ուսումնամեթոդական խորհրդի որոշումներն ու երաշխավորությունները ուսումնական տարվա սկզբում քննարկում է քոլեջի խորհուրդը, հաստատում՝ տնօրենը:
3. Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը, բայց ոչ ավելի, քան շաբաթը 4 ժամ, որոշում է քոլեջը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված նախասիրական առարկաների ծրագիրը հաստատում է քոլեջի ուսումնամեթոդական խորհուրդը:
4. Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված նյութի որոշակի մասը կարող է իրացվել նաև արտաուսումնական պարապմունքների տարբեր ձևերով՝ մարզական ակումբներում, սեկցիաներում, խմբակներում:

5. Համարիչ-հայտարարով բաժանված շաբաթների օրերի առաջին մասն օգտագործվում է համարիչի, մյուս մասը՝ հայտարարի նշանակության համար:
6. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ելնելով տեղական պայմաններից, կարելի է փոփոխել՝ պարտադիր պահպանելով տեսական և գործնական ուսուցման, մոդուլների ամփոփման, պրակտիկայի, արձակուրդի ընդհանուր տևողությունը: Ամանորի և Սուրբ ծննդի տոների շաբաթը քոլեջը հաշվի է առնում յուրաքանչյուր տարվա աշխատանքային ժամանակացույցը կազմելիս:
7. Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների ներկայացրած խորհրդատվությունների անցկացման ձևը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը:
8. Պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:
9. Պահուստային ժամերը տնօրինում է քոլեջը՝ ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան:
10. Ուսումնական պրակտիկան կարող է անցկացվել կենտրոնացված, կամ տեսական պարապմունքների հետ հաջորդաբար՝ պահպանելով պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձև ավարտվում է հաշվետվությամբ՝ գնահատումով:
11. Նախաավարտական պրակտիկան անց է կացվում կենտրոնացված կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:
12. Քոլեջը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաբինետներ, մասնագիտացված լսարաններ:

**ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ>>**

<b>Մոդուլի դասիչը</b>	ԱՀ-Հ-5-17-001
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է զարգացնել ուսանողի անձնական շփման ունակությունները, ակտիվացնել միջանձնային հաղորդակցության հնարավորությունները, ձևավորել աշխատանքային և մասնագիտական գործունեության ընթացքում նպատակային հաղորդակցման, գործնական կապերի ու հարաբերությունների ստեղծման կարողությունը:
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ, որից՝ տեսական ուսուցում 10 ժամ, գործնական աշխատանք 26 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չէ
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար, 2) կիրառի ուղղակի հաղորդակցման ձևերը, 3) կիրառի անուղղակի հաղորդակցման ձևերը, 4) ձևավորի և զարգացնի միջանձնային հաղորդակցում, 5) խթանի համագործակցության ձևավորումը, ստեղծի նախապայմաններ շարունական գործընկերության համար:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը ուսումնառության յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է բացատրում հաղորդակցման անհրաժեշտությունը անձի ինքնադրսևորման և գործարար հաջողությունների համար, 2) ներկայացնում է շփման և անձնական հաղորդակցման ձևերը, բաղադրիչները, 3) ներկայացնում է գործնական հաղորդակցման եղանակները, բաղադրիչները, 4) շփման հնարավորությունը ուղղորդում է նպատակային հաղորդակցմանը,

	5) անձնական հատկանիշները օգտագործում է գործնական հաղորդակցության մեջ:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր անձնական հաղորդակցման և շփման ձևերի, գործնական հաղորդակցման եղանակների ու դրանց բաղադրիչների վերաբերյալ: Կառաջադրվեն իրավիճակային խնդիրներ՝ նպատակային հաղորդակցման հնարավորությունները բացահայտելու համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և առաջադրված իրավիճակում օգտագործում է հնարավորությունները:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված հարցաշարեր, իրավիճակային խնդիրներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Կիրառել ուղղակի հաղորդակցման ձևերը
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում ուղղակի հաղորդակցման ձևերը, 2) բանավոր հաղորդակցման ժամանակ վարում է զրույց, արձագանքում է հարցադրումներին, 3) հանդես է գալիս հաղորդումներով և զեկույցներով՝ ներկայացնում է հստակ և նպատակային խոսք, 4) ուղղակի հաղորդակցման ընթացքում հայտնում է տեսակետ, դրսևորում է հետաքրքրություններ, հաճոյախոսում է, 5) մասնակցում է քննարկումների և բանավեճերի, պահպանում է համագործակցության շարունակականությունը:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր ուղղակի հաղորդակցման ձևերի վերաբերյալ, հանձնարարվում է որոշակի թեմայի շուրջ զեկույց և հաղորդում պատրաստել, առաջադրվում է թեմատիկ քննարկումներ, որի ընթացքում ուսանողը հանդես է գալիս հնարավոր բոլոր դրսևորումներով: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, խոսքը կառուցում է հստակ և նպատակային, կարողանում է արձագանքել ըստ իրավիճակի:



<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված քննարկման ենթակա թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Կիրառել անուղղակի հաղորդակցման ձևերը
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում անուղղակի հաղորդակցման ձևերը,</li> <li>2) կազմում և ձևակերպում է գրավոր խոսք՝ պահպանելով նպատակայնությունն ու էթիկան,</li> <li>3) օգտագործում է տեղեկատվական տեխնոլոգիաները և այլ տեխնիկական միջոցները՝ նպատակային տեղեկատվությունը փոխանցելու համար,</li> <li>4) կազմում է գրություններ՝ ըստ հասցեատիրոջ և նպատակի,</li> <li>5) վարում է տեղեկատվության հավաքագրման և փոխանցման փաստաթղթեր,</li> <li>6) բանավոր հաղորդակցման նյութը փոխարկում է գրավորի,</li> <li>7) գրավոր հաղորդակցման նյութը փոխարկում է բանավոր հակիրճ նյութի:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային առաջադրանքների միջոցով:</p> <p>Ուսանողին կտրվեն հարցեր անուղղակի հաղորդակցման ձևերի վերաբերյալ, կհանձնարարվի որոշակի թեմայի շուրջ կազմել տեքստ՝ հաշվի առնելով հասցեատիրոջը, կառաջադրվի թեմա, որի վերաբերյալ տարբեր աղբյուրներից հավաքագրվում, ամբողջացվում և փոխանցվում է տեղեկատվությունը, կհանձնարվի բանավոր հակիրճ միտքը վերածել գրավոր ամբողջական տեքստի, իսկ ամբողջական ծավալուն տեքստից առանձնացնել առաջնային ինֆորմացիան և ներկայացնել հակիրճ խոսքով:</p> <p>Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը, թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և առանց էական թերությունների կատարում է հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված քննարկման ենթակա թեմաներ, դերային խաղերի սցենարներ,

	հաղորդակցման տեխնիկական սարքեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Ձևավորել և զարգացնել միջանձնային հաղորդակցում
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) նախաձեռնում է անձնական և աշխատանքային շփում՝ ըստ իրավիճակի և զրուցակցի կամ հասցեատիրոջ,</li> <li>2) ստանում, մշակում և դասակարգում է անհրաժեշտ (նպատակային) տեղեկատվությունը,</li> <li>3) առկա տեղեկատվությունն օգտագործում է միջանձնային հաղորդակցում ձևավորելու համար,</li> <li>4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար,</li> <li>5) ներգրավվում է երկխոսություններում, քննարկումներում, հայտնում է կարծիք, հիմնավորում է տեսակետներ,</li> <li>6) պահպանում և եզրափակում է երկխոսությունը,</li> <li>7) կարողանում է հաղորդակցվել՝ հաշվի առնելով իրավիճակը և ունկնդրի հետաքրքրությունները:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի գործնական աշխատանքներ որոշակի տեղեկատվություն ստանալու, մշակելու և դասակարգելու համար: Կառաջադրվի իրավիճակային խաղեր՝ անձնական շփում նախաձեռնելու, երկխոսության կողմ լինելու, զրույցը պահպանելու և եզրափակելու կարողությունները դիտարկելու, գնահատելու համար: Նույն առաջադրանքը կհանձնարարվի աշխատանքային շփումների համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ, սցենարներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Խթանել համագործակցության ձևավորումը, ստեղծել նախապայմաններ շարունակական գործընկերության համար
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ներկայացնում է համագործակցությանը խթանող միջոցառումները (գովազդ, հայտարարություններ, ցուցահանդեսներ),

	<p>2) հավանական գործընկերոջ վերաբերյալ հավաքում է անհրաժեշտ տեղեկատվություն,</p> <p>3) հավաքագրված տեղեկատվությունն օգտագործում է գործարար հաղորդակցում ձևավորելու համար,</p> <p>4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար,</p> <p>5) հաղորդակցման ընթացքում ձեռք է բերում վստահություն,</p> <p>6) ապահովում է հետադարձ կապի միջոցառումներ:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների և իրավիճակային խաղերի միջոցով: Թեստերի միջոցով ստուգվում է համագործակցությունը խթանող միջոցառումների իմացությունը, և կոնկրետ դեպքերի համար դրանց կիրառման առավել նպաստավոր տարբերակները: Կհանձնարարվի հավաքագրել որոշակի գործընկերոջ վերաբերյալ տեղեկատվություն և օգտագործել գործարար հաղորդակցում ձևավորելու համար: Կառաջադրվի իրավիճակային խաղեր՝ գործնական հաղորդակցում նախաձեռնելու, համագործակցության հասնելու և հետադարձ կապ ապահովելու համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր, մասնավորապես՝ հարց ու պատասխանը, թեստերը, նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ, սցենարներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ &lt;&lt;ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՈՒՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ&gt;&gt;</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԱՀ-ԱԱՕ-5-17-001
<b>Մոդուլի նպատակը</b>	<p>Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները պահպանելու, սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան կենցաղը և աշխատանքը կազմակերպելու, հավանական վտանգները և վթարները կանխարգելելու, արտադրական վթարների դեպքում՝ անվտանգության միջոցառումներ իրականացնելու և առաջին օգնություն ցուցաբերելու կարողություններ:</p>
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ, որից՝

	տեսական ուսուցում 12 ժամ գործնական աշխատանք 24 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չէ
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները, 2) կազմակերպի կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան, 3) կանխի հավանական վտանգները և վթարները, իրականացնի անվտանգության միջոցառումներ, 4) ցուցաբերի առաջին օգնություն:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը ուսումնառության յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է բացատրում անվտանգության կանոնների սահմանման, իրավական կարգավորման և պահպանման անհրաժեշտությունը, 2) ըստ հիմնական բնագավառների ճիշտ է ներկայացնում անվտանգության կանոնների պահանջները, 3) ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները, 4) ճիշտ է ներկայացնում հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները, 5) ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները, 6) ներկայացնում է անվտանգության կանոնների խախտման հետևանքները, պատասխանատվությունները:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը գնահատվելու է թեստային առաջադրանքի հիման վրա: Ուսանողին կհանձնարարվի առնվազն 10 առաջադրանքով թեստ, որում նա պետք է ընտրի տվյալ իրավիճակի ճիշտ պատասխանը: Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ անվտանգության հիմնական կանոնները՝ ըստ տարբեր մասնագիտական աշխատատեղերի, տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը, հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները, դրանց խախտման հետևանքները,

	<p>պատասխանատվությունը,          էլեկտրաանվտանգության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը:          կենցաղային հիմանական սարքերի անվտանգության կանոնները:          Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը առաջադրանքը կատարում է ճիշտ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ          գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	<p>Կազմակերպել կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ներկայացնում է մարդու առողջության և աշխատանքի ընթացքում աշխատունակության վրա ազդող գործոնները (սանիտարահիգիենիկ, հոգեբանաֆիզիոլոգիական, էսթետիկական, սոցիալական-հոգեբանական),          2) ներկայացնում է աշխատավայրի սանիտարիայի և հիգիենայի ընդհանուր նորմերը (միկրոկլիման, ճառագայթումը, լուսավորվածությունը, տատանումները և այլն),          3) ներկայացնում է աշխատանքի համար անհրաժեշտ նյութերը և դրանց անվնաս օգտագործումը,          4) ներկայացնում է սանիտարիայի և հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ միջոցառումները:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել որոշակի, կոնկրետ իրավիճակից բխող սանիտարիայի և հիգիենայի պահպանման, ինչպես նաև անհրաժեշտ աշխատանքային կամ կենցաղային նյութերի անվնաս օգտագործմանն ուղղված միջոցառումներ:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է կատարում հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ          գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	<p>Կանխել հավանական վտանգները և վթարները, իրականացնել անվտանգության միջոցառումներ</p>

<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառները և հետևանքները,</li> <li>2) ներկայացնում է արտադրական վթարների կանխման աշխատանքները,</li> <li>3) ներկայացնում է առանձին խմբերի (հաշմանդամություն ունեցող անձինք, հղիներ, անչափահասներ և այլն) աշխատանքային առանձնահատուկ պայմանները և վտանգների կանխման սահմանված միջոցառումները,</li> <li>4) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների ու դժբախտ պատահարների փաստաթղթային ձևակերպումների կարգը:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառների ու հետևանքների, դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ: Կհանձնարարվի ներկայացնել որոշակի խմբերի համար սահմանված աշխատանքային պայմանների ապահովման և կոնկրետ վտանգի կանխարգելմանն ուղղված միջոցառումներ: Կառաջադրվի կոնկրետ կենցաղային վթարի կամ պատահարի համար ներկայացնել փաստաթղթային ձևակերպումներ բաղադրիչները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ  գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	<p>Ցուցաբերել առաջին օգնություն</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) տիրապետում է տարբեր իրավիճակներում առաջին օգնության հիմնական կանոններին,</li> <li>2) առաջին օգնության գործողությունների քայլերը ճիշտ է ներկայացնում,</li> <li>3) կատարում է արհեստական շնչառության և սրտի աշխատանքի վերականգնման գործողություն,</li> <li>4) կատարում է արյան հոսքի դադարեցման և բաց վնասվածքների վիրակապման գործողություն,</li> <li>5) կատարում է այրվածքների նախնական մշակման և էլեկտրահարվածին առաջին օգնություն ցուցաբերելու գործողություններ,</li> <li>6) տարբեր կտրվածքների դեպքում կատարում է վիրակապման և անշարժացման գործողություն,</li> <li>7) ներկայացնում է տարբեր թունավորման դեպքերում առաջին օգնության գործողությունները:</li> </ol>

<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի կատարել (անհնարինության դեպքում՝ նկարագրել) առաջին օգնության գործողություններ՝ ըստ դեպքերի: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է կատարում բոլոր հանձնարարությունները:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ, առաջին օգնության համար անհրաժեշտ միջոցներ, նյութեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ &lt;&lt;ԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅՈՒՆ&gt;&gt;</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԱՀ-ՀՕ-5-17-001
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է զարգացնել ուսանողի համակարգչային տեխնիկայից օգտվելու և դրա ծրագրային հնարավորությունները կիրառելու առաջնային կարողությունները, աշխատանքային գործունեության ընթացքում և անձնական կարիքների շրջանակներում կիրառել համակարգչային օպերացիոն համակարգերի, գրասենյակային փաթեթների (Microsoft Office) ծրագրերը, կատարելագործել համացանցից օգտվելու կարողությունները և տեղեկատվական բազաների հետ նպատակային աշխատելու հմտությունները:
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 4 ժամ, գործնական աշխատանք՝ 32 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չէ
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) կիրառի համակարգչային համալիրում ներառվող բաղադրիչները և օպերացիոն համակարգը, 2) խմբագրի և ֆորմատավորի տեքստեր, 3) պատրաստի և խմբագրի աղյուսակներ, 4) կատարի գրաֆիկական խմբագրում և նկարագրում,

	<p>5) համակարգչային ծրագրերով կազմակերպի ցուցադրություն,</p> <p>6) աշխատի համացանցում:</p>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը ուսումնառության յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Կիրառել համակարգչային համալիրում ներառվող բաղադրիչները և օպերացիոն համակարգը
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) համակարգչային համալիրում ներառվող հիմնական և լրացուցիչ բաղադրիչները բնութագրում է,</p> <p>2) ճիշտ է պահպանում համակարգիչը և բաղադրիչները միացնելու, օգտագործելու և անջատելու տեխնիկական պայմանները,</p> <p>3) օգտվում է համակարգչային օժանդակ տեխնիկական սարքերից,</p> <p>4) ներկայացնում է օպերացիոն համակարգի պատուհանային կառուցվածքը,</p> <p>5) ներկայացնում է կիրառվող հիմնական ծրագրերը,</p> <p>6) բացում է առաջադրված թղթապանակը և ֆայլը,</p> <p>7) օգտվում է պատուհանային մենյուի հիմնական հրամաններից,</p> <p>8) ստեղծում է նոր թղթապանակ ու ֆայլ, պահպանում, բացում, փակում և տեղադրում է առաջադրված վայրում,</p> <p>9) կատարում է փաստաթղթի տպագրում:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով:</p> <p>Ուսանողին կտրվեն հարցեր համակարգչի հիմնական և լրացուցիչ բաղադրիչների, օժանդակ տեխնիկական սարքերի, դրանց կիրառման և նշանակության մասին: Կհանձնարարվի միացնել համակարգիչը և դրան կից օժանդակ տեխնիկական սարքերը, օգտագործել ծրագրային հնարավորությունները՝ համաձայն առաջադրանքի: Ուսանողին կառաջադրվեն առնվազն 3 հիմնական ծրագրում կատարել նույն գործողությունը. թղթապանակ և ֆայլ բացելու, պատուհանային մենյուի հիմնական հրամաններից օգտվելու, ստեղծված ֆայլը պահպանելու, փակելու, առաջադրված վայրում տեղադրելու և տպագրելու գործողություն:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր, համակարգչային օժանդակ տեխնիկական սարքեր:



<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Խմբագրել և ֆորմատավորել տեքստեր
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար ծրագրերը պատրաստել է,</li> <li>2) մուտքագրում է տեքստ, մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ,</li> <li>3) տեքստային ցուցիչը տեղաշարժելով կատարելում է ուղղումներ, ջնջումներ, լրացումներ, փոփոխություններ,</li> <li>4) մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորման գործողությունները ճիշտ է կատարում,</li> <li>5) կարողանում է տեքստին կից ներմուծել նկարներ, գրաֆիկներ, աղյուսակներ, անիմացիաներ:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի տեքստեր մուտքագրելու, ձևավորելու, խմբագրելու տեքստը հավելելու գործողություններ՝ առնվազն 3 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Պատրաստել և խմբագրել աղյուսակներ
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) աղյուսակներ կազմելու համակարգչային ծրագրերը և դրանց կիրառումը ներկայացնում է,</li> <li>2) առաջադրված չափերով կազմում է աղյուսակ և մուտքագրում տվյալներ,</li> <li>3) աղյուսակում կատարում է ուղղումներ, լրացումներ, փոփոխություններ,</li> <li>4) աղյուսակի տվյալների մեջ ստեղծում է պարզ ֆունկցիոնալ կախվածություն:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի աղյուսակ կազմելու, ձևավորելու, խմբագրելու, տվյալներ մուտքագրելու, աղյուսակային տվյալները հավելելու և տվյալների ֆունկցիոնալ կախվածություն ստեղծելու գործողություններ՝ առնվազն 2

	<p>հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը: Ֆունկցիոնալ կախվածության օրինակ կարող է հանդիսանալ թվաբանական գործողությունների ամփոփումը, վերափոխումը (օրինակ՝ տոկոսի վերածելը) և այլն:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ  գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	<p>Կատարել գրաֆիկական խմբագրում և նկարագարում</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) գծագրում է գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով նաև Autoshapes պատուհանի պատրաստի ձևերը,</li> <li>2) գծագրում է կանոնավոր պատկերներ,</li> <li>3) ֆորմատավորում է գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենելով, պտտելով և չափերը փոխելով,</li> <li>4) խմբավորում է գրաֆիկական օբյեկտները,</li> <li>5) գծագրում է տեքստային բլոկներ,</li> <li>6) կատարում է գրաֆիկական օբյեկտների գունաերանգավորում:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի գրաֆիկական օբյեկտներ, կանոնավոր պատկերներ, տեքստային բլոկներ գծագրելու, խմբագրելու, տվյալներ մուտքագրելու, խմբավորելու, ձևավորելու գործողություններ՝ առնվազն 3 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>

<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Համակարգչային ծրագրերով կազմակերպել ցուցադրություն
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ցուցադրական ծրագրերը և դրանց պատուհանի կառուցվածքը ճիշտ է ներկայացնում,</li> <li>2) մուտքագրում է տեքստ, թվային արժեքներ և պարզ գործողություններ,</li> <li>3) ներբեռնում է նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ, տվյալներ՝ աղյուսակի, գրաֆիկի տեսքով,</li> <li>4) կարողանում է առաջադրված թեմայով պատրաստել ավարտուն փաստաթուղթ ցուցադրության համար,</li> <li>5) ցուցադրում է պատրաստված տեղեկատվական նյութը:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի օգտվելով պատուհանային կառուցվածքից նախապատրաստել ցուցադրական ծրագիրը՝ թվային և տեքստային տվյալներ մուտքագրելու, խմբագրելու, նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ, աղյուսակային և գրաֆիկական տվյալներ ներբեռնելու, ձևավորելու գործողություններ՝ առնվազն 2 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը:</p> <p>Կառաջադրվի ազատ թեմայի ներկայացման համար պատրաստել ցուցադրություն և ներկայացնել՝ պահպանելով թեմայի տրամաբանական կապն ու հաջորդականությունը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 6</b>	Աշխատել համացանցում
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ներկայացնում է «համացանց» հասկացությունը,</li> <li>2) օգտագործում է ինտերնետային հիմնական ծրագրերը,</li> <li>3) ներկայացնում է History, Favorites, Stop, Refresh հրամանների, Back և Forward կոճակների նշանակությունը,</li> <li>4) փնտրում է առաջադրված տվյալները համացանցի տեղեկատվական բազաներում (որոնողական և բաց ցանցերից),</li> <li>5) կարողանում է համացանցից ներբեռնել, պահպանել և օգտագործել տեղեկությունները,</li> <li>6) գրանցվում է էլեկտրոնային փոստում, ինտերնետային ծրագրերում և այլ կայքերում,</li> </ol>

	7) օգտագործում է էլեկտրոնային փոստի հնարավորությունները, ուղարկում և ստանում ինֆորմացիա:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել համացանցի կառուցվածք, օգտագործման նպատակների բազմազանությունը, համացանցի միջոցով կարգավորման ենթա հնարավոր հարցերը: Ուսանողին կհանձնարարվի մուտք գործել ինտերնետային ծրագիր՝ փնտրել առաջադրված տվյալները, ներբեռնել, օգտագործել և պահպանել տվյալներ: Կառաջադրվի որոշակի տեղեկատվություն փոխանցել սոցիալական կայքերի միջոցով կամ բաշխել ըստ հասցեականության: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԱՀ-ԱԳՀ-5-17-001
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլը նպատակաուղղված է աշխատանքային հիմնական իրավահարաբերությունների մասին իրազեկվածության բարձրացմանը, աշխատանք փնտրելու և գտնելու կարողությունների զարգացմանը, աշխատանքային գործունեության ընդհանուր կարողությունների և հմտությունների ձևավորմանը, ընթացիկ հաջողության հասնելու նախապայմանների ստեղծմանը, ինչպես նաև ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա դրսևորելու, ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու կարողությունների, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու կարողությունների ձևավորմանը:
<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 20 ժամ գործնական աշխատանք՝ 34 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

	<ol style="list-style-type: none"> <li>1) փնտրի և գտնի աշխատանք,</li> <li>2) հարմարվի աշխատանքային միջավայրին, ապահովի աշխատանքային դրական մթնոլորտ,</li> <li>3) արդյունավետ աշխատի թիմում՝ պահպանելով էթիկայի նորմերը,</li> <li>4) ներկայացնի աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները:</li> </ol>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Փնտրել և գտնել աշխատանք
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ներկայացնում է աշխատանքային իրավահարաբերությունների ձևավորման նախապայմանները,</li> <li>2) կարողանում է փնտրել առկա աշխատատեղերի բազան, ուսումնասիրել և ընտրել հավանական աշխատատեղ(երը)՝ օգտագործելով աշխատանքի որոնման ժամանակակից միջոցները և տեխնոլոգիաները,</li> <li>3) ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV),</li> <li>4) ներկայացնում է իր մասնագիտական ուժեղ կողմերը և հիմնավորում իր համապատասխանությունը,</li> <li>5) ներկայացնում է աշխատանքի ընդունվելու, աշխատանքի փոփոխության և աշխատանքից ազատվելու հիմնական ընթացակարգերը:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր աշխատանքային իրավահարաբերություններ ծագման հիմքերի, կողմերի իրավունիքների և պարտականությունների, պայմանագրային հարաբերություններ ձևավորելու նախապայմանների, աշխատանքի ընդունվելու, աշխատանքի փոփոխության և աշխատանքից ազատվելու հիմնական ընթացակարգերի վերաբերյալ: Կհանձնարարվի փնտրել ուսանողի ապագա որակավորմանը համապատասխան հավանական աշխատատեղ(եր)՝ օգտվելով տարբեր բազաներից, վերլուծել հավաքագրված տվյալները և պլանավորել աշխատանքի ընդունվելու իր գործողությունները: Կառաջադրվի դերային խաղ, որի ընթացքում ուսանողը կկազմի ինքնակենսագրություն (CV) և կներկայացնի իր մասնագիտական ուժեղ կողմերը, կարող է հիմնավորել և լինել համոզիչ՝ տվյալ աշխատատեղում իր համապատասխանության հարցում:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, կատարում է բոլոր հանձնարարությունները և առաջադրանքները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ

	աշխատանքային իրավահարաբերությունների վերաբերյալ նորմատիվ ակտեր (աշխատանքային օրենսգիրք, պայմանագրեր և այլն), տեղեկատվական բազաներ (համակարգիչ, բուկլետներ և այլն), մասնագիտական գրականություն, նյութեր և իրավիճակային խնդիրներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքնակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Հարմարվել աշխատանքային միջավայրին, ապահովել աշխատանքային դրական մթնոլորտ
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ներկայացնում է մասնագիտական գործունեության ոլորտում արտադրական միջավայրին ներկայացվող հիմնական պահանջները,</li> <li>2) հիմնավորում է տվյալ աշխատանքով զբաղվելու իր պատրաստակամությունը և տրամադրվածությունը,</li> <li>3) ներկայացնում է գործընկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետ հաղորդակցվելու օրինակներ,</li> <li>4) առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատրաստակամություն և պատասխանատվության դրսևորումներ,</li> <li>5) ցուցաբերում է գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու կարողություններ:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր աշխատանքային կարգապահության, աշխատավայրի կառուցվածքի և ստորաբաժանումների, աշխատավայրի տեխնիկական պայմանների և աշխատանքային գործունեության ոլորտում արտադրական միջավայրին ներկայացվող այլ պահանջների վերաբերյալ: Կստեղծվի աշխատանքային պայմանական իրավիճակ, որի ընթացքում «նորանշանակ աշխատողը» պետք է կարողանա ցուցաբերել արդյունավետ հաղորդակցման կարողություն, շփվել գործընկերային միջավայրում, հաղթահարել տարբեր տրամադրվածություններ, որով հնարավոր կլինի գնահատել նոր աշխատակցի պատրաստակամությունը և պատասխանատվության զգացումը: Նշված իրավիճակում դիտարկվում է նաև ուսանողի ուշադիր լսելու և հասկանալու կարողությունները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ աշխատանքային իրավահարաբերությունների և կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր և իրավիճակային խնդիրներ:

<b>Ուսուցման երաշխավորված ժամաքնակը</b>	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Արդյունավետ աշխատել թիմում՝ պահպանելով էթիկայի նորմերը
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ներկայացնում է կազմակերպության նպատակները և դրա իրականացման գործում թիմային աշխատանքի և միջանձնային հարաբերությունների կարևորությունը,</li> <li>2) ներկայացնում է թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները և խնդիրների լուծման մեթոդները,</li> <li>3) դրսևորում է հարգալից և պատշաճ վերաբերմունք գործընկերների նկատմամբ՝ ըստ նրանց վարքագծի դրսևորման,</li> <li>4) առաջադրում է լուծումներ գործընկերների շրջանում առաջացած խնդրահարույց իրավիճակներում,</li> <li>5) կարողանում է առանձին իրավիճակներում գերադասել թիմային շահը անձնական շահից:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր կազմակերպության և թիմային նպատակի սահմանման, թիմային աշխատանքի հիմնական սկզբունքների և խնդիրների լուծման մեթոդների վերաբերյալ: Կստեղծվի աշխատանքային պայմանական իրավիճակ, որի ընթացքում ուսանողը, որպես աշխատակից, պետք է կողմնորոշվի աշխատանքային պարզ հարաբերություններում առաջացած բարեկամական կամ վիճահարույց իրավիճակներում՝ պահպանելով պատշաճությունը և հարգալից տոնը: Կառաջադրվի դերային խաղ, որի ընթացքում գործընկերների վարքագծերի տարբեր դրսևորումների պայմաններում ուսանողը առաջադրում է թիմային շահից ելնող լուծումներ: Վարքագծային դրսևորումների օրինակներ կարող են հանդիսանալ անձնական անհագալից վերաբերմունքը, աշխատանքային պարտականությունների կատարման թերացումները կամ անտարբերությունները, անձնական հատկանիշների գերադրում կամ ստորադասում, թիմային զգացողության բացասական գերակայությունը և այլն:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մշակված նյութեր և իրավիճակային խնդիրներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքնակը</b>	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Ներկայացնել աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները

<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) բացատրում է աշխատանքային կարգապահության և պատասխանատվության կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում,</li> <li>2) բացատրում է մասնագիտական կարողությունների պարբերական կատարելագործման կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում,</li> <li>3) բացատրում է նախաձեռնողականության և նպատակասլացության կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում,</li> <li>4) ներկայացնում է աշխատանքային գործունեության ընթացքում ստորադասության և վերադասության հարաբերությունների պատշաճության կարևորությունը:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր աշխատանքային գործունեության ընթացքում կարգապահության, պատասխանատվության, մասնագիտական կարողությունների պարբերական կատարելագործման, նախաձեռնողականության և նպատակասլացության, ստորադասության և վերադասության հարաբերությունների պատշաճության կարևորության վերաբերյալ: Վարվելակերպի նշված կետերի կարևորության ընկալումը կդիտարկվի ուսանողի մոտ նաև գործնականում՝ ուսուցման գործընթացում:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, կատարում բոլոր հանձնարարությունները և դրսևորում է պատասխանատու վերաբերմունք ուսուցման գործընթացի նկատմամբ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր և իրավիճակային խնդիրներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքնակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>

<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ, ՄԵԼԻՈՐԱՏԻՎ, ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՄԵՔԵՆԱՅԱՑՈՒՄ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՀՂՇ 5 - 17 - 001
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողին անհրաժեշտ գիտելիքներ տալ գյուղատնտեսական, մելիորատիվ և շինարարական մեքենաների, դրանց շահագործողական առանձնահատկությունների, կիրառման յուրահատկությունների մասին:
<b>Մոդուլի տևողությունը</b>	72 ժամ, որից՝



	տեսական ուսուցում՝ 36 ժամ գործնական աշխատանք՝ 36 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) բնութագրի գյուղատնտեսական մեքենաները, 2) բնութագրի մելիորատիվ մեքենաները և սարքավորումները, 3) բնութագրի շինարարական մեքենաները, սարքավորումները և գործիքները:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Բնութագրել գյուղատնտեսական մեքենաները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման խնդիրները և առանձնահատկությունները ճիշտ է մեկնաբանում, 2) ճիշտ է ներկայացնում վար անող և փխրեցնող մեքենաները, 3) ճիշտ է ներկայացնում ցանք կատարող և վնասատուների դեմ պայքարի համար նախատեսված մեքենաները, 4) ճիշտ է ներկայացնում հնձող և կալսող մեքենաները, 5) տարբեր գյուղատնտեսական աշխատանքների համար համապատասխան գյուղատնտեսական մեքենաների ընտրությունը ճիշտ է կատարում:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումը կատարվում է խմբային քննարկումների հիման վրա՝ նախապես մշակված ուսումնառության արդյունքի վերաբերյալ հիմնական հասկացողությունների սահմանումների, բովանդակության վերաբերող պատասխանների ձևակերպմամբ բնութագրելով գյուղատնտեսական մեքենաները, դրանց միջոցով իրականացվող գյուղատնտեսական աշխատանքները, աշխատանքի առանձնահատկությունները: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման խնդիրները և առանձնահատկությունները, վար անող և փխրեցնող մեքենաները, ցանք կատարող և վնասատուների դեմ պայքարի համար նախատեսված մեքենաները, հնձող և կալսող մեքենաները, տարբեր գյուղատնտեսական աշխատանքների համար համապատասխան գյուղատնտեսական մեքենաների ընտրության մոտեցումները: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը քննարկումների ընթացքում ցուցաբերում է արդյունքի

	պահանջներին համապատասխան գիտելիքներ և եզրահանգումները հիմնականում կատարում է ճիշտ: Թույլատրվում է որոշ ոչ էական թերություններ և բացթողումներ:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ գյուղատնտեսական մեքենաների ցուցանմուշներ, տեսանյութեր, մեթոդական ցուցումներ, պլակատներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Բնութագրել մելիորատիվ մեքենաները և սարքավորումները
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում ռոտորային և կոմբինացված խրամուղափորները,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում ջրանցքների հատակը և շեպերը հարթագծող մեքենաները,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում բետոնե և երկաթբետոնե պատյան պատրաստող մեքենաները,</li> <li>4) ճիշտ է ներկայացնում էկրանապատման և սալահատակման մեքենաները,</li> <li>5) ճիշտ է ներկայացնում թփահատ և կոճղահան մեքենաները,</li> <li>6) ճիշտ է ներկայացնում քարհավաք մեքենաները և սարքավորումները,</li> <li>7) ճիշտ է ներկայացնում ջրման նախապատրաստող և արհեստական անձրևացման մեքենաներն ու սարքավորումները,</li> <li>8) տարբեր մելիորատիվ աշխատանքների համար համապատասխան մելիորատիվ մեքենաների և սարքավորումների ընտրությունը ճիշտ է կատարում:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումը կատարվում է խմբային քննարկումների հիման վրա՝ նախապես մշակված ուսումնառության արդյունքի վերաբերյալ հիմնական հասկացողությունների սահմանումների, բովանդակության վերաբերող պատասխանների ձևակերպմամբ բնութագրելով մելիորատիվ մեքենաները և սարքավորումները, դրանց միջոցով իրականացվող մելիորատիվ աշխատանքների առանձնահատկությունները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ ռոտորային և կոմբինացված խրամուղափորները, ջրանցքների հատակը և շեպերը հարթագծող մեքենաները, բետոնե և երկաթբետոնե պատյան պատրաստող մեքենաները, էկրանապատման և սալահատակման մեքենաները, թփահատ և կոճղահան մեքենաները, քարհավաք մեքենաները և սարքավորումները, ջրման նախապատրաստող և արհեստական անձրևացման մեքենաներն ու սարքավորումները, մելիորատիվ աշխատանքների համար մեքենաների և սարքավորումների ընտրության առանձնահատկությունները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը քննարկումների ընթացքում ցուցաբերում է արդյունքի</p>

	պահանջներին համապատասխան գիտելիքներ և եզրահանգումները հիմնականում կատարում է ճիշտ: Թույլատրվում է որոշ ոչ էական թերություններ և բացթողումներ:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մեխորատիվ մեքենաների ցուցանմուշներ, տեսանյութեր, մեթոդական ցուցումներ, պլակատներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Բնութագրել շինարարական մեքենաները, սարքավորումները և գործիքները
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում առանցքակալների, ճոպանների, զսպանակների, վերականգնիչների և ուժային տեղակայանքների աշխատանքների սկզբունքը,</li> <li>2) տրակտորների, ավտոմեքենաների և կարապիկների տարբերակումը ճիշտ է կատարում,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում վերամբարձ կռունկներն ու փոխադրիչները,</li> <li>4) բեռնման և բեռնաթափման մեքենաների տարբերակումը ճիշտ է,</li> <li>5) ճիշտ է ներկայացնում հողափոր մեքենաները՝ միաշերտի և բազմաշերտի էքսկավատորները, բուլդոզերները, սկրեպերներն ու գլխոնները,</li> <li>6) շաղախաբետոնային խառնուրդ պատրաստող, տեղափոխող և տեղադրող մեքենաների տարբերակումը ճիշտ է,</li> <li>7) ճիշտ է ներկայացնում ամրանների պատրաստման մեքենաները,</li> <li>8) փայտամշակման հաստոցների բնութագրումը ճիշտ է,</li> <li>9) ճիշտ է ներկայացնում ցցային աշխատանքների համար նախատեսված սարքավորումները,</li> <li>10) տարբեր շինարարական և մոնտաժային աշխատանքների համար համապատասխան շինարարական մեքենաների, սարքավորումների ու գործիքների ընտրությունը ճիշտ է:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումը կատարվում է խմբային քննարկումների հիման վրա՝ նախապես մշակված ուսումնառության արդյունքի վերաբերյալ հիմնական հասկացողությունների սահմանումների, բովանդակության վերաբերող պատասխանների ձևակերպմամբ բնութագրելով շինարարական մեքենաները, սարքավորումները և գործիքները, դրանց միջոցով իրականացվող շինարարական աշխատանքները, տարբեր աշխատանքների համար նախատեսված սարքավորումների, գործիքների, սարքավորումների կիրառման առանձնահատկությունները:  Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ առանցքակալների, ճոպանների, զսպանակների, վերականգնիչների և ուժային

	<p>տեղակայանքների աշխատանքների սկզբունքը, տրակտորների, ավտոմեքենաների և կարապիկների տարբերակումը ճիշտ է կատարում, վերամբարձ կռունկներն ու փոխադրիչները, բեռնման և բեռնաթափման մեքենաների տարբերակումը, հողափոր մեքենաները՝ միաշերտի և բազմաշերտի էքսկավատորները, բուլդոզերները, սկրեպերներն ու գլդոները, շաղախաբետոնային խառնուրդ պատրաստող, տեղափոխող և տեղադրող մեքենաների տարբերակումը, ամրանների պատրաստման մեքենաները, փայտամշակման հաստոցների բնութագրումը, ցցային աշխատանքների համար նախատեսված սարքավորումները, տարբեր շինարարական և մոնտաժային աշխատանքների համար համապատասխան շինարարական մեքենաների, սարքավորումների ու գործիքների ընտրության մոտեցումները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը քննարկումների ընթացքում ցուցաբերում է արդյունքի պահանջներին համապատասխան գիտելիքներ և եզրահանգումները հիմնականում կատարում է ճիշտ: Թույլատրվում է որոշ ոչ էական թերություններ և բացթողումներ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ շինարարական մեքենաների, սարքավորումների և գործիքների նմուշներ, տեսանյութեր, մեթոդական ցուցումներ, պլակատներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ</p>
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀՈՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	<p>ՀՂԾ 5 -17-002</p>
<b>Մոդուլի նպատակը</b>	<p>Մոդուլի նպատակն է ուսանողին անհրաժեշտ գիտելիքներ տալ հողի, հողառաջացնող գործոնների, հողի կազմի ու կառուցվածքի, հատկանիշների, աշխարհագրական տեղաբաշխման առանձնահատկությունների, ՀՀ հիմնական հողատեսակների և դրանց տնտեսական նպատակներով յուրացվածության մակարդակի ու օգտագործման ներկա վիճակի մասին:</p>
<b>Մոդուլի տևողությունը</b>	<p>36 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 20 ժամ, գործնական աշխատանք՝ 16 ժամ</p>
<b>Մուտքային պահանջները</b>	<p>Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:</p>
<b>Ուսումնառության արդյունքները</b>	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <p>1) ներկայացնի «հող» և «հողմահարում» հասկացությունները, հողառաջացնող հիմնական մայրապարները և դրանց հողմահարման առանձնահատկությունները,</p>

	<p>2) ներկայացնի հողառաջացնող հիմնական գործոնները,</p> <p>3) ներկայացնի հողի կազմը և կառուցվածքը,</p> <p>4) ներկայացնի հողի հատկանիշները,</p> <p>5) ներկայացնի հողերի աշխարհագրական տեղաբաշխման առանձնահատկությունները և «Հ հիմնական հողատեսակների յուրացվածության ժամանակակից պատկերը:</p>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	<p>Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարարման կարգի ապահովումն է:</p>
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	<p>Ներկայացնել «հող» և «հողմահարում» հասկացությունները, հողառաջացնող հիմնական մայրապարները և դրանց հողմահարման առանձնահատկությունները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է սահմանում հող հասկացությունը,</p> <p>2) ճիշտ է սահմանում հողմահարում հասկացությունը,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում հողը, որպես բնական մարմին,</p> <p>4) ճիշտ է բացատրում մայրապար հասկացությունը և ներկայացնում է հողառաջացնող հիմնական մայրապարները,</p> <p>5) ճիշտ է մեկնաբանում հողմահարման երևույթը և հողմահարման տեսակները (ֆիզիկական, քիմիական, կենսաբանական կամ օրգանական),</p> <p>6) ճիշտ է ներկայացնում հողառաջացնող տարբեր մայրապարների քիմիական, մեխանիկական և հանքաբանական կազմը,</p> <p>7) ճիշտ է ներկայացնում հողառաջացնող տարբեր մայրապարների հողմահարման առանձնահատկությունները:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է տեսական և գործնական նյութի խմբակային քննարկումների, հարցերի և պատասխանների ձևակերպմամբ: Ուսանողներին հանձնարարվելու է ըստ հիմնական մայրատեսակների մեկնաբանել հողմահարման գործընթացի հետևանքները և առանձնահատկությունները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ հող հասկացությունը, հողմահարում հասկացությունը, հողը, որպես բնական մարմին, մայրապար հասկացությունը, հողառաջացնող հիմնական մայրապարները, հողմահարման երևույթը և հողմահարման տեսակները (ֆիզիկական, քիմիական, կենսաբանական կամ օրգանական), հողառաջացնող տարբեր մայրապարների քիմիական, մեխանիկական և հանքաբանական կազմը, հողառաջացնող տարբեր մայրապարների հողմահարման առանձնահատկությունները::</p>

	Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե քննարկումների ընթացքում համապատասխան հասկացությունների մեկնաբանությունները կատարվում է ճիշտ: Թույլատրվում է որոշ ոչ էական թերություններ և բացթողումներ:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, մեթոդական ցուցումներ, հիմնական մայրապարների նմուշները, դրանց քիմիական, մեխանիկական, և հանքաբանական կազմի մասին տվյալներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Ներկայացնել հողառաջացնող հիմնական գործոնները
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում հողառաջացնող գործոնների ընդհանուր սխեման,</li> <li>2) ճիշտ է բացատրում մակերևույթի անհարթությունների (ռելիեֆի) ձևակազմական տարրերի հողառաջացնող դերը,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում տարածքի երկրաբանական հիմքի առանձնահատկությունների հողառաջացնող դերը,</li> <li>4) ճիշտ է ներկայացնում տարածքի ջրաբանաերկրաբանական առանձնահատկությունների հողառաջացնող դերը,</li> <li>5) ճիշտ է ներկայացնում բուսածածկույթի հողառաջացնող դերը,</li> <li>6) ճիշտ է ներկայացնում կենդանի օրգանիզմների հողառաջացնող դերը,</li> <li>7) ճիշտ է ներկայացնում մարդու տնտեսական գործունեության հետևանքների հողառաջացնող դերը,</li> <li>8) ճիշտ է մեկնաբանում ժամանակի դերակատարությունը հողառաջացման ընդհանուր գործընթացում:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է թեստային առաջադրանքի միջոցով: Ուսանողներին հանձնարարվելու է ներկայացնել հողառաջացնող տարբեր գործոնների գործողության մեխանիզմը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ հողառաջացնող գործոնների ընդհանուր սխեման, մակերևույթի անհարթությունների (ռելիեֆի) ձևակազմական տարրերի հողառաջացնող դերը, տարածքի երկրաբանական հիմքի առանձնահատկությունները, տարածքի ջրաբանաերկրաբանական առանձնահատկությունները, բուսածածկույթի հողառաջացնող դերը, կենդանի օրգանիզմների հողառաջացնող դերը, մարդու տնտեսական գործունեության հետևանքների հողառաջացնող դերը, ժամանակի դերակատարությունը հողառաջացման ընդհանուր գործընթացում:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե առաջադրանքը հիմնականում կատարվում է ճիշտ: Թույլատրվում է որոշ ոչ էական թերություններ և բացթողումներ:</p>

<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, մեթոդական ցուցումներ, հիմնական գործոնների քանակական և որակական բնութագրերը, հողագիտական քարտեզներ, հողագիտական նյութեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Ներկայացնել հողի կազմը և կառուցվածքը
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է կազմում հողի մորֆոլոգիական (ձևակազմական) պրոֆիլը (ուղղաձիգ կտրվածքը),</li> <li>2) ճիշտ է պարզաբանում հողի ծագումնաբանորեն փոխկապակցված հորիզոնների հաջորդական դասավորությունը,</li> <li>3) ճիշտ է չափագրում հողի հզորությունը,</li> <li>4) ճիշտ է ներկայացնում հողի երանգավորման կախվածությունը հումուսի քիմիական կազմից,</li> <li>5) ճիշտ է ներկայացնում հողի կառուցվածքը և կառուցվածքային (ագրեգատային) բաղադրիչները,</li> <li>6) ճիշտ է դասակարգում հողերը՝ ըստ մեխանիկական կազմի և ագրեգատային կառուցվածքի,</li> <li>7) կարող է գնահատել հողերն՝ ըստ մեխանիկական կազմի,</li> <li>8) կարող է տարանջատել հողերի ագրոնոմիական գնահատման սկզբունքներն՝ ըստ ագրեգատային կառուցվածքի:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական առաջադրանքի և ստացված արդյունքների մեկնաբանման միջոցով: շարունակական տեսական հիմնական հասկացողությունների մեկնաբանման և գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողներին հանձնարարվելու է կատարել հողի կազմի և կառուցվածքի հետ կապված հաշվարկներ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ հողի մորֆոլոգիական (ձևակազմական) պրոֆիլը (ուղղաձիգ կտրվածքը), հողի ծագումնաբանորեն փոխկապակցված հորիզոնների հաջորդական դասավորությունը, հողի հզորության չափագրում, հողի երանգավորման կախվածությունը հումուսի քիմիական կազմից, հողի կառուցվածքը և կառուցվածքային (ագրեգատային) բաղադրիչները, հողերի դասակարգումը ըստ մեխանիկական կազմի և ագրեգատային կառուցվածքի, հողերի գնահատումը ըստ մեխանիկական կազմի, հողերի ագրոնոմիական գնահատման սկզբունքներն՝ ըստ ագրեգատային կառուցվածքի:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե հաշվարկները կատարվում է ճիշտ, արդյունքները հիմնավոր մեկնաբանվում է: Թույլատրվում է որոշ ոչ էական թերություններ և բացթողումներ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական

	նյութեր, մեթոդական ցուցումներ, հողատիպերի նմուշներ, նրանց կազմի և կառուցվածքի վերաբերյալ տվյալներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Ներկայացնել հողի հատկանիշները
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում հողի օրգանական նյութերը,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում հողի ֆիզիկական հատկությունները,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում հողի ֆիզիկամեխանիկական հատկությունները,</li> <li>4) կարող է մեկնաբանել հողի ջրային հատկությունները և ջրային վարքը (ռեժիմը),</li> <li>5) ճիշտ է բացատրում հողի օդային հատկությունները և օդային վարքը,</li> <li>6) ճիշտ է պարզաբանում հողի ջերմային հատկությունները և ջերմային վարքը,</li> <li>7) ճիշտ է ներկայացնում հողի սննդային վարքը,</li> <li>8) ճիշտ է սահմանում հողի բերրիությունը,</li> <li>9) ճիշտ է առանձնացնում հողի բերրության բարձրացման միջոցառումները:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է գրավոր առաջադրանքի հիման վրա, որի ընթացքում ուսանողը համառոտ ներկայացնելու է հողի հիմնական հատկանիշների պարզաբանումները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ հողի օրգանական նյութերը, հողի ֆիզիկական հատկությունները, հողի ֆիզիկամեխանիկական հատկությունները, հողի ջրային հատկությունները և ջրային վարքը (ռեժիմը), հողի օդային հատկությունները և օդային վարքը, հողի ջերմային հատկությունները և ջերմային վարքը, հողի սննդային վարքը, հողի բերրիությունը, հողի բերրության բարձրացման միջոցառումները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե առաջադրանքը հիմնականում կատարվում է ճիշտ: Թույլատրվում է որոշ ոչ էական թերություններ և բացթողումներ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, մեթոդական ցուցումներ, ներհամայնքային հողաշինարարական հատակագծեր և նախագծեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ



<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Ներկայացնել հողերի աշխարհագրական տեղաբաշխման առանձնահատկությունները և ՀՀ հիմնական հողատեսակների յուրացվածության ժամանակակից պատկերը
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում հողերի լայնակի-հորիզոնական տեղաբաշխման առանձնահատկություններն՝ ըստ բնական գոտիների,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում հողերի ուղղաձիգ-վերընթաց տեղաբաշխման առանձնահատկություններն՝ ըստ լանդշաֆտային գոտիների,</li> <li>3) ճիշտ է պարզաբանում տարբեր հողատեսակների յուրացման հնարավորությունները,</li> <li>4) հստակ ներկայացնում և համեմատում է ՀՀ հիմնական հողատեսակների տնտեսական յուրացվածությունը:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է խմբային քննարկման միջոցով, որի ընթացքում պարզաբանվում են արդյունքի առանցքային հարցերը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ հողերի լայնակի-հորիզոնական տեղաբաշխման առանձնահատկությունները ըստ բնական գոտիների, հողերի ուղղաձիգ-վերընթաց տեղաբաշխման առանձնահատկությունները ըստ լանդշաֆտային գոտիների, տարբեր հողատեսակների յուրացման հնարավորությունները, ՀՀ հիմնական հողատեսակների տնտեսական յուրացվածությունը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե քննարկման ընթացքում ուսանողը հարցադրումների պատասխաններում ցուցաբերում է հիմնավորված մոտեցումներ: Թույլատրվում է որոշ ոչ էական թերություններ և բացթողումներ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, մեթոդական ցուցումներ, ներհամայնքային հողաշինարարական հատակագծեր և նախագծեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՀՂՇ 5 -17- 003
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլը մշակվել է երկրագնդի ներքին կառուցվածքն ու կազմությունը, զարգացման երկրաբանական պատմությունը, մակերեսային և խորքային երևույթները, երկրակեղևի, հատկապես դրա արտաքին թաղանթում պարունակվող ստորերկրյա ջրերի ծագումն ու պաշարները, ինչպես նաև ինժեներաերկրաբանական երևույթներն ուսումնասիրելու և հողաշինարարական աշխատանքներում այն կիրառելու նպատակով:

<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 30 ժամ, գործնական աշխատանք՝ 24 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի երկրաբանության հիմնական բաժինները, 2) ներկայացնի երկրագնդի ֆիզիկական հատկությունները, 3) ներկայացնի աշխարհագրական թաղանթի ոլորտային կառուցվածքը, 4) ներկայացնի երկրագնդի ջրաերկրաբանական պայմանները, 5) մեկնաբանի երկրագնդի ինժեներաերկրաբանական պայմանները և երևույթները:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել երկրաբանության հիմնական բաժինները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում երկրաբանության ուսումնասիրման առարկան, 2) ճիշտ է ներկայացնում երկրաբանության հիմնական խնդիրները, 3) ճիշտ է ներկայացնում երկրաբանության հիմնական բաժինները. 4) ճիշտ է ներկայացնում ջրաերկրաբանության հիմնական տարրերը, 5) ճիշտ է մեկնաբանում ինժեներաերկրաբանության հիմնական տարրերը:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը գնահատվում է խմբային քննարկումների հիման վրա՝ նախապես մշակված ուսումնառության արդյունքի վերաբերյալ հիմնական հասկացողությունների սահմանումների, բովանդակության վերաբերող պատասխանների ձևակերպմամբ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները: Երկրաբանության ուսումնասիրման առարկան, երկրաբանության հիմնական խնդիրները, երկրաբանության հիմնական բաժինները. ջրաերկրաբանության հիմնական տարրերը, ինժեներաերկրաբանության հիմնական տարրերը: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը քննարկումների ընթացքում ցուցաբերում է երկրաբանության առարկայի և հիմնական բաժինների վերաբերյալ հիմնավոր գիտելիքներ:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական տեսանյութեր, պլակատներ, երկրաբանական սխեմաներ, մակետներ:

<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Ներկայացնել երկրագնդի ֆիզիկական հատկությունները
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում երկրագնդի ձևի մասին ժամանակակից պատկերացումները,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում երկրագնդի չափերը,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում երկրագնդի խտությունը,</li> <li>4) ճիշտ է մեկնաբանում երկրագնդի ջերմային վիճակը:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը գնահատվում է խմբային քննարկումների հիման վրա՝ նախապես մշակված ուսումնառության արդյունքի վերաբերյալ հիմնական հասկացողությունների սահմանումների, բովանդակության վերաբերող պատասխանների ձևակերպմամբ: Միաժամանակ տրվելու են ելակետային տվյալներ հաշվարկներ կատարելու համար: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները: Երկրագնդի ձևի մասին ժամանակակից պատկերացումները, երկրագնդի չափերը, երկրագնդի խտությունը, երկրագնդի ջերմային վիճակը: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը քննարկումների ընթացքում ակտիվություն է ցուցաբերում, իսկ հաշվարկները կատարում է ճիշտ:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական տեսանյութեր, պլակատներ, տեղեկատվություն երկրագնդի ֆիզիկական հատկությունների վերաբերյալ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Ներկայացնել աշխարհագրական թաղանթի ոլորտային կառուցվածքը
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում մթնոլորտն (աթմոսֆերան)՝ ընդհանուր կողմերով,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում ջրոլորտն (հիդրոսֆերան)՝ ընդհանուր կողմերով,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում քարոլորտն (լիթոսֆերան)՝ ընդհանուր կողմերով,</li> <li>4) ճիշտ է ներկայացնում կենսոլորտն (բիոսֆերան)՝ ընդհանուր կողմերով:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը գնահատվում է խմբային քննարկումների հիման վրա նախապես մշակված ուսումնառության արդյունքի վերաբերյալ հիմնական հասկացողությունների սահմանումների, բովանդակության վերաբերող պատասխանների ձևակերպմամբ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները: Մթնոլորտն (աթմոսֆերան)՝ ընդհանուր կողմերով, ջրոլորտն (հիդրոսֆերան)՝ ընդհանուր կողմերով, քարոլորտն (լիթոսֆերան)՝ ընդհանուր կողմերով, կենսոլորտն (բիոսֆերան)՝ ընդհանուր կողմերով: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը քննարկումների ընթացքում ցուցաբերում է հասկացողությունների բովանդակությունը ճիշտ մեկնաբանելու կարողություն:
<b>Մեթոդաբանությունը և</b>	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ

<b>ռեսուրսները</b>	ցուցադրական տեսանյութեր, պլակատներ, հատակագծաքարտեզագրական նյութեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Ներկայացնել երկրագնդի ջրաերկրաբանական պայմանները
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է բացատրում ջրի մեծ և փոքր շրջապտույտները,</li> <li>2) ճիշտ է բացատրում երկրակեղևում ջրի բաշխման առանձնահատկությունները,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում ստորերկրյա ջրերի ձևավորման եղանակները,</li> <li>4) ճիշտ է դասակարգում ստորերկրյա ջրեր և կարողանում է տարանջատել դրանց տեսակները,</li> <li>5) ճիշտ է ներկայացնում ստորերկրյա ջրերի ֆիզիկաքիմիական հատկությունները:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը գնահատվում է խմբային քննարկումների հիման վրա՝ նախապես մշակված ուսումնառության արդյունքի վերաբերյալ հիմնական հասկացողությունների սահմանումների, բովանդակության վերաբերող պատասխանների ձևակերպմամբ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները: Ջրի մեծ և փոքր շրջապտույտները, երկրակեղևում ջրի բաշխման առանձնահատկությունները, ստորերկրյա ջրերի ձևավորման եղանակները, ստորերկրյա ջրեր, դրանց տեսակները, ստորերկրյա ջրերի ֆիզիկաքիմիական հատկությունները: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը քննարկումների ընթացքում ցուցաբերում է հասկացությունների բովանդակությունը ճիշտ մեկնաբանելու կարողություն:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական տեսանյութեր, պլակատներ, հիդրոերկրաբանակն, հատակագծաքարտեզագրական նյութեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Մեկնաբանել երկրագնդի ինժեներաերկրաբանական պայմանները և երևույթները
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում մայրապարների դասակարգումն՝ ըստ ֆիզիկամեխանիկական հատկությունների,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում մայրապարների դասակարգումն՝ ըստ առաջացման պայմանների,</li> <li>3) ճիշտ է բացատրում փլուզման և ապարաթափվածքի երևույթները,</li> <li>4) ճիշտ է բացատրում սողանքային և սելավային երևույթները,</li> <li>5) քաղաքացիական և արդյունաբերական կառույցների ու շենքերի համար բավարար նյութերի ապահովումը հիմնավորում է:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը գնահատվում է խմբային քննարկումների հիման վրա՝ նախապես մշակված ուսումնառության արդյունքի վերաբերյալ հիմնական հասկացողությունների սահմանումների, բովանդակության վերաբերող պատասխանների ձևակերպմամբ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները: Մայրապարների դասակարգումն ըստ ֆիզիկամեխանիկական

	<p>հատկությունների, մայրապարների դասակարգումն ըստ առաջացման պայմանների, փլուզման և ապարաթափվածքի երևույթները, սողանքային և սելավային երևույթները, քաղաքացիական և արդյունաբերական կառույցների ու շենքերի համար բավարար նյութերի ապահովումը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը քննարկումների ընթացքում ցուցաբերում է հասկացությունների բովանդակությունը ճիշտ մեկնաբանելու կարողություն:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական տեսանյութեր, պլակատներ, ինժեներաերկրաբանական կտրվածքներ, պրոֆիլներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՀՂՇ 5 - 17 - 004
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլը մշակվել է գյուղատնտեսությունը որպես նյութական արտադրության առանձին ոլորտ ուսումնասիրելու նպատակով: Այն կօգնի ուսանողներին տիրապետել գյուղատնտեսության (երկրագործության և անասնապահության) առանձնահատկություններին, զարգացման հիմնախնդիրներին և ժամանակակից առաջընթացի միտումներին, ինչպես նաև ազգաբնակչությանը գյուղատնտեսական մթերքով ու արդյունաբերական հումքով ապահովելու շարունակաբար աճող պահանջների բավարարման միջոցառումներին:
<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 30 ժամ, գործնական աշխատանք՝ 24 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1) բացատրի գյուղատնտեսության նշանակությունը և գյուղատնտեսական հողահանդակների մշակման խնդիրներն ու ձևերը,</li> <li>2) մեկնաբանի ցանքաշրջանառությունների սխեմաները,</li> <li>3) բացատրի հողերի բերրիության բարձրացման հիմնական գործոնները:</li> </ol>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Բացատրել գյուղատնտեսության նշանակությունը և գյուղատնտեսական հողահանդակների մշակման խնդիրներն ու ձևերը

<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է պարզաբանում գյուղատնտեսության տեղն ու դերը ՀՀ ազգային տնտեսության ներկայիս կառուցվածքում,</li> <li>2) ճիշտ է մեկնաբանում ագրոարդյունաբերական համալիրի նշանակությունը ՀՀ տնտեսության զարգացման գերակա ուղղությունների շարքում,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում գյուղատնտեսական հողահանդակների մշակման գործիքները,</li> <li>4) ճիշտ է գնահատում գյուղատնտեսական հողահանդակների մշակման արդիական գործիքների ու սարքավորումների առավելությունները,</li> <li>5) ճիշտ է բացատրում լեռնալանջերի յուրացման առանձնահատկությունները,</li> <li>6) ճիշտ է մեկնաբանում հողահանդակների մշակման գործում մակերևույթի հորիզոնական և խորքային մասնատվածության հարուցած դժվարությունները:</li> </ol>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարություններ կատարելու հիման վրա: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվելու է ուսանողի ընդհանուր գիտելիքները գյուղատնտեսության նշանակությունը և գյուղատնտեսական հողահանդակների մշակման խնդիրների ու ձևերի վերաբերյալ: Գործնական հանձնարարությունների ընթացքում ուսանողին հանձնարարվելու է կոնկրետ ընտրել գյուղատնտեսական հողահանդակների մշակման գործիքները գյուղատնտեսական հողահանդակների մշակման արդիական գործիքներ ու սարքավորումներ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ գյուղատնտեսության տեղն ու դերը ՀՀ ազգային տնտեսության ներկայիս կառուցվածքում, ագրոարդյունաբերական համալիրի նշանակությունը ՀՀ տնտեսության զարգացման գերակա ուղղությունների շարքում, գյուղատնտեսական հողահանդակների մշակման գործիքները, գյուղատնտեսական հողահանդակների մշակման արդիական գործիքներ ու սարքավորումներ, լեռնալանջերի յուրացման առանձնահատկությունները, հողահանդակների մշակման գործում մակերևույթի հորիզոնական և խորքային մասնատվածության հարուցած դժվարությունները: Գյուղատնտեսության զարգացման բնապահպանական հիմնախնդիրները և դրանց լուծման մոտեցումները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե ուսանողն ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում առաջադրված հարցերին, գործնական հանձնարարությունները կատարում է մեթոդապես ճիշտ: Թույլատրելի են որոշ ոչ էական թերություններ:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և մեթոդական նյութեր:</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 10 ժամ</p>

	գործնական աշխատանք՝ 8 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Մեկնաբանել ցանքաշրջանառությունների սխեմաները
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է բացատրում ՀՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքի կառուցվածքում երկրագործության և անասնապահության հարաբերակցության փոփոխությունները,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում ՀՀ գյուղատնտեսության մասնագիտացման հիմնական ուղղությունները,</li> <li>3) հիմնավորում է ՀՀ ցանքատարածքների կառուցվածքային փոփոխությունները հետխորհրդային ժամանակաշրջանում,</li> <li>4) ճիշտ է ներկայացնում ՀՀ-ում կիրառվող ցանքաշրջանառությունների սխեմաները,</li> <li>5) ճիշտ է բացատրում ՀՀ-ում կիրառվող ցանքաշրջանառությունների շրջապտույտի (ռոտացիայի) ավանդական և ոչ ավանդական եղանակները:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարություններ կատարելու հիման վրա: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվելու է ուսանողի ընդհանուր գիտելիքները ցանքաշրջանառությունների սխեմաների վերաբերյալ: Գործնական հանձնարարությունների ընթացքում ուսանողին հանձնարարվելու է մշակել կոնկրետ ցանքաշրջանառության սխեմաներ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ ՀՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքի կառուցվածքում երկրագործության և անասնապահության հարաբերակցության փոփոխությունները, ՀՀ գյուղատնտեսության մասնագիտացման հիմնական ուղղությունները, ՀՀ ցանքատարածքների կառուցվածքային փոփոխությունները հետխորհրդային ժամանակաշրջանում, ՀՀ-ում կիրառվող ցանքաշրջանառությունների սխեմաները, ՀՀ-ում կիրառվող ցանքաշրջանառությունների շրջապտույտի (ռոտացիայի) ավանդական և ոչ ավանդական եղանակները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե ուսանողն ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում առաջադրված հարցերին, գործնական հանձնարարությունները կատարում է մեթոդապես ճիշտ: Թույլատրելի են որոշ ոչ էական թերություններ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և մեթոդական նյութեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Բացատրել հողերի բերրիության բարձրացման հիմնական գործոնները

<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է մեկնաբանում հողերի բերրիության բարձրացման կենսաբանական գործոնները,</p> <p>2) ճիշտ է մեկնաբանում հողերի բերրիության բարձրացման ագրոքիմիական գործոնները,</p> <p>3) ճիշտ է մեկնաբանում հողերի բերրիության բարձրացման ագրոֆիզիկական գործոնները:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարություններ կատարելու հիման վրա: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվելու է ուսանողի ընդհանուր գիտելիքները հողերի բերրիության բարձրացման հիմնական գործոնների վերաբերյալ: Գործնական հանձնարարությունների ընթացքում ուսանողին հանձնարարվելու է թվարկել, մեկնաբանել ընտրել հողերի բերրիության բարձրացման հիմնական գործոնները կոնկրետ պայմանների համար:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ հողերի բերրիության բարձրացման կենսաբանական գործոնները, հողերի բերրիության բարձրացման ագրոքիմիական գործոնները, հողերի բերրիության բարձրացման ագրոֆիզիկական գործոնները: Հողերի բերրիության բարձրացման միջոցառումների բնապահպանական խնդիրները և դրանց լուծման կարևորությունը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե ուսանողն ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում առաջադրված հարցերին, գործնական հանձնարարությունները կատարում է մեթոդապես ճիշտ: Թույլատրելի են որոշ ոչ էական թերություններ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և մեթոդական նյութեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>
<b>Մ Ո Ղ Ո Ւ Լ Ի Ա Ն Վ Ա Ն Ո Ւ Մ Ը « Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր Ե Ր Կ Ր Ա Գ Ո Ր Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն »</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	<p>ՀՂՇ 5 -17- 005</p>
<b>Մոդուլի նպատակը</b>	<p>Այս մոդուլը մշակվել է երկրագործության (բուսաբուծության) կառուցվածքային առանձնահատկությունները և դրա առանձին ենթաճյուղերի յուրահատկությունները, գործնական աշխատանքների առանցքային տարրերը ուսումնասիրելու նպատակով:</p>
<b>Մոդուլի տևողությունը</b>	<p>54 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 32 ժամ, գործնական աշխատանք՝ 22 ժամ</p>
<b>Մուտքային պահանջները</b>	<p>Այս մոդուլը յուրացնելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՀՂՇ 5-17-004 «Գյուղատնտեսագիտության հիմունքներ» մոդուլը:</p>



<b>Ուսումնառության արդյունքները</b>	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1) մեկնաբանի դաշտավարության հիմնական գործընթացները,</li> <li>2) բացատրի բանջարաբուծության հիմնական առանձնահատկությունները և գործընթացները,</li> <li>3) բացատրի պտղաբուծության հիմնական գործընթացները,</li> <li>4) բացատրի խաղողագործության հիմնական գործընթացները:</li> </ol>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	<p>Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարարման կարգի ապահովումն է:</p>
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	<p>Մեկնաբանել դաշտավարության հիմնական գործընթացները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) հիմնավորում է սերմերի պահեստավորման միջոցառումները,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում սերմերի տեսակավորման միջոցառումները,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում սերմերի որակավորման միջոցառումները,</li> <li>4) ճիշտ է ներկայացնում սերմերի նախապատրաստումը ցանքին,</li> <li>5) ճիշտ է մեկնաբանում դաշտային մշակաբույսերի խմբավորման սկզբունքները,</li> <li>6) ճիշտ է առանձնացնում դաշտային մշակաբույսերի խմբերը,</li> <li>7) ճիշտ է պարզաբանում դաշտային մշակաբույսերի աճեցման ագրոտեխնիկական առանձնահատկությունները և ընտրում համապատասխան տեխնիկական միջոցներ:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է խմբային քննարկումների և գործնական հանձնարարությունների հիման վրա: Քննարկումների ընթացքում ստուգվելու է դաշտավարության հիմնական գործընթացների հիմնական հասկացությունների ճիշտ ընկալման ուսանողի կարողությունը, իսկ գործնական առաջադրանքների միջոցով նա կատարելու է իրավիճակին համապատասխան դաշտավարության խնդիրների ձևակերպում: Արդյունքները անհրաժեշտ է քննարկել խմբում: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ սերմերի պահեստավորման միջոցառումները, սերմերի տեսակավորման միջոցառումները, սերմերի որակավորման միջոցառումները, սերմերի նախապատրաստումը ցանքին, դաշտային մշակաբույսերի խմբավորման սկզբունքները, դաշտային մշակաբույսերի խմբերը, դաշտային մշակաբույսերի աճեցման ագրոտեխնիկական առանձնահատկությունները և համապատասխան տեխնիկական միջոցներ: Դաշտավարական աշխատանքներում բնապահպանական միջոցառումների իրականացման կարևորությունը:</p>

	Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե ուսանողը գործնական առաջադրանքները ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում, իսկ խմբային քննարկումների ընթացքում ցուցաբերում է իրավիճակին հիմնավորված արձագանքելու ունակություններ:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ամբողջ ուսուցման ընթացքում ըստ իրավիճակների անհրաժեշտ է կիրառել մտագրոհի տեխնիկան: Անհրաժեշտ է դաշտավարության հիմնական մակետներ, պլակատներ, մեթոդական ցուցումներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Բացատրել բանջարաբուծության հիմնական առանձնահատկությունները և գործընթացները
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է մեկնաբանում բանջրոստանային մշակաբույսերի ընդհանուր բնութագիրը,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում բանջրոստանային մշակաբույսերի կենսաբանական հատկությունները,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում բաց գրունտի բանջարաբուծության առանձնահատկությունները,</li> <li>4) ճիշտ է ներկայացնում բաց գրունտի բանջարաբուծության բնագավառում կիրառվող ագրոտեխնիկական միջոցառումները,</li> <li>5) ճիշտ է ներկայացնում ծածկված գրունտի բանջարաբուծության առանձնահատկությունները,</li> <li>6) ճիշտ է ներկայացնում ծածկված գրունտի բանջարաբուծության բնագավառում կիրառվող ագրոտեխնիկական միջոցառումները,</li> <li>7) ճիշտ է ներկայացնում բանջարաբուծության ոլորտում կիրառվող քիմիական նյութերն ու պարարտանյութերի տեսակները, մեքենաները:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է խմբային քննարկումների և գործնական հանձնարարությունների հիման վրա: Քննարկումների ընթացքում ստուգվելու է բանջարաբուծության հիմնական առանձնահատկությունների և գործընթացների հիմնական հասկացությունների ճիշտ ընկալման ուսանողի կարողությունը, իսկ գործնական առաջադրանքների միջոցով նա կատարելու է իրավիճակին համապատասխան բանջարաբուծության խնդիրների ձևակերպում: Արդյունքները անհրաժեշտ է քննարկել խմբում:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ բանջարաբուստանային մշակաբույսերի ընդհանուր բնութագիրը, բանջարաբուստանային մշակաբույսերի կենսաբանական հատկությունները, բաց գրունտի բանջարաբուծության առանձնահատկությունները, բաց գրունտի բանջարաբուծության բնագավառում կիրառվող ագրոտեխնիկական միջոցառումները,</p>

	<p>ծածկված գրունտի բանջարաբուծության առանձնահատկությունները, ծածկված գրունտի բանջարաբուծության բնագավառում կիրառվող ագրոտեխնիկական միջոցառումները, բանջարաբուծության ոլորտում կիրառվող քիմիական նյութերն ու պարարտանյութերի տեսակները, մեքենաները: Բանջարաբուծության արդի մոտեցումների բնապահպանական խնդիրները և դրանց լուծման կարևորությունը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե ուսանողը գործնական առաջադրանքները ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում, իսկ խմբային քննարկումների ընթացքում ցուցաբերում է իրավիճակին հիմնավորված արձագանքելու ունակություններ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ամբողջ ուսուցման ընթացքում ըստ իրավիճակների անհրաժեշտ է կիրառել մտազրոհի տեխնիկան: Անհրաժեշտ է դաշտավարության հիմնական մակետներ, պլակատներ, մեթոդական ցուցումներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	<p>Բացատրել պտղաբուծության հիմնական գործընթացները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է մեկնաբանում պտղահատապտղային բույսերի բուսաբանական նկարագիրը,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում պտղահատապտղային բույսերի խմբավորման սկզբունքները և խմբերը,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում պտղահատապտղային բույսերի բազմացման եղանակները,</li> <li>4) ճիշտ է ներկայացնում երիտասարդ ծառերի ձևավորման ընթացքը, հասակային շրջանները և էտը,</li> <li>5) ճիշտ է ընտրում պտղաբերող ծառերի խնամքի և էտման գործիքները,</li> <li>6) հիմնավորում է պտուղների և հատապտուղների բերքահավաքի ու պահպանման միջոցառումները:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է խմբային քննարկումների և գործնական հանձնարարությունների հիման վրա: Քննարկումների ընթացքում ստուգվելու է պտղաբուծության հիմնական գործընթացների հիմնական հասկացությունների ճիշտ ընկալման ուսանողի կարողությունը, իսկ գործնական առաջադրանքների միջոցով նա կատարելու է իրավիճակին համապատասխան պտղաբուծության խնդիրների ձևակերպում: Արդյունքները անհրաժեշտ է քննարկել խմբում:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ պտղահատապտղային բույսերի բուսաբանական նկարագիրը, պտղահատապտղային բույսերի խմբավորման սկզբունքները և խմբերը, պտղահատապտղային բույսերի բազմացման եղանակները, երիտասարդ ծառերի ձևավորման ընթացքը, հասակային շրջանները և էտը, պտղաբերող ծառերի խնամքի և էտման</p>

	<p>գործիքները, պտուղների և հատապտուղների բերքահավաքի ու պահպանման միջոցառումները:</p> <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը գործնական առաջադրանքները ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում, իսկ խմբային քննարկումների ընթացքում ցուցաբերում է իրավիճակին հիմնավորված արձագանքելու ունակություններ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ամբողջ ուսուցման ընթացքում ըստ իրավիճակների անհրաժեշտ է կիրառել մտազրոհի տեխնիկան: Անհրաժեշտ է դաշտավարության հիմնական մակետներ, պլակատներ, մեթոդական ցուցումներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 8 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	<p>Բացատրել խաղողագործության հիմնական գործընթացները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է բացատրում խաղողագործության հիմնական առանձնահատկությունները,</li> <li>2) հիմնավորում է խաղողի այգիների համար հողհատկացումների պահանջները,</li> <li>3) ճիշտ է մեկնաբանում խաղողի բուսաբանական և կենսաբանական հատկությունները,</li> <li>4) ճիշտ է տարբերակում խաղողի արդյունագործական և սեղանի սորտերը,</li> <li>5) ճիշտ է նկարագրում խաղողի մշակության ագրոտեխնիկան,</li> <li>6) ճիշտ է նկարագրում խաղողի բերքահավաքի կազմակերպման և իրականացման միջոցառումները:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է խմբային քննարկումների և գործնական հանձնարարությունների հիման վրա: Քննարկումների ընթացքում ստուգվելու է խաղողագործության հիմնական գործընթացների հիմնական հասկացությունների ճիշտ ընկալման ուսանողի կարողությունը, իսկ գործնական առաջադրանքների միջոցով նա կատարելու է իրավիճակին համապատասխան խաղողագործության խնդիրների ձևակերպում: Արդյունքները անհրաժեշտ է քննարկել խմբում:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ խաղողագործության հիմնական առանձնահատկությունները, խաղողի այգիների համար հողհատկացումների պահանջները, խաղողի բուսաբանական և կենսաբանական հատկությունները, խաղողի արդյունագործական և սեղանի սորտերը, խաղողի մշակության ագրոտեխնիկան, խաղողի բերքահավաքի կազմակերպման և իրականացման միջոցառումները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե ուսանողը գործնական առաջադրանքները ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում, իսկ խմբային քննարկումների ընթացքում ցուցաբերում է իրավիճակին հիմնավորված արձագանքելու ունակություններ:</p>

<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ամբողջ ուսուցման ընթացքում ըստ իրավիճակների անհրաժեշտ է կիրառել մտազրոհի տեխնիկան: Անհրաժեշտ է դաշտավարության հիմնական մակետներ, պլակատներ, մեթոդական ցուցումներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>Մ Ո Ղ Ո Ւ Լ Ի Ա Ն Վ Ա Ն Ո Ւ Մ Ը «Ա Ն Ա Ս Ն Ա Պ Ա Հ Ո Ւ Թ Յ Ա Ն Հ Ի Մ Ո Ւ Ն Ք Ն Ե Ր»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՀՂԾ 5 -17-006
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլը մշակվել է բնակչության գյուղատնտեսական մթերքների և արդյունաբերական հումքի նկատմամբ հարաճուն պահանջների բավարարման գործընթացները, անասնապահության զարգացման հիմնախնդիրները, գյուղատնտեսական կենդանիների համար կերի կայուն բազա ստեղծելու միջոցառումները, բնական կերային հողատեսքերի կազմակերպմանը ներկայացվող պահանջներն ուսումնասիրելու նպատակով:
<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 40 ժամ, գործնական աշխատանք՝ 14 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար, ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՀՂԾ 5-17-005 «Ընդհանուր երկրագործություն» մոդուլը:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) բացահայտի ՀՀ-ում անասնապահության զարգացման հիմնախնդիրները և գյուղատնտեսական կենդանիների մթերատվության հիմնական ուղղությունները, 2) ներկայացնի գյուղատնտեսական կենդանիների պահվածքի ձևերը, 3) ներկայացնի գյուղատնտեսական կենդանիների արոտներին և կերատեսակներին ներկայացվող պահանջները և գյուղատնտեսական կենդանիների կերակրման նորմաները, 4) բացատրի գյուղատնտեսական կենդանիների նախիրների, հոտերի ու երամակների ձևավորման սկզբունքները և արոտավայրերի արդյունավետ օգտագործման առանձնահատկությունները:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար

	մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Բացահայտել ՀՀ-ում անասնապահության զարգացման հիմնախնդիրները և գյուղատնտեսական կենդանիների մթերատվության հիմնական ուղղությունները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է գնահատում ՀՀ - ում անասնապահության զարգացման հիմնախնդիրները, 2) ճիշտ է նկարագրում գյուղատնտեսական կենդանիների մթերատվության հիմնական ուղղությունները. կաթնատու, մսատու, ձվատու, բրդատու:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը գնահատվում է խմբային քննարկման և թեստային առաջադրանքի միջոցով: Քննարկման ընթացքում դիտարկվելու է ՀՀ-ում անասնաբուծության զարգացման առանցքային հարցերը, իսկ թեստի միջոցով ստուգվելու է տարբեր խմբերի կենդանիների պահման և կերակրման պայմանների իմացությունը: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. ՀՀ –ում անասնապահության զարգացման ուղղությունները և հիմնախնդիրներ,գյուղատնտեսական կենդանիների մթերատվության հիմնական ուղղությունները, կենդանիների մսուրային և արոտային պահվածքի տեխնոլոգիական օրինաչափությունները, կաթի, մսի, ձվի, բրդի և արդյունաբերական այլ հումքի արտադրության առանձնահատկությունները, գյուղատնտեսական կենդանիների բուժման հիմունքները, անասնաբուծության առանձնահատկությունները, ՀՀ անասնապահական հիմնական շրջանները: Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե քննարկման ընթացքում ուսանողը ցուցաբերում է բավարար գիտելիքներ, իսկ թեստային առաջադրանքը կատարում է հիմնականում ճիշտ:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիդակտիկ նյութեր, ուսումնական գրականություն:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Ներկայացնել գյուղատնտեսական կենդանիների պահվածքի ձևերը
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում գյուղատնտեսական կենդանիների պահվածքի ձևերը. արոտային, մսուրային, արոտամսուրային, 2) ճիշտ է ներկայացնում գյուղատնտեսական կենդանիների պահվածքի ձևերի գոտիական բաշխվածությունը ՀՀ տարածքում:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը գնահատվում է թեստային առաջադրանքի միջոցով: Ուսանողը պետք է ըստ կենդանիների խմբերի ընտրի նրանց պահվածքի ճիշտ ձևերը:

	<p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <p>Գյուղատնտեսական կենդանիների պահվածքի ձևերը՝ արոտային պահվածք, մսուրային պահվածք, արոտամսուրային պահվածք:</p> <p>Դրանց առանձնահատկությունները: Պահվածքի ձևերի գոտիական բաշխվածությունը ՀՀ տարածքում:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե առաջադրանքը կատարվում են հիմնականում անսխալ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիդակտիկ նյութեր, ուսումնական գրականություն:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Ներկայացնել գյուղատնտեսական կենդանիների արոտներին և կերատեսակներին ներկայացվող պահանջները և գյուղատնտեսական կենդանիների կերակրման նորմաները
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում գյուղատնտեսական կենդանիների արոտների նկատմամբ պահանջները,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում գյուղատնտեսական կենդանիների կերակրման նորմաները,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում կերատեսակների նկատմամբ առաջադրվող պահանջները:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է թեստային առաջադրանքի միջոցով: Ուսանողին հանձնարարվելու է հարցերի ոչ պակաս 3 պատասխաններից ընտրել ճիշտը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <p>Գյուղատնտեսական կենդանիների կերակրման հիմունքները, գյուղատնտեսական կենդանիների արոտների նկատմամբ պահանջները, կերաբաժիններ տարբեր կենդանատեսակներ համար, մթերատվության հաշվառման մեթոդները, կերատեսակները և կերակրման նորմաները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե առաջադրանքը հիմնականում ճիշտ է կատարվում: Թույլատրվում է ոչ էական թերություններ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիդակտիկ նյութեր, ուսումնական գրականություն, անհրաժեշտ նյութեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ

<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Բացատրել գյուղատնտեսական կենդանիների նախիրների, հոտերի ու երամակների ձևավորման սկզբունքները և արոտավայրերի արդյունավետ օգտագործման առանձնահատկությունները
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է մեկնաբանում նախիրների ձևավորման սկզբունքները,</li> <li>2) ճիշտ է մեկնաբանում հոտերի ու երամակների ձևավորման սկզբունքները,</li> <li>3) ճիշտ է նկարագրում արոտավայրերի արդյունավետ օգտագործման համակարգերը,</li> <li>4) հիմնավորում է ՀՀ-ում արոտավայրերի օգտագործման արդյունավետության բարձրացմանը միտված ժամանակակից միջոցառումները:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է խմբային քննարկման հիման վրա, որի ընթացքում պարզաբանվելու է արդյունքի առանցքային հարցերում կողմնորոշվելու ուսանողի մակարդակը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <p>Նախիրների ձևավորման սկզբունքները, հոտերի ու երամակների ձևավորման սկզբունքները, բնական արոտավայրեր, բնական արոտավայրերի մակերեսային բարելավում, բնական արոտավայրերի արմատական բարելավում, ջրովի արոտավայրեր, արոտավայրերի անընմեջ և պարբերական օգտագործումը: Արոտավայրերի օգտագործման բնապահպանական խնդիրները և դրանց լուծման կարևորությունը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե ուսանողը ըստ իրավիճակների առաջարկում է հիմնավորված լուծման տարբերակներ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիդակտիկ նյութեր, ուսումնական գրականություն:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ
<b>Մ Ո Ղ Ա Շ Ի Ն Ա Ր Ա Ր Ա Կ Ա Ն Գ Ծ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՀՂԾ-5-17-007
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել անհրաժեշտ ստանդարտներով թվանշանակիր պրոյեկցիաների և պայմանական նշանների կիրառմամբ տեղանքային մակերևույթների պատկերման, հատակագծերի, տեղագրական քարտեզների, ճանապարհների, ապարելների, պրոֆիլների գծագրման ճարտարագիտական գիտելիքներ, կարողություններ և հմտություններ:



<b>Մոդուլի տևողությունը</b>	72 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 18 ժամ, գործնական աշխատանք՝ 54 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չէ
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի ուսումնական ծրագրին առնչվող պետական ստանդարտները և կիրառի գծագրերի ձևավորման տարրերը, 2) մշակի թվանշանակիր պրոյեկցիաներում (ԹՊ) հարթակի հողային աշխատանքների սահմանների տեղանքի հետ կապը, 3) կիրառի գյուղատնտեսական հողատեսքերի գծագրման պայմանական նշանները, 4) ներկայացնի գյուղատնտեսական հողատեսքերի գունավորման սկզբունքները և որոշի հողային աշխատանքների սահմանները:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել ուսումնական ծրագրին առնչվող պետական ստանդարտները և կիրառել գծագրերի ձևավորման տարրերը
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է օգտվում գոյություն ունեցող ստանդարտներից, 2) ըստ առաջադրանքի ճիշտ է ընտրում թղթի ֆորմատը, 3) ճիշտ է ընտրում գծագրման մասշտաբը, 4) ճիշտ է ընտրում տառատեսակները, 5) ճիշտ է կատարում շտամպի մակագրությունները, 6) ճիշտ է ներկայացնում գծատեսակները և կատարում գծապատում, 7) ճիշտ է պատկերում պայմանական նշանակումները և չափագրումները, 8) ճիշտ է ներկայացնում կոր կազմածո գծերը և կատարում լծորդումներ, 9) ճիշտ է կառուցում կետի, ուղղի և հարթության պրոյեկցիաները, 10) ճիշտ է կատարում հատվածների բաժանումը կետոս և զույգ մասերի,
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքի միջոցով: Ուսանողը պետք է ներկայացնի գոյություն ունեցող ստանդարտները, գծագրական թղթի ֆորմատները, գծերի և տառերի տեսակները, գծագրման մասշտաբները, գծագրական հիմնական գործիքներն ու դրանց կիրառական նշանակությունը, պայմանական նշանակումները և չափագրումները:

	<p>Գործնական առաջադրանքի ժամանակ պետք է կատարի ուղիղ և կոր գծերի լծորդումներ, հատվածը բաժանի կենտ և զույգ մասերի, կառուցի կետի, ուղղի և հարթության պրոյեկցիաներ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <p>Գծագրման ստանդարտները, գիծ, ուղիղ և կոր գծեր, զուգահեռ, ուղղահայաց և խաչվող գծեր, գծապատում, գծագրական թղթի ֆորմատները, շտամպի տեսակները, շտամպի մակագրությունները, պայմանական նշանակումները և չափագրումները, կետի, ուղղի և հարթության պրոյեկցիաների կառուցումը, ուղիղ և կոր գծերի լծորդումների կառուցումը, հատվածի բաժանումը կենտ և զույգ մասերի:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը առաջադրանքը կատարում է անսխալ:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ գծագրման համար անհրաժեշտ բոլոր գործիքները, պարագաները գծագրական թուղթ: Ուսուցումը պետք է իրականացնել կաբինետային պայմաններում՝ ունենալով տեխնիկական գծագրության դիտակտիկ նյութեր՝ դետալներ, մոդելներ, միացություններ և ուսումնական գրականություն:</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 2</b></p>	<p>Մշակել թվանշանակիր պրոյեկցիաներում (ԹՊ) հարթակի հողային աշխատանքների սահմանների տեղանքի հետ կապը</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է կառուցում ուղիղները և հարթությունները ԹՊ-ում,</li> <li>2) ճիշտ է կառուցում երկրաչափական մարմինները ԹՊ-ում,</li> <li>3) ճիշտ է որոշում թեքության մասշտաբը և անկման անկյունը,</li> <li>4) ճիշտ է կատարում երկրաչափական մարմինների հատումը հարթությունով,</li> <li>5) ճիշտ է կառուցում տեղանքային մակերևույթի պրոֆիլը փորվածքի հատվածում,</li> <li>6) ճիշտ է կառուցում տեղանքային մակերևույթի պրոֆիլը լցվածքի հատվածում,</li> <li>7) ճիշտ է գծագրում ճանապարհները, ապարելը և լանջերի հարթությունները տեղանքային մակերևույթների վրա:</li> </ol>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական առաջադրանքի միջոցով: Ուսանողին կտրվի առաջադրանք թվանշանակիր պրոյեկցիաներում մշակել հարթակի հողային աշխատանքների սահմանների կապը տեղանքի հետ, պատկերել ուղիղները և հարթությունները, կառուցել երկրաչափական մարմիններ և տալ այդ մարմինների հատումը հարթությունով:</p>

	<p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <p>Թվանշանակիր պրոյեկցիաների (ԹՊ) առանձնահատկությունները, ուղիղների և հարթությունների կառուցումը ԹՊ-ում, երկրաչափական մարմիններ կառուցումը ԹՊ-ում, թեքության մասշտաբը և անկման անկյունը, երկրաչափական մարմինների հատումը հարթությունով, տեղանքային մակերևույթի պրոֆիլի կառուցումը փորվածքի հատվածում, տեղանքային մակերևույթի պրոֆիլի կառուցումը լցվածքի հատվածում, ճանապարհների, ապպարելի և լանջերի հարթությունների գծագրումը տեղանքային մակերևույթների վրա:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է, եթե առաջադրանքը կատարվում է անսխալ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ գծագրական պարագաներ, ուսումնական նյութեր, ստանդարտներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 14 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	<p>Կիրառել գյուղատնտեսական հողատեսքերի գծագրման պայմանական նշանները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում մասշտաբային և ոչ մասշտաբային պայմանական նշանները,</li> <li>2) ճիշտ է գծում հանդավայրերի և տարբեր բնական պայմանների բուսականության պայմանական նշանները,</li> <li>3) ճիշտ է գծում ջրային տարածքների պայմանական նշանները,</li> <li>4) ճիշտ է գծում կենցաղ ապահովման շինությունների և միջոցների պայմանական նշանները,</li> <li>5) ճիշտ է գծում ռելիեֆի պայմանական նշանները,</li> <li>6) ճիշտ է կազմում ներտնտեսային հատակագիծ,</li> <li>7) ճիշտ է կատարում հողատարածքների մակերեսների հաշվարկը պալետկայի միջոցով:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական առաջադրանքի միջոցով: Ուսանողին կտրվի առաջադրանք կոնկրետ հողատեսքի համար կիրառել գյուղատնտեսական հողատեսքերի գծագրման պայմանական նշանները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <p>Մասշտաբային և ոչ մասշտաբային պայմանական նշանները, հանդավայրերի և տարբեր բնական պայմանների բուսականության պայմանական նշանների գծագրում, ջրային տարածքների պայմանական նշանների գծագրում, կենցաղ ապահովման շինությունների և միջոցների պայմանական նշանների գծագրում, ռելիեֆի պայմանական նշանների գծագրում, հողատարածքների</p>

	մակերեսների հաշվարկը պալետկայի միջոցով, ներտնտեսային հատակագծի կազմում: Արդյունքի ձեռքբերումը դրական է, եթե առաջադրանքը կատարվում է անսխալ:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ գծագրական պարագաներ, ուսումնական նյութեր, ստանդարտներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 14 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Ներկայացնել գյուղատնտեսական հողատեսքերի գունավորման սկզբունքները և որոշել հողային աշխատանքների սահմանները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է բացատրում գյուղատնտեսական հողատեսքերի գունավորման սկզբունքները, 2) կարողանում է ստանալ տարբեր երանգի և խտության գույներ, 3) ճիշտ է որոշում հողային աշխատանքների սահմանները:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողից կպահանջվի ներկայացնել գյուղատնտեսական հողատեսքերի գունավորման սկզբունքները և որոշել հողային աշխատանքների սահմանները: Համաձայն առաջադրանքի պահանջների նա պետք է տուշով կամ ջրաներկով պատկերի հողատեսքերի եզրագծերը, կարողանա գունաներկել գյուղատնտեսական հողատեսքերի առանձնացված ուրվագծերը: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. Գյուղատնտեսական հողատեսքերի գունավորման սկզբունքները, գույների տեսակները, տարբեր երանգի և խտության գույների ստացում, հողային աշխատանքների սահմանների որոշում: Արդյունքի ձեռքբերումը դրական է, եթե գործնական առաջադրանքները կատարվում են հիմնականում անսխալ:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի սուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ գծագրական և ներկելու պարագաներ, ուսումնական նյութեր, ստանդարտներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 14 ժամ
<b>ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԵՈԴԵԶԻԱ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՀՂՇ 5 -17-008
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլը մշակվել է հարթության վրա երկրագնդի ֆիզիկական մակերևույթի պատկերման, չափագրման և հաշվարկման

	սկզբունքային մոտեցումներն ուսումնասիրելու նպատակով: Մոդուլի ուսումնասիրման արդյունքում ուսանողը կարող է իրականացնել հողաշինարարական աշխատանքներ ժամանակակից արդյունավետ մեթոդներով:
<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 18 ժամ, գործնական աշխատանք՝ 36 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի գեոդեզիայի ուսումնասիրման առարկան և խնդիրները, 2) բնութագրի երկրագնդի ֆիզիկական մակերևույթի վրա կատարվող պարզագույն հանույթները, 3) գրաֆիկական և մեխանիկական եղանակներով հաշվի մակերեսներ:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել գեոդեզիայի ուսումնասիրման առարկան և խնդիրները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում գեոդեզիայի ուսումնասիրման առարկան, 2) ճիշտ է ներկայացնում ժամանակակից գեոդեզիայի խնդիրները, 3) ճիշտ է ներկայացնում գեոդեզիական աշխատանքներում կիրառվող գործիքներն ու սարքավորումները, 4) ճիշտ է մեկնաբանում գեոդեզիայի դերն ու նշանակությունը հողաշինարարական աշխատանքներում:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը գնահատվում է խմբային քննարկման և գործնական առաջադրանքի միջոցով: Ուսանողը պետք է ներկայացնի գեոդեզիայի ուսումնասիրման առարկան և խնդիրները, գեոդեզիական աշխատանքներում կիրառվող գործիքներն ու սարքավորումները: Գործնական առաջադրանքի ժամանակ ուսանողը պետք է բացատրի գեոդեզիական աշխատանքներում կիրառվող գործիքների ու սարքավորումների աշխատանքի սկզբունքը, առանձնացնի այն խմբաքանակը, որը կիրառելի է հողաշինարարական աշխատանքներում: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. Գեոդեզիան որպես երկրի ձևը, չափերը և գրավիտացիոն դաշտը որոշելու գիտություն, պլանների ու քարտեզների վրա գիտապրակտիկ նպատակներով պատկերելու համար երկրի մակերևույթի վրա կատարվող չափումները, չափումների մեթոդները,

	<p>գեոդեզիայի ժամանակակից խնդիրները, գեոդեզիական աշխատանքներում կիրառվող գործիքներն ու սարքավորումները, գեոդեզիայի դերն ու նշանակությունը հողաշինարարական աշխատանքներում:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե առաջադրանքները հիմնականում կատարվում են անսխալ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են գեոդեզական գործիքներ, չափիչ գործիքներ, դիտակտիկ նյութեր, ուսումնական գրականություն:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	<p>Բնութագրել երկրագնդի ֆիզիկական մակերևույթի վրա կատարվող պարզագույն հանույթները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է տարբերակում երկրաչափագրական գործիքները և օգտվում դրանցից,</li> <li>2) ճիշտ է տարբերակում երկրաչափագրական սարքավորումները և օգտվում դրանցից,</li> <li>3) ճիշտ է կատարում տեղանքի պարզագույն տեղագրական հանույթ,</li> <li>4) ճիշտ է կատարում տեղանքի պարզագույն դաշտային հանույթ,</li> <li>5) ճիշտ է կատարում տեղանքի պարզագույն բուսուլային հանույթ:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական առաջադրանքի միջոցով: Ուսանողին հանձնարարվելու է կատարել տեղանքի պարզագույն տեղագրական, դաշտային և բուսուլային հանույթ, իրականացնել համապատասխան չափագրումներ ու գծագրեր՝ կիրառելով երկրաչափական գործիքները և երկրաչափագրական սարքավորումները, կիրառել և ընտրել ճիշտ պայմանանշաններ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <p>Երկրաչափագրական գործիքներ, երկրաչափագրական սարքավորումներ, գործիքների և սարքավորումների օգտագործման կանոնները, տեղագրական հանույթ, դաշտային հանույթ, բուսուլային հանույթ:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե առաջադրանքները կատարվում են հիմնականում անսխալ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են գեոդեզիական և չափիչ գործիքներ, դիտակտիկ նյութեր, ուսումնական գրականություն:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 14 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	<p>Գրաֆիկական և մեխանիկական եղանակներով հաշվել մակերեսներ</p>

<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) անալիտիկ եղանակով ճիշտ է հաշվում հողատեսքերի մակերեսները,</p> <p>2) գրաֆիկական եղանակով ճիշտ է հաշվում հողատեսքերի մակերեսները,</p> <p>3) մեխանիկական եղանակով ճիշտ է հաշվում հողատեսքերի մակերեսները,</p> <p>4) պալետկայի օգտագործմամբ հաշվում է հողատեսքերի մակերեսները,</p> <p>5) ճիշտ է կազմում հողերի էքսպլիկացիա:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն առաջադրանքներ՝ կատարել անալիտիկ, գրաֆիկական, մեխանիկական եղանակներով և պալետկայի օգտագործմամբ հատակագծերի և քարտեզների վրա առանձնացված փակ ուրվագծերի մակերեսների հաշվարկ, ինչպես նաև կազմել հողերի էքսպլիկացիա:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <p>Մակերեսների հաշվարկման եղանակները, երկրաչափական պարզ պատկերներով մակերեսների անալիտիկ հաշվարկ, գրաֆիկական եղանակով հողատեսքերի մակերեսների հաշվարկ, հողատեսքերի մակերեսների մեխանիկական հաշվարկ, պալետկայի օգնությամբ հողատեսքերի մակերեսների հաշվարկ, էքսպլիկացիա- անապատացում, հողերի բերիության անկում, հողերի էքսպլիկացիայի կազմման մեթոդները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե գործնական առաջադրանքը կատարվել է անսխալ: Շեղումները թույլատրվում է ընդունված նորմաների սահմաններում:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են գեոդեզական և չափիչ գործիքներ, դիդակտիկ նյութեր, ուսումնական գրականություն:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 18 ժամ</p>
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԹԵՈԴՈԼԻՏԱՅԻՆ ՀԱՆՈՒՅԹ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՀՂՇ 5-17-009
<b>Մոդուլի նպատակը</b>	<p>Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել թեոդոլիտի կառուցվածքի, թեոդոլիտային հանույթի կատարման սկզբունքների և թեոդոլիտային հանույթից ստացվող դաշտային նյութերի մշակման վերբերյալ գիտելիքներ և դրանք գործնականում կիրառելու կարողություններ</p>
<b>Մոդուլի տևողությունը</b>	72 ժամ, որից՝

	տեսական ուսուցում՝ 30 ժամ, գործնական աշխատանք՝ 42 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՀՂՇ 5-17-008 «Ընդհանուր գեոդեզիա» մոդուլը:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) բացատրի թեոդոլիտի կառուցվածքը և աշխատանքային սկզբունքները, 2) ներկայացնի թեոդոլիտային հանույթի առաջնահերթությունները, 3) ներկայացնի գեոդեզիական (երկրաբաշխական) ցանցի կառուցման սկզբունքները:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարարման կարգակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Բացատրել թեոդոլիտի կառուցվածքը և աշխատանքային սկզբունքները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է նկարագրում թեոդոլիտի աշխատանքային մասերը, 2) ճիշտ է ներկայացնում թեոդոլիտից օգտվելու կարգը, 3) ճիշտ է բնութագրում թեոդոլիտային ճիշտ հաշվարկները, 4) ճիշտ է բացատրում թեոդոլիտի դերը չափագրական տարաբնույթ աշխատանքներում:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական առաջադրանքի հիման վրա, որի ընթացքում ուսանողը բնութագրում է թեոդոլիտի աշխատանքային մասերը, օգտվում է այս գործիքից, կատարում որոշակի հաշվարկներ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ թեոդոլիտի աշխատանքային մասերը, դրանց նշանակությունը, թեոդոլիտից օգտվելու կարգը և գործողությունների հաջորդականությունը, թեոդոլիտային հաշվարկները, թեոդոլիտի դերը չափագրական տարաբնույթ աշխատանքներում: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը առաջադրանքը հիմնականում կատարում է ճիշտ:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական տեսանյութեր, թեոդոլիտ, պլակատներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Ներկայացնել թեոդոլիտային հանույթի առաջնահերթությունները



<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում թեոդոլիտային հանույթի հաջորդական քայլերը,</li> <li>2) կատարում է հորիզոնական հեռավորությունների և անկյունների ճիշտ չափագրում,</li> <li>3) կատարում է ուղղաձիգ հեռավորությունների և անկյունների ճիշտ չափագրում,</li> <li>4) ճիշտ է ներկայացնում գեոդեզիական ուղիղ և հակադարձ խնդիրների լուծման եղանակները:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական առաջադրանքի միջոցով: Ուսանողին հանձնարարվելու է կոնկրետ դեպքի համար կատարել թեոդոլիտային հանույթ և ձևակերպել արդյունքները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ թեոդոլիտային հանույթի նշանակությունը և հաջորդական քայլերը, հորիզոնական հեռավորությունների և անկյունների չափագրում, ուղղաձիգ հեռավորությունների և անկյունների չափագրում, գեոդեզիական ուղիղ և հակադարձ խնդիրների լուծման եղանակները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը առաջադրանքը հիմնականում կատարում է ճիշտ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական տեսանյութեր, մեթոդական ցուցումներ, գեոդեզիական գործիքներ, թեոդոլիտ, պլակատներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 10 ժամ  գործնական աշխատանք՝ 16 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	<p>Ներկայացնել գեոդեզիական (երկրաբաշխական) ցանցի կառուցման սկզբունքները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում գեոդեզիական ցանցի հիմնական տարրերը,</li> <li>2) ճիշտ է կազմում տեղանքի գեոդեզիական ցանցը,</li> <li>3) ճիշտ է գնահատում տեղանքի գեոդեզիական ցանցի հողաշինարարական նշանակությունը:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կազմել տեղանքի գեոդեզիական ցանց:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Գեոդեզիական ցանցի նշանակությունը և հիմնական տարրերը, տեղանքի գեոդեզիական ցանցի կառուցման մոտեցումները և օգտագործվող տվյալները, տեղանքի գեոդեզիական ցանցի հողաշինարարական նշանակությունը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը առաջադրանքը հիմնականում կատարում է ճիշտ: Թույլատրվում է որոշ ոչ էական թերություններ և բացթողումներ:</p>
<b>Մեթոդաբանությունը և</b>	<p>Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ</p>

<b>ռեսուրսները</b>	ցուցադրական տեսանյութեր, մեթոդական ցուցումներ, գեոդեզիական գործիքներ, թեոդոլիտ, պլակատներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 16 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՐՈՒՆՏՆԵՐԻ ՄԵԽԱՆԻԿԱ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՀՂՇ 5-17-010
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել ճարտարագիտական բնահողագիտության, մասնավորապես, ճարտարագիտական բնահողերում առաջացող լարումների որոշարկման առավել նպատակահարմար եղանակների, ինչպես նաև ճարտարագիտական բնահողերի ամրության ու կարողունակության որոշման և հաշվարկման արդյունավետ եղանակների վերաբերյալ գիտելիքներ և դրանք գործնականում կիրառելու կարողություններ
<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 36 ժամ գործնական աշխատանք՝ 18 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար, ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՀՂՇ 5-17-003 «Ընդհանուր երկրաբանություն» մոդուլը:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի բնահողերի հատկությունները և դրանց բարելավման եղանակները, 2) ներկայացնի շինարարական նյութերը և դրանց հատկությունները, 3) ներկայացնի բնահողը որպես շինարարական նյութ:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարարման կարգակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել բնահողերի հատկությունները և դրանց բարելավման եղանակները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է սահմանում բնահող հասկացությունը, 2) ճիշտ է ներկայացնում բնահողի տեսակները, 3) ճիշտ է բացատրում բնահողի հատկությունները, 4) ճիշտ է պարզաբանում բնահողերում առաջացող լարումների պատճառներն ու բաշխման օրինաչափությունները, 5) ճիշտ է ներկայացնում բնահողերի բարելավման արդյունավետ եղանակները,

	<p>6) ճիշտ է բացատրում բնահողերի ամրության և կայունության խախտման պատճառները,</p> <p>7) ճիշտ է ներկայացնում բնահողերի ամրության և կարողունակության գնահատման եղանակները:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է թեստային առաջադրանքի միջոցով: Ուսանողը պետք է ներկայացնի բնահողերի հատկությունները և դրանց բարելավման եղանակները, բացատրի բնահողերի ամրության և կայունության խախտման պատճառները, բնահողերի ամրության և կարողունակության գնահատման եղանակները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <p>Բնահող հասկացությունը, բնահողի տեսակները, բնահողի հատկությունները, բնահողերում առաջացող լարումների պատճառներ, բնահողերում առաջացող լարումների բաշխման օրինաչափությունները, բնահողերի բարելավման արդյունավետ եղանակները, բնահողերի ամրության և կայունության խախտման պատճառները, բնահողերի ամրության և կարողունակության գնահատման եղանակները,</p> <p>Արդյունքը ձեռքբերումը դրական է համարվում, եթե առաջադրանքը կատարվում է հիմնականում անսխալ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են բնահողի տեսակներ, դիդակտիկ նյութեր, ուսումնական գրականություն:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 12 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	<p>Ներկայացնել շինարարական նյութերը և դրանց հատկությունները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում հիմնական շինանյութերի տեսակները,</li> <li>2) ճիշտ է բացատրում շինանյութերի ֆիզիկական և մեխանիկական հատկությունները,</li> <li>3) ճիշտ է տարբերակում բնական և արհեստական քարանյութերն ու դրանց կիրառման բնագավառները,</li> <li>4) ճիշտ է ներկայացնում անօրգանական և օրգանական կապակցող նյութերն ու դրանց կիրառման բնագավառները,</li> <li>5) կարող է առանձնացնել պլաստմասե և պոլիմերային նյութերն ու դրանց կիրառման բնագավառները:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է թեստային առաջադրանքի միջոցով: Ուսանողը պետք է ըստ նյութերի տեսակների ընտրի դրանց էական հատկությունները, կիրառման բնագավառները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <p>Հիմնական շինանյութերի տեսակները, շինանյութերի ֆիզիկական և մեխանիկական հատկությունները, բնական և արհեստական</p>

	<p>քարանյութերն ու դրանց կիրառման բնագավառները, անօրգանական և օրգանական կապակցող նյութերն ու դրանց կիրառման բնագավառները, պլաստմասսե և պոլիմերային նյութերն ու դրանց կիրառման բնագավառները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե առաջադրանքը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարվում: Թույլատրվում է ոչ էական շեղումներ և թերություններ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական և գործնական պարապմունքների ձևով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիդակտիկ նյութեր, շինանյութերի տեսակներ, ուսումնական գրականություն:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում 12 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Ներկայացնել բնահողը որպես շինարարական նյութ
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում բնահողը, որպես շինարարական նյութ կիրառելու բնագավառները,</li> <li>2) ճիշտ է բացատրում շինարարական նպատակներով բնահողի օգտագործման արդյունավետությունը:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է խմբային քննարկման միջոցով: Քննարկման ընթացքում պարզաբանվելու է բնահողի որպես շինարարական նյութ օգտագործելու հետ կապված հարցերը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <p>Բնահողը որպես շինարարական նյութ, կիրառման բնագավառները, բնահողի օգտագործման արդյունավետությունը, բնահողը որպես շինարարական նյութ օգտագործելու բնապահպանական հետևանքները և խնդիրները, դրանց կանխարգելման կարևորությունը և միջոցառումները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե քննարկման ընթացքում ուսանողը կատարում է ճիշտ եզրահանգումներ, հարցերի պատասխաններում ճիշտ է կողմնորոշվում:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական և գործնական պարապմունքների ձևով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են բնահողի տեսակներ, դիդակտիկ նյութեր, ուսումնական գրականություն:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում 12 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՏԱԽԻՈՄԵՏՐԱԿԱՆ ԵՎ ՄԵՆՉՈՒԼԱՅԻՆ ՀԱՆՈՒՅԹՆԵՐ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՀԴՇ 5 -17-011

<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել տախիոմետրի և կիպրեգելի կառուցվածքի, տախիոմետրական ու մենզուլային հանույթների կատարման սկզբունքների վերաբերյալ գիտելիքներ և դրանցից ստացվող դաշտային ու հաշվարկային նյութերի մշակման կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	72 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 30 ժամ, գործնական աշխատանք՝ 42 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՀՂՇ 5-17-009 «Թեոդոլիտային հանույթ» մոդուլը:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի տախիոմետրի և կիպրեգելի կառուցվածքն ու աշխատանքային սկզբունքները, 2) կատարի տախիոմետրական և մենզուլային հանույթներ, 3) կազմի հատակագծեր և պլանշետներ:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել տախիոմետրի և կիպրեգելի կառուցվածքն ու աշխատանքային սկզբունքները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում տախիոմետրի աշխատանքային մասերը, 2) ճիշտ է ներկայացնում տախիոմետրից օգտվելու կարգը, 3) իրականացնում է տախիոմետրային ճիշտ հաշվարկներ, 4) կարող է տախիոմետրը բերել աշխատանքային վիճակի, 5) ճիշտ է ներկայացնում կիպրեգելի կառուցվածքը, 6) կարող է մենզուլան բերել աշխատանքային վիճակի, 7) իրականացնում է թեքման անկյունների ճիշտ հաշվարկներ:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական առաջադրանքի կատարման միջոցով, որի ընթացքում ուսանողը պետք է նշված գործիքները բերի աշխատանքային վիճակի և կատարի հաշվարկներ:  Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները

	<p>Տախիոմետրի աշխատանքային մասերը, տախիոմետրից օգտվելու կարգը, տախիոմետրային ճիշտ հաշվարկներ, տախիոմետրը աշխատանքային վիճակի բերելու քայլերը, կիպրեգելի կառուցվածքը, մենզուլան աշխատանքային վիճակի բերելու քայլերը, թեքման անկյունների հաշվարկներ:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը առաջադրանքը հիմնականում կատարում է ճիշտ: Թույլատրվում է որոշ ոչ էական թերություններ և բացթողումներ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական տեսանյութեր, գեոդեզիական գործիքներ, տախիոմետր, կիպրեգել, պլակատներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 14 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Կատարել տախիոմետրական և մենզուլային հանույթներ
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում տախիոմետրական հանույթի հաջորդական քայլերը,</li> <li>2) ճիշտ է կատարում տեղանքի մակերևույթի անհարթությունների արտանկարում,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում մենզուլային հանույթի հաջորդական քայլերը,</li> <li>4) իրականացնում է պլանշետների միաբերում:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական առաջադրանքի միջոցով: Ուսանողին հանձնարարվելու է կատարել տախիոմետրական և մենզուլային հանույթներ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Տախիոմետրի և մենզուլայի կառուցվածքային մասերը, դրանք աշխատանքային վիճակի բերելու քայլերը, արդյունքների փաստաթղթային ձևակերպումը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը առաջադրանքը հիմնականում կատարում է ճիշտ: Թույլատրվում է որոշ ոչ էական թերություններ և բացթողումներ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական տեսանյութեր, գեոդեզիական գործիքներ, տախիոմետր, մենզուլա, պլակատներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 14 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Կազմել հատակագծեր և պլանշետներ
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում տախիոմետրական հանույթից ստացվող նյութերի մշակման մեթոդները,

	<p>2) ճիշտ է կազմում տեղանքի միջին բեռնվածության տեղագրական քարտեզներ և հատակագծեր,</p> <p>3) կատարում է հանույթային կետերի խտացում,</p> <p>4) կատարում է տեղագրական քարտեզների սյունակավորում և անվանահամարակալում:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական առաջադրանքի կատարման միջոցով: Ուսանողին հանձնարարվելու է կազմել հատակագիծ և պլանշետ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Տախիոմետրական հանույթից ստացվող նյութերի մշակման մեթոդները, տեղանքի միջին բեռնվածության տեղագրական քարտեզներ և հատակագծեր, հանույթային կետերի խտացում, տեղագրական քարտեզների սյունակավորում և անվանահամարակալում:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը առաջադրանքը հիմնականում կատարում է ճիշտ: Թույլատրվում է որոշ ոչ էական թերություններ և բացթողումներ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական տեսանյութեր, հատակագծեր, քարտեզներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 14 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՆԻՎԵԼԻՐԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՀՂՇ 5 -17-012
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել պետական նիվելիրացման ցանցի վերաբերյալ գիտելիքներ և նիվելիրացման աշխատանքները կատարելու կարողություններ
<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 28 ժամ, գործնական աշխատանք՝ 26 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՀՂՇ 5-17-011 «Տախիոմետրական և մենզուլային հանույթներ» մոդուլը:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) մեկնաբանի նիվելիրացման աշխատանքների էությունը,

	<p>2) ներկայացնի նիվելիրների կառուցվածքը և աշխատանքային սկզբունքները,</p> <p>3) կատարի նիվելիրային հանույթի միջոցառումներ:</p>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարարման կարգակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Մեկնաբանել նիվելիրացման աշխատանքների էությունը
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) նիվելիրացման աշխատանքների մասին ընդհանուր տեղեկությունները ճիշտ է ներկայացնում,</p> <p>2) ճիշտ է չափագրում կետի բացարձակ բարձրությունը և այն արտահայտում հատակագծի վրա,</p> <p>3) ճիշտ է չափագրում կետերի հարաբերական բարձրությունները,</p> <p>4) ճիշտ է մեկնաբանում պետական նիվելիրացման ցանցի կազմման սկզբունքները:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական առաջադրանքի արդյունքներով, որի ընթացքում ուսանողը չափագրում է հանձնարարված պարամետրերը և գրանցում փաստաթղթերում:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Ընդհանուր տեղեկություններ նիվելիրացման աշխատանքների մասին, կետի բացարձակ բարձրությունը, այն հատակագծի վրա արտահայտելու կարգը, կետերի հարաբերական բարձրությունները, պետական նիվելիրացման ցանցի կազմման սկզբունքները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը առաջադրանքը հիմնականում կատարում է ճիշտ: Թույլատրվում է որոշ ոչ էական թերություններ և բացթողումներ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական տեսանյութեր, գեոդեզիական գործիքներ, նիվելիր, պլակատներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Ներկայացնել նիվելիրների կառուցվածքը և աշխատանքային սկզբունքները
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է ներկայացնում նիվելիրի կառուցվածքային մասերը,</p> <p>2) նիվելիրը բերում է աշխատանքային վիճակի,</p> <p>3) ճիշտ է կատարում նիվելիրային հաշվարկներ,</p> <p>4) ճիշտ է լրացնում նիվելիրային հաշվեմատյանը:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական առաջադրանքի հիման վրա, որի ընթացքում ուսանողը պետք է կատարի



	<p>նիվելիրային հաշվարկներ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ նիվելիրի կառուցվածքային մասերը, նիվելիրի բերումը աշխատանքային վիճակի, նիվելիրային հաշվարկներ, նիվելիրային հաշվեմատյանը և դրա լրացումը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը առաջադրանքը հիմնականում կատարում է ճիշտ: Թույլատրվում է որոշ ոչ էական թերություններ և բացթողումներ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական տեսանյութեր, գեոդեզիական գործիքներ, նիվելիր, պլակատներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Կատարել նիվելիրային հանույթի միջոցառումներ
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է կատարում տեխնիկական նիվելիրացման աշխատանքներ,</li> <li>2) ճիշտ է կատարում մակերևույթի նիվելիրացում քառակուսիներով,</li> <li>3) ճիշտ է կատարում երկայնական և լայնական պիկետաժի նշահարում,</li> <li>4) ճիշտ է կատարում կորերի պիկետաժի նշահարում:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական առաջադրանքի միջոցով: Ուսանողը կատարելու է նիվելիրային հանույթի որոշակի աշխատանքներ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ տեխնիկական նիվելիրացման աշխատանքների կատարում, մակերևույթի նիվելիրացում քառակուսիներով, երկայնական և լայնական պիկետաժի նշահարում, կորերի պիկետաժի նշահարում:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը առաջադրանքը հիմնականում կատարում է ճիշտ: Թույլատրվում է որոշ ոչ էական թերություններ և բացթողումներ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական տեսանյութեր, պլակատներ, հողագիտական և քարտեզագրական նյութեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀՈՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՀՈՂԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՀՂԾ 5 -17-013
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի ուսումնասիրման արդյունքում ուսանողի մոտ ձևավորել հողաբարելավման (հողերի մելիորացիայի) և հողապահպանական

	միջոցառումների ու հողային քարտեզագրման ընդհանուր սկզբունքների վերաբերյալ գիտելիքներ և դրանք գործնականում կիրառելու, հողային քարտագրամներ և քարտեզներ կազմելու, հողը՝ որպես արտադրության միջոց և աշխատանքի առարկա ուսումնասիրելու նպատակով:
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 12 ժամ, գործնական աշխատանք՝ 24 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ՀՂՇ 5-17-002 «Հողագիտություն» մոդուլը:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) պարզաբանի հողագիտության և հողային քարտեզագրման խնդիրները, 2) ներկայացնի հողերի էրոզիայի (ողողամաշման) բովանդակությունը և դրա դեմ պայքարի միջոցառումները, 3) ներկայացնի հողային քարտագրամները և քարտեզներ կազմելու մեթոդաբանությունը, 4) պարզաբանի տարբեր նշանակության հողային քարտեզների բովանդակային առանձնահատկությունները:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Պարզաբանել հողագիտության և հողային քարտեզագրման խնդիրները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում հող հասկացությունը, դրանց տիպերը և առաջացման հիմնական պայմանները, 2) ճիշտ է ներկայացնում հողային քարտեզագրման խնդիրները, 3) ճիշտ է մեկնաբանում ՀՀ-ում իրականացվող և ակնկալվող հողաբարելավման միջոցառումները տարբեր բարձրաչափական և հողակլիմայական գոտիներում:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը գնահատվում է խմբային քննարկումների հիման վրա նախապես մշակված ուսումնառության արդյունքի վերաբերյալ հիմնական հասկացողությունների սահմանումների, բովանդակության վերաբերող պատասխանների ձևակերպմամբ պարզաբանել հողագիտության և հողային քարտեզագրման խնդիրները: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները Հող հասկացությունը, դրանց տիպերը և առաջացման հիմնական պայմանները, հողային քարտեզագրման խնդիրները, ՀՀ-ում իրականացվող և ակնկալվող հողաբարելավման միջոցառումները տարբեր բարձրաչափական և հողակլիմայական գոտիներում: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը առաջադրանքը հիմնականում կատարում է ճիշտ: Թույլատրվում է որոշ ոչ էական թերություններ և բացթողումներ:

<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական տեսանյութեր, պլակատներ, հողագիտական և քարտեզագրական նյութեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Ներկայացնել հողերի էրոզիայի (ողողամաշման) բովանդակությունը և դրա դեմ պայքարի միջոցառումները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում «հողի էրոզիա» հասկացության սահմանումը և բովանդակությունը, 2) ճիշտ է ներկայացնում ՀՀ հիմնական հողատեսակների էրոզացվածության (ողողամաշվածության) տարբերություններն ու առանձնահատկությունները, 3) ճիշտ է մեկնաբանում լեռնային երկրներում հողի էրոզիայի դեմ պայքարի առավել արդյունավետ միջոցառումները:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը գնահատվում է խմբային քննարկումների հիման վրա նախապես մշակված ուսումնառության արդյունքի վերաբերյալ հիմնական հասկացողությունների սահմանումների, բովանդակության վերաբերող պատասխանների ձևակերպմամբ: Միաժամանակ տրվելու են ելակետային տվյալներ ներկայացնելու հողերի էրոզիայի (ողողամաշման) բովանդակությունը և դրա դեմ պայքարի միջոցառումները: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները «Հողի էրոզիա» հասկացության սահմանումը և բովանդակությունը, ՀՀ հիմնական հողատեսակների էրոզացվածության (ողողամաշվածության) տարբերություններն ու առանձնահատկությունները, լեռնային երկրներում հողի էրոզիայի դեմ պայքարի առավել արդյունավետ միջոցառումները: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը առաջադրանքը հիմնականում կատարում է ճիշտ: Թույլատրվում է որոշ ոչ էական թերություններ և բացթողումներ:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական տեսանյութեր, պլակատներ, հողագիտական և քարտեզագրական նյութեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Ներկայացնել հողային քարտագրամները և քարտեզներ կազմելու մեթոդաբանությունը
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է մեկնաբանում հողային քարտագրամները և դրանց նշանակությունը գյուղատնտեսական արտադրությունում, 2) ճիշտ է ներկայացնում հողային քարտեզները և դրանց նշանակությունը գյուղատնտեսական արտադրությունում, 3) ճիշտ է ներկայացնում հողային քարտագրամներ և քարտեզներ կազմելու ընդհանուր մեթոդաբանությունը,

	4) Հայաստանի Հանրապետության քարտեզագրական հիմքի վրա ճիշտ է անցկացնում հիմնական հողատեսակների եզրագծերը:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը գանատվում է խմբային քննարկումների հիման վրա նախապես մշակված ուսումնառության արդյունքի վերաբերյալ հիմնական հասկացողությունների սահմանումների, բովանդակության վերաբերող պատասխանների ձևակերպմամբ: Միաժամանակ տրվելու են ելակետային տվյալներ ներկայացնել հողային քարտագրամները և քարտեզներ կազմելու մեթոդաբանությունը: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները Հողային քարտագրամները և դրանց նշանակությունը գյուղատնտեսական արտադրությունում, հողային քարտեզները և դրանց նշանակությունը գյուղատնտեսական արտադրությունում, հողային քարտագրամներ և քարտեզներ կազմելու ընդհանուր մեթոդաբանությունը, Հայաստանի Հանրապետության քարտեզագրական հիմքի վրա ճիշտ է անցկացնում հիմնական հողատեսակների եզրագծերը: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը առաջադրանքը հիմնականում կատարում է ճիշտ: Թույլատրվում է որոշ ոչ էական թերություններ և բացթողումներ:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական տեսանյութեր, պլակատներ, հողագիտական և քարտեզագրական նյութեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Պարզաբանել տարբեր նշանակության հողային քարտեզների բովանդակային առանձնահատկությունները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է մեկնաբանում տարբեր նշանակության հողային քարտեզների բովանդակությունը, 2) ճիշտ է ներկայացնում խոշորամասշտաբ հողային քարտեզները, 3) ճիշտ է մեկնաբանում հողային քարտեզների նշանակությունը հողային ռեսուրսների արդյունավետ և նպատակային օգտագործման բնագավառում, 4) ճիշտ է ներկայացնում հողային քարտեզների նշանակությունը հողերի արտադրողականության բարձրացմանը նպատակաուղղված գործընթացներում:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական առաջադրանքի և ստացված արդյունքների խմբային քննարկումների հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է առնվազն 3 քարտեզների հիման վրա անել եզրահանգումներ, որոնք քննարկվելու են խմբում: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները: Հողային քարտեզների բովանդակությունը, նշանակությունը, խոշորամասշտաբ հողային քարտեզները, հողային քարտեզների նշանակությունը հողային ռեսուրսների արդյունավետ և նպատակային օգտագործման բնագավառում, հողային քարտեզների

	նշանակությունը հողերի արտադրողականության բարձրացմանը նպատակաուղղված գործընթացներում: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը առաջադրանքը հիմնականում կատարում է ճիշտ և քննարկումներին մասնակցում է հիմնավոր եզրահանգումներով: Թույլատրվում է որոշ ոչ էական թերություններ և բացթողումներ:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական տեսանյութեր, պլակատներ, հողագիտական և քարտեզագրական նյութեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱ ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՀՂՇ 5 -17- 014
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի ուսումնասիրման արդյունքում ուսանողի մոտ ձևավորել գյուղատնտեսական արտադրության ոլորտների, խնդիրների, հետազոտման մեթոդների, շուկայի կառավարման համալիր տեսակների, դրանց էության ու միջավայրի վերաբերյալ գիտելիքներ և դրանք գործնականում կիրառելու կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 30 ժամ, գործնական աշխատանք՝ 24 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՀՂՇ 5-17-005 «Ընդհանուր երկրագործություն» և ՀՂՇ 5 –17-006 «Անասնապահության հիմունքներ» մոդուլները:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի գյուղատնտեսական արտադրության տեղաբաշխման հիմնական տարրերը և մասնագիտացման առանձնահատկությունները, 2) ներկայացնի գյուղատնտեսական արտադրության ոլորտում կապիտալ ներդրումների հիմնական տեսակները, 3) ներկայացնի ժամանակակից մարքեթինգի սահմանումները, ֆունկցիաները և առանձնահատկությունները:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարարման կարգի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել գյուղատնտեսական արտադրության տեղաբաշխման հիմնական տարրերը և մասնագիտացման առանձնահատկությունները

<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է ներկայացնում գյուղատնտեսական արտադրության տեղաբաշխման տարրերը,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման առանձնահատկությունները,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում գյուղատնտեսական արտադրանքների ներմուծման և արտահանման առանձնահատկությունները:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է խմբային քննարկումների, հարց ու պատասխանի հիման վրա: Ուսանողներին հանձնարարվելու է ըստ ագրոարտադրական գոտիների ներկայացնել գյուղատնտեսական արտադրության տեղաբաշխման հիմնական տարրերը և մասնագիտացման առանձնահատկությունները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Գյուղատնտեսական արտադրության առանձնահատկությունները և տեղաբաշխման հիմքերը, գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման անհրաժեշտությունը և առանձնահատկությունները: Մասնագիտացման վրա ազդող գործոնները:</p> <p>Գյուղատնտեսական արտադրանքների ներմուծման և արտահանման առանձնահատկությունները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե պատասխանները ձևակերպվում են մեթոդապես ճիշտ: Թույլատրվում է որոշ անճշտություններ և մասնակի բացթողումներ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, մեթոդական ցուցումներ, գյուղատնտեսական արտադրության տեղաբաշխման նորմատիվային փաստաթղթեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 10 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	<p>Ներկայացնել գյուղատնտեսական արտադրության ոլորտում կապիտալ ներդրումների հիմնական տեսակները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է որոշում կապիտալ ներդրումների բացարձակ ցուցանիշները,</p> <p>2) ճիշտ է որոշում կապիտալ ներդրումների հարաբերական ցուցանիշները,</p> <p>3) ճիշտ է որոշում կապիտալ ներդրումների արդյունավետության գործակիցը,</p> <p>4) ճիշտ է որոշում կապիտալ ներդրումների ետ գնման ժամկետները:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է խմբային քննարկումների և գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողներին հանձնարարվելու է ներկայացնել գյուղատնտեսական արտադրության ոլորտում կապիտալ ներդրումների հիմնական տեսակները:</p> <p>Գործնական առաջադրանքի միջոցով ուսանողը պետք է հաշվարկի կապիտալ ներդրումների համապատասխան ցուցանիշները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p>

	<p>Կապիտալ ներդրումների անհրաժեշտությունը և ուղղությունները: Կապիտալ ներդրումների բացարձակ և հարաբերական ցուցանիշները, դրանց հաշվարկը: Կապիտալ ներդրումների արդյունավետության ցուցանիշները, դրանց հաշվարկը: Կապիտալ ներդրումների ետ գնման ժամկետը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե հաշվարկները ճիշտ են կատարվում պատասխանները ձևակերպվում են մեթոդապես ճիշտ: Թույլատրվում է որոշ անճշտություններ և մասնակի բացթողումներ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, մեթոդական ցուցումներ, գյուղատնտեսական արտադրության կազմակերպման խոշորացված ցուցանիշներ նորմատիվային փաստաթղթեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	<p>Ներկայացնել ժամանակակից մարքեթինգի սահմանումները, ֆունկցիաները և առանձնահատկությունները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում տնտեսավարման շուկայական մեխանիզմի տեսական հիմունքները,</li> <li>2) ճիշտ է բացատրում մարքեթինգը՝ ձեռնարկության գործունեության կազմակերպման համակարգում,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում գովազդը՝ որպես պահանջարկի ձևավորման և իրացման խթանման կարևոր միջոց:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է խմբային քննարկումների, հարց ու պատասխանի հիման վրա: Ուսանողներին հանձնարարվելու է ձևակերպել ժամանակակից մարքեթինգի սահմանումները, ֆունկցիաները և առանձնահատկությունները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Տնտեսվարման շուկայական մեխանիզմի տեսական հիմունքները, մարքեթինգը՝ ձեռնարկության գործունեության կազմակերպման համակարգում, գովազդը՝ որպես պահանջարկի ձևավորման և իրացման խթանման կարևոր միջոց:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե պատասխանները ձևակերպվում են մեթոդապես ճիշտ: Թույլատրվում է որոշ անճշտություններ և մասնակի բացթողումներ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, մեթոդական ցուցումներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>

**ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ»**

<b>Մոդուլի դասիչը</b>	ՀՂՇ 5 -17-015
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլը մշակվել է գյուղատնտեսական արտադրության կազմակերպման և կառավարման ժամանակակից խնդիրները, մեթոդները և սկզբունքներն ուսումնասիրելու նպատակով: Այն կօժանդակի նաև ծանոթանալ աշխատանքի կազմակերպման առաջադիմական ձևերին, գյուղատնտեսական աշխատանքների և աշխատաժամանակի ծախսումների դասակարգման սկզբունքներին:
<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 30 ժամ, գործնական աշխատանք՝ 24 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՀՂՇ 5-17-014 «Գյուղատնտեսական արտադրության էկոնոմիկա և մարքեթինգ» մոդուլը:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի գյուղատնտեսական արտադրության կազմակերպման հիմունքները, 2) ներկայացնի գյուղատնտեսական արտադրության մեջ աշխատանքի կազմակերպման, նորմավորման և վարձատրության մոտեցումները, 3) ներկայացնի գյուղատնտեսական արտադրության կառավարման էությունը և խնդիրները, 4) ներկայացնի կառավարման գործառույթներն ու դասակարգումը:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել գյուղատնտեսական արտադրության կազմակերպման հիմունքները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում գյուղատնտեսական արտադրության կազմակերպման խնդիրներն ու օրինաչափությունները, 2) ճիշտ է ներկայացնում գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման և համակենտրոնացման սկզբունքները տարբեր գյուղատնտեսական կազմակերպություններում, 3) ճիշտ է վերլուծում դաշտավարության, բանջարաբուծության և անասնապահության կազմակերպման ներկա մոտեցումները:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը գնահատվում է խմբային քննարկումների հիման վրա: Ուսանողներին հանձնարարվելու է ըստ



	<p>ագրոարտադրական հատկանիշների ներկայացնել գյուղատնտեսական արտադրության կազմակերպման հիմնական սկզբունքները և մոտեցումները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Գյուղատնտեսական արտադրության կազմակերպման խնդիրներն ու օրինաչափությունները, գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման և համակենտրոնացման սկզբունքները տարբեր գյուղատնտեսական կազմակերպություններում, դաշտավարության, բանջարաբուծության և անասնապահության կազմակերպման ներկա մոտեցումները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե պատասխանները ձևակերպվում են մեթոդապես ճիշտ:</p> <p>Թույլատրվում է որոշ անճշտություններ և մասնակի բացթողումներ:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, մեթոդական ցուցումներ, գյուղատնտեսական արտադրության վերաբերող նորմատիվային փաստաթղթեր:</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 2</b></p>	<p>Ներկայացնել գյուղատնտեսական արտադրության մեջ աշխատանքի կազմակերպման, նորմավորման և վարձատրության մոտեցումները</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<p>1) ճիշտ է բացատրում աշխատանքի կազմակերպման ձևերը, գյուղատնտեսական աշխատանքների և աշխատաժամանակի ծախսումների դասակարգումն՝ ըստ սահմանված նորմաների,</p> <p>2) ճիշտ է մեկնաբանում գյուղատնտեսական աշխատանքների նորմավորման և վարձատրության սկզբունքները:</p>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական առաջադրանքի և խմբային քննարկումների հիման վրա: Ուսանողներին հանձնարարվելու է տարբեր ագրոարտադրական պայմաններում հիմնավորելու գյուղատնտեսական արտադրության մեջ աշխատանքի կազմակերպման, նորմավորման և վարձատրության մոտեցումները: Գործնական առաջադրանքի միջոցով նրանք հաշվելու են աշխատանքի վարձատրության չափերը, տարբեր աշխատանքների համար նորմաների մեծությունները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Աշխատանքի կազմակերպման ձևերը, գյուղատնտեսական աշխատանքների և աշխատաժամանակի ծախսումների դասակարգումն ըստ սահմանված նորմաների, գյուղատնտեսական աշխատանքների նորմավորման և վարձատրության սկզբունքները: Աշխատանքի վարձատրության ձևերը: Նորմաների տեսակները, դրանց բնութագրումը և կիրառումը աշխատանքի</p>

	կազմակերպման ընթացքում: Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե պատասխանները ձևակերպվում են մեթոդապես ճիշտ, իսկ գործնական առաջադրանքը կատարվում է ճիշտ: Թույլատրվում է որոշ անճշտություններ և մասնակի բացթողումներ:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, մեթոդական ցուցումներ, գյուղատնտեսական արտադրության վերաբերող նորմատիվային փաստաթղթեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Ներկայացնել գյուղատնտեսական արտադրության կառավարման էությունը և խնդիրները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է բացատրում գյուղատնտեսական արտադրության կառավարման էությունը, 2) ճիշտ է մեկնաբանում գյուղատնտեսական արտադրության կառավարման խնդիրները, 3) ճիշտ է ներկայացնում կառավարման կադրային քաղաքականության սկզբունքները, 4) ճիշտ է ներկայացնում աշխատանքային ռեսուրսների կառավարման սկզբունքները:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը գնահատվում է խմբային քննարկումների հիման վրա, որի ընթացքում պարզաբանվելու են գյուղատնտեսական արտադրության կառավարման առանցքային հարցերը: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները Գյուղատնտեսական արտադրության կառավարման էությունը, գյուղատնտեսական արտադրության կառավարման խնդիրները, կառավարման կադրային քաղաքականության սկզբունքները, աշխատանքային ռեսուրսների կառավարման սկզբունքները: Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե քննարկման ընթացքում ուսանողը ցուցաբերում է ծրագրային նյութի հիմնավոր իմացություն և գործնական կիրառման կարողություն: Թույլատրվում է որոշ անճշտություններ և մասնակի բացթողումներ:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, մեթոդական ցուցումներ, գյուղատնտեսական արտադրության վերաբերող նորմատիվային փաստաթղթեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Ներկայացնել կառավարման գործառույթներն ու դասակարգումը
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում կառավարման գործառույթները և դրանց դասակարգումը, 2) ճիշտ է մեկնաբանում Բիզնես-ծրագիրը որպես կառավարման կարևոր գործառույթ,

	3) ճիշտ է ներկայացնում լիդերության դերակատարությունը, դրա տեսակները և ներկայացվող անհրաժեշտ պահանջները՝ որպես արտադրության օպերատիվ կառավարում:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը գնահատվում է խմբային քննարկումների հիման վրա: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները Կառավարման գործառույթները և դրանց դասակարգումը, Բիզնես-ծրագիրը որպես կառավարման կարևոր գործառույթ, լիդերության դերակատարությունը, դրա տեսակները և ներկայացվող անհրաժեշտ պահանջները՝ որպես արտադրության օպերատիվ կառավարում: Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե պատասխանները ձևակերպվում են մեթոդապես ճիշտ: Թույլատրվում է որոշ անճշտություններ և մասնակի բացթողումներ:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, մեթոդական ցուցումներ, գյուղատնտեսական արտադրության վերաբերող նորմատիվային փաստաթղթեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Մ Ո Ղ Ո Ւ Լ Ի Ա Ն Վ Ա Ն Ո Ւ Մ Ը &lt;&lt;Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր Ի Մ Շ Ա Կ Մ Ա Ն Վ Ի Ճ Ա Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Մ Ե Թ Ո Ղ Ն Ե Ր Ը &gt;&gt;</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	<ԴՇ-5-17-016
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ զարգացնել հասարակական երևույթների վերաբերյալ տեղեկատվության հավաքման, մշակման և արդյունքների ընդհանրացման վիճակագրական մեթոդների կիրառման գործնական հմտություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 24 ժամ գործնական աշխատանք՝ 30 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չէ
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի տեղեկատվության հավաքման և ուսումնասիրության համար նախապատրաստման գործընթացը, 2) հաշվի հարաբերական և միջին մեծություններ, 3) բացատրի վարիացիայի երևույթը և կատարի հաշվարկներ,

	<p>4) հաշվի ինդեքսներ,</p> <p>5) ներկայացնի դինամիկայի շարքերը, կատարի կորեկացիոն վերլուծություն,</p> <p>6) ներկայացնի ընտրանքային մեթոդը:</p>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել տեղեկատվության հավաքման և ուսումնասիրության համար նախապատրաստման գործընթացը
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) որոշումներ ընդունելու համար տեղեկատվության անհրաժեշտությունը և կարևորությունը հիմնավորում է,</p> <p>2) տարբերակում է տեղեկությունների տեսակները և դրանց առանձնահատկությունները,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում տեղեկությունների աղբյուրները և ձեռք բերման ձևերը,</p> <p>4) տեղեկությունների խմբավորումը և ընդհանրացումը ճիշտ է կատարում,</p> <p>5) ճիշտ է կազմում աղյուսակներ,</p> <p>6) ճիշտ է կազմում գրաֆիկներ և դիագրամներ:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է հարց ու պատասխանի և գործնական հանձնարարություններ կատարելու հիման վրա: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվելու է ուսանողի ընդհանուր գիտելիքները վիճակագրական տեղեկությունների բնույթի, վիճակագրական դիտարկման տարբեր ձևերի առանձնահատկությունների վերաբերյալ: գործնական հանձնարարությունների ընթացքում ուսանողին հանձնարարվելու է կատարել վիճակագրական տեղեկությունների խմբավորում, այդ տեղեկությունները ներկայացնել աղյուսակների տեսքով, կազմել գրաֆիկներ և դիագրամներ:</p> <p>Արդյունքի ծրագրային առանցքային հարցերը</p> <ul style="list-style-type: none"> <li>- վիճակագրական տեղեկությունների անհրաժեշտությունը, տեսակները, աղբյուրները</li> <li>- վիճակագրական դիտարկման նպատակը, օբյեկտը, միավորը, տեսակները</li> <li>- վիճակագրական դիտարկման կազմակերպումը,</li> <li>- վիճակագրական տեղեկությունների խմբավորումը, խմբավորման հատկանիշը, խմբավորման ձևերը</li> <li>- վիճակագրական աղյուսակներ, տեսակները, ձևավորման տեխնիկաները</li> <li>- վիճակագրական տեղեկությունների գրաֆիկական ներկայացումը</li> </ul> <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողն ընդհանուր առմամբ ճիշտ է պատասխանում առաջադրված</p>

	հարցերին, գործնական հանձնարարությունները կատարում է մեթոդապես ճիշտ: Թույլատրելի են որոշ ոչ էական թերություններ:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և մեթոդական նյութեր,
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Հաշվել հարաբերական և միջին մեծություններ
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) հարաբերական և միջին մեծությունների կիրառման անհրաժեշտությունը հիմնավորում է,</li> <li>2) ճիշտ է հաշվում հարաբերական մեծություններ,</li> <li>3) ճիշտ է հաշվում միջին թվաբանականներ,</li> <li>4) ճիշտ է հաշվում հարմոնիկ միջիններ,</li> <li>5) ճիշտ է հաշվում միջին քառակուսայիններ,</li> <li>6) հաշվարկված միջին մեծությունների իմաստը ճիշտ է մեկնաբանում:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական առաջադրանքներ կատարելու միջոցով: Ուսանողին հանձնարարվելու են տարբեր առաջադրանքներ, որոնց ընթացքում նա պետք է հաշվարկի միջին և հարաբերական մեծությունների բոլոր տեսակները: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե յուրաքանչյուր իրավիճակում նա ճիշտ է ընտրում հաշվարկման մոտեցումը: Հաշվարկի ընթացքում նկատվող հնարավոր թվաբանական սխալները հաշվի չի առնվում:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, միկրոհաշվիչներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Բացատրել վարիացիայի երևույթը և կատարել հաշվարկներ
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ուսումնասիրվող երևույթների հատկանիշներում վարիացիայի առկայությունը ճիշտ է բացատրում,</li> <li>2) ձևավորում է վարիացիոն շարք,</li> <li>3) ճիշտ է հաշվարկում վարիացիայի ցուցանիշները,</li> <li>4) ճիշտ է հաշվարկում վարիացիոն շարքի մոդան և մեդիանան,</li> </ol>

	<p>5) ուսումնասիրվող երևույթներում գնահատում է վարիացիայի մեծությունը,</p> <p>6) կատարում է հիմնավոր եզրակացություններ:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողին տրամադրվելու է որևէ երևույթի հատկանիշի վերաբերյալ չկարգավորված տեղեկությունների շարք: Նա պետք է կազմի վարիացիոն շարք, հաշվարկի բոլոր ցուցանիշները, գնահատի ստացված արդյունքները:</p> <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե առաջադրանքը մեթոդապես ճիշտ է կատարվում:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական ու գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ուսումնական ու մեթոդական գրականություն, բաժանվող նյութեր, միկրոհաշվիչներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	<p>Հաշվել ինդեքսներ</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) բացատրում է ինդեքսների նշանակությունը և կիրառումը,</li> <li>2) ինդեքսների կառուցման կանոնները ներկայացնում է,</li> <li>3) ինդեքսների տեսակները ճիշտ է ներկայացնում,</li> <li>4) անհատական ինդեքսներ ճիշտ է հաշվարկում,</li> <li>5) ընդհանուր ինդեքսներ ճիշտ է հաշվարկում,</li> <li>6) ըստ ինդեքսների կատարում է գործնական եզրահանգումներ:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքի միջոցով: Ուսանողին հանձնարարականներ է տրվելու ինդեքսների բոլոր տեսակների հաշվարկման և գործնական կիրառման վերաբերյալ:</p> <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե առաջադրանքը կատարվում է հիմնականում ճիշտ: Ոչ էական թերությունները հաշվի չի առնվում:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և մեթոդական գրականություն, գործնական հանձնարարականների փաթեթներ, իրավիճակային տվյալներ, միկրոհաշվիչներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>

<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Ներկայացնել դինամիկայի շարքերը, կատարել կորելացիոն վերլուծություն
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) տարբերակում է դինամիկայի շարքերի տեսակները,</li> <li>2) ճիշտ է բացատրում դինամիկայի շարքերի տեսակները,</li> <li>3) դինամիկայի ցուցանիշները ճիշտ է հաշվում,</li> <li>4) ճիշտ է գնահատում դինամիկայի ցուցանիշները,</li> <li>5) երևույթների միջև կապերի տեսակները ներկայացնում և մեկնաբանում է,</li> <li>6) ճիշտ կազմում և լուծում է զույգային կապի հավասարումներ,</li> <li>7) ճիշտ է ստանում կորելացիոն կապի հավասարումը,</li> <li>8) ճիշտ գնահատում է երևույթների միջև կապի սերտության աստիճանը:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կազմել դինամիկ շարք, հաշվել դինամիկայի ցուցանիշները, գնահատել յուրաքանչյուր ցուցանիշը: Հանձնարարվելու է նաև զույգային կապի հավասարումների միջոցով բացահայտել երևույթների հատկանիշների միջև կապի սերտության մակարդակը: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե առաջադրանքները կատարվում է ճիշտ:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և մեթոդական գրականություն, գործնական հանձնարարականների փաթեթներ, իրավիճակային տվյալներ, միկրոհաշվիչներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 6</b>	Ներկայացնել ընտրանքային մեթոդը
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ընտրանքային դիտարկման անհրաժեշտությունը և առանձնահատկությունը բացատրում է,</li> <li>2) ընտրանքային դիտարկման տեսակները ներկայացնում է,</li> <li>3) ճիշտ կատարում է ընտրանքային դիտարկում,</li> <li>4) հաշվում է ընտրանքային համախմբի ցուցանիշները,</li> <li>5) ընտրանքային դիտարկման արդյունքները ընդհանրացնում է:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական առաջադրանքի միջոցով: Ուսանողների խմբին հանձնարարվելու է կատարել ընտրանքային դիտարկում և գնահատել արդյունքները:

	Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե առաջադրանքը կատարվում է մեթոդապես ճիշտ, իրականացված քայլերը հիմնավորվում են:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և մեթոդական գրականություն, գործնական հանձնարարականների փաթեթներ, իրավիճակային տվյալներ, միկրոհաշվիչներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>Մ Ո Ղ Ո Ւ Լ Ի Ա Ն Վ Ա Ն Ո Ւ Մ Ը &lt;&lt;ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅՈՒՆ&gt;&gt;</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	<ՂԾ-5-17-017
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել բիզնես գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ գործնական հմտություններ: Դրանք ներառում են ինքնուրույն բիզնես կազմակերպելու և վարելու համար անհրաժեշտ գործողությունների իրականացման հմտություններ, որոնցում հաշվի է առնված ինչպես գործարար ոլորտին հատուկ սկզբունքները, այնպես էլ բիզնես գործունեությունը կարգավորող իրավական դաշտի առանձնահատկությունները
<b>Մոդուլի տևողությունը</b>	72 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 22 ժամ գործնական աշխատանք՝ 50 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել <ՌԿ-5-17-016 <<Տեղեկությունների մշակման վիճակագրական մեթոդները>> մոդուլը
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի հիմնավորված բիզնես-գաղափարի ձևավորման գործընթացը 2) ներկայացնի կազմակերպության ստեղծման և գրանցման կարգը, կառավարման գործընթացը 3) կատարի շուկայի հետազոտման և գնահատման գործողություններ 4) բնութագրի կազմակերպության ռեսուրսները և գնահատի օգտագործման արդյունավետությունը 5) կատարել ծախսերի հաշվարկ, ձևավորի ապրանքի /ծառայության/ գինը 6) մշակի բիզնես պլան և գործողությունների ծրագիր 7) հաշվի հարկեր, տուրքեր, կազմի ֆինանսական հաշվետվություններ



<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարարման կարգակի ապահովումն է
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել հիմնավորված բիզնես-գաղափարի ձևավորման գործընթացը
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) բիզնես-գործունեության էությունը ճիշտ է մեկնաբանում,</li> <li>2) բիզնես-գործունեության տեսլականը, նպատակը և ռազմավարությունը ճիշտ է սահմանում,</li> <li>3) բիզնես-գործունեության համար նախընտրելի անձնային հատկանիշների կարևորությունը հիմնավորում է,</li> <li>4) բիզնես-գործունեության համար սեփական հնարավորությունների գնահատումը ճիշտ է,</li> <li>5) բիզնես-գաղափարի էությունը ճիշտ է մեկնաբանում,</li> <li>6) բիզնես-գաղափարի ձևավորման գործընթացի բաղադրիչների իմաստը ճիշտ է մեկնաբանում,</li> <li>7) ըստ իրավիճակների հիմնավորում է ձևավորված բիզնես-գաղափարները,</li> <li>8) բիզնես-գաղափարի տարբերակի գնահատումը ճիշտ է:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է խմբային քննարկումների և անհատական գործնական առաջադրանքների հիման վրա: Քննարկումների ընթացքում բացահայտվում է բիզնես-գաղափարի և բիզնես-գործունեության հիմնական հասկացությունների վերաբերյալ ուսանողների յուրացրած գիտելիքների մակարդակը, իսկ գործնական հանձնարարությունների միջոցով նրանք ըստ իրավիճակի ներկայացնում և հիմնավորում են կոնկրետ բիզնես-գաղափար, որոշակիացնում են իրենց նախընտրած գործունեության տեսակը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Բիզնես-գաղափարը որպես բիզնես-գործունեության մեկնակետ, դրա ձևավորման նախադրյալները: Բիզնես-գաղափարի իրատեսությունը հիմնավորող ցուցիչները: Օրենսդրական դաշտի պահանջները հաշվի առնելու կարևորությունը: Գործարար միջավայրի օբյեկտիվ գնահատման կարևորությունը և մոտեցումները: Սեփական գործարար հնարավորությունների բացահայտումը և անաչառության կարևորությունը: Բիզնես-գործունեության համար նախընտրելի ոլորտի ընտրությունը: Տեսլականի, նպատակի և ռազմավարության հստակ և հիմնավորված ձևակերպումը: Վերջնական բիզնես-գաղափարի գնահատումը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե քննարկումների ընթացքում ուսանողը ցուցաբերում է հիմնավորված եզրահանգումներ անելու ունակություն, իսկ գործնական առաջադրանքների ընթացքում ներկայացնում է տվյալ իրավիճակում</p>

	առավել նախընտրելի ու հիմնավորված լուծումներ:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Պարապմունքների անհրաժեշտ փուլերում անհրաժեշտ է կիրառել մտազրոհի տեխնիկան՝ հետագա քննարկման ուղղությունները ձևավորելու համար: Անհրաժեշտ է ունենալ ֆլիպչարտ, գունավոր թղթեր, ամրակներ, տարբեր գույնի մարկերներ, ուսուցողական իրավիճակների նկարագրեր, բիզնես-գաղափարների հաջողված օրինակներ, տեսլականի, նպատակի և ռազմավարության ուսուցողական ձևակերպումներ՝ նաև ոչ հստակ ձևակերպված:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Ներկայացնել կազմակերպության ստեղծման և գրանցման կարգը, կառավարման գործընթացը
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) կազմակերպության կազմակերպչա-իրավական ձևերի բնութագիրը ճիշտ է,</li> <li>2) կազմակերպության աշխատանքը կարգավորող իրավական ակտերի պահանջների ընկալումը ճիշտ է,</li> <li>3) կազմակերպության ստեղծման քայլերի հաջորդականությունը ճիշտ է մեկնաբանում,</li> <li>4) կազմակերպության ստեղծման համար պահանջվող փաստաթղթերի ձևավորումը ճիշտ է,</li> <li>5) կազմակերպության կառավարման անհրաժեշտությունը և խնդիրները ճիշտ է մեկնաբանում,</li> <li>6) կառավարման ֆունկցիաների բնութագրերը ճիշտ է,</li> <li>7) կառավարման ոճերի բնութագրերը ճիշտ է,</li> <li>8) կառավարման ֆունկցիոնալ բաժինների ձևավորման մոտեցումները ճիշտ է,</li> <li>9) աշխատատեղերի ձևավորման և պարտականությունների բաշխման մոտեցումները հիմնավոր է,</li> <li>10) աշխատողների ընտրության կարգը հիմնավոր է,</li> <li>11) կազմակերպության կառավարմանն առընչվող փաստաթղթերի ձևավորումը ամբողջական և հիմնավոր է,</li> <li>12) կնքվելիք պայմանագրերի կազմը և բովանդակությունը իրավաբանորեն ճիշտ է,</li> <li>13) կառավարման արդյունավետության գնահատման մոտեցումները հիմնավոր է:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է թեստային առաջադրանքների և գործնական հանձնարարականների հիման վրա: Թեստերի միջոցով ստուգվում է տարբեր կազմակերպչա-իրավական ձև ունեցող կազմակերպությունների, դրանց կառավարման առանձնահատկությունների վերաբերյալ ուսանողի գիտելիքները, իսկ գործնական հանձնարարությունների միջոցով ուսանողը

	<p>պետք է տրված պայմաններին համապատասխան կազմի տարբեր փաստաթղթեր: Գործնական հանձնարարությունները նպատակահարմար է առաջադրել ըստ ուսուցման փուլերի:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Կազմակերպության հասկացությունը և բնութագիրը: Կազմակերպությունների տիպերը, դրանց բնութագրիչ առանձնահատկությունները: Կազմակերպությունների ստեղծման ու գրանցման կարգը: Գործընթացի օրենսդրական կարգավորումը: Կազմակերպության կանոնադրությունը: Կազմակերպության կառավարման խնդիրները, ֆունկցիաները: Կառավարման ոճերը, դրանց առանձնահատուկ գծերը: Կառավարման ապարատի կառուցվածքը, ստորաբաժանումները: Կառավարման բաժինների առանձնացման սկզբունքները: Աշխատանքի բաժանման անհրաժեշտությունը, աշխատատեղերի ձևավորման մոտեցումները տարբեր մեծության կազմակերպություններում: Կազմակերպության փաստաթղթային տնտեսության ընդհանուր բնութագիրը, փաստաթղթերի ձևավորման կարգը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե թեստային առաջադրանքները կատարվում է հիմնականում ճիշտ, ոչ էական թերություններով, իսկ գործնական առաջադրանքները տրված պայմաններին համապատասխան կատարվում է ճիշտ:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում անհրաժեշտ է կիրառել առանձին իրավիճակների խմբային քննարկումներ:</p> <p>Անհրաժեշտ է ունենալ ուսումնական ու ցուցադրական նյութեր, տարբեր փաստաթղթերի նմուշներ, առանձին կազմակերպություններում աշխատանքի բաժանման, աշխատողների ֆունկցիաների սահմանման օրինակներ:</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 3</b></p>	<p>Կատարել շուկայի հետազոտման և գնահատման գործողություններ</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է մեկնաբանում &lt;&lt;շուկա&gt;&gt; հասկացությունը,</li> <li>2) շուկայի հետազոտման անհրաժեշտությունը հիմնավորում է,</li> <li>3) շուկայի հետազոտման հիմնական ուղղությունները բացահայտում է,</li> <li>4) շուկայի հետազոտման գործընթացի փուլերը ճիշտ է բնութագրում,</li> <li>5) ըստ փուլերի շուկայի հետազոտման մեթոդների ընտրությունը հիմնավոր է,</li> <li>6) շուկայական պահանջարկի ծավալի բացահայտման մոտեցումները ճիշտ է,</li> </ol>

	<p>7) շուկայի վրա ազդող գործոնների և գնորդի վարքագծի գնահատումը ճիշտ է,</p> <p>8) շուկայական մրցակցության գնահատումը հիմնավոր է,</p> <p>9) շուկայի հատվածավորումը իրատեսական է,</p> <p>10) մարքեթինգի գաղափարների /4P և 7P/ նշանակությունը ճիշտ է բացահայտում,</p> <p>11) մարքեթինգային ռազմավարության մշակման մոտեցումները հիմնավորված է:</p>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է թեստային առաջադրանքների, խմբային քննարկումների և գործնական հանձնարարությունների հիման վրա: Թեստերի միջոցով ստուգվելու է շուկայի վերաբերյալ հիմնական հասկացությունների ճիշտ ընկալման ուսանողի կարողությունը, իսկ գործնական առաջադրանքների միջոցով նա կատարելու է իրավիճակին համապատասխան եզրահանգումներ /հնարավորության դեպքում կարող են օգտագործվել նաև ուսանողների ինքնուրույն դիտարկումների ու հետազոտությունների արդյունքները/: Արդյունքները անհրաժեշտ է քննարկել խմբում:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Շուկայի բնութագիրը: Շուկայի հետազոտության անհրաժեշտությունը և հիմնական ուղղությունները: Շուկայի հետազոտության գործընթացը: Շուկայական պահանջարկի գնահատումը: Շուկայի վրա ազդող գործոնները, գնորդի վարքագիծը: Մրցակցություն, դրա գնահատումը: Շուկայի հատվածավորումը: Մարքեթինգի 4 և 7 P-երը: Մարքեթինգային ռազմավարության էությունը և մշակման կարևորությունը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե ուսանողը թեստային և գործնական առաջադրանքները ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում, իսկ խմբային քննարկումների ընթացքում ցուցաբերում է իրավիճակին հիմնավորված արձագանքելու ունակություններ:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ամբողջ ուսուցման ընթացքում ըստ իրավիճակների անհրաժեշտ է կիրառել մտագրոհի տեխնիկան:</p> <p>Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, շուկայական իրավիճակների նկարագրեր, տիպական իրավիճակներում առավել հիմնավորված լուծումների օրինակներ, գործնական կիրառություն ունեցող փաստաթղթերի նմուշներ:</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 4</b></p>	<p>Բնութագրել կազմակերպության ռեսուրսները և գնահատել օգտագործման արդյունավետությունը</p>

<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1) կազմակերպության ռեսուրսների կազմը և կառուցվածքը ճիշտ է բացահայտում,</li> <li>2) կազմակերպության ռեսուրսների խմբերի միջև օպտիմալ հարաբերակցության ապահովման անհրաժեշտությունը հիմնավորում է,</li> <li>3) նյութական ռեսուրսների խմբերի տնտեսագիտական բնութագրերը ճիշտ է,</li> <li>4) աշխատանքային ռեսուրսների բնութագիրը և դրանց առընչվող ցուցանիշների մեկնաբանությունը ճիշտ է,</li> <li>5) աշխատանքի տեխնիկական նորմավորման էությունը ճիշտ է բացատրում, նորմաների մեծության ձևավորման մեխանիզմը ճիշտ է ներկայացնում,</li> <li>6) ֆինանսական ռեսուրսների հետ կապված հասկացությունների բացատրությունը ճիշտ է,</li> <li>7) ֆինանսական ռեսուրսների համալրման աղբյուրների առանձնահատկությունները ճիշտ է մեկնաբանում,</li> <li>8) ռեսուրսների պահանջվելիք մեծության հաշվարկման մոտեցումները հիմնավոր է,</li> <li>9) հիմնական կապիտալի առանձին խմբերի օգտագործման արդյունավետության ցուցանիշների հաշվարկը և արդյունքների գնահատումը ճիշտ է,</li> <li>10) շրջանառու կապիտալի օգտագործման արդյունավետության ցուցանիշների հաշվարկը և արդյունքների գնահատումը ճիշտ է,</li> <li>11) աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության ցուցանիշների հաշվարկը և արդյունքների գնահատումը ճիշտ է,</li> <li>12) ռեսուրսների օգտագործման վերաբերյալ պարզ վերլուծական գործողությունները և ըստ արդյունքների եզրահանգումները հիմնավոր է:</li> </ol>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է խմբային քննարկումների և գործնական առաջադրանքների հիման վրա: Ուսանողներին հանձնարարվելու է ըստ ռեսուրսների տարբեր խմբերի հաշվել առավել ընդհանուր նշանակություն ունեցող ցուցանիշները: Նպատակահարմար է գործնական առաջադրանքները հանձնարարել փուլերով՝ ըստ ռեսուրսների խմբերի: Քննարկումների ընթացքում նրանք ոչ միայն գնահատելու են ստացված արդյունքները, այլ նաև առաջարկելու են լուծումների սեփական տարբերակները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Կազմակերպության ռեսուրսների ընդհանուր բնութագիրը: Նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսներ, դրանց կազմը: Հիմնական կապիտալ և շրջանառու կապիտալ: Ֆինանսական ռեսուրսներ: Ռեսուրսների մեծությունը բնութագրող</p>

	<p>ցուցանիշները: Ռեսուրսների օգտագործման մակարդակը բնութագրող ցուցանիշները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե առաջադրանքները մեթոդապես ճիշտ են կատարվում:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, գործնական հանձնարարությունների փաթեթներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Կատարել ծախսերի հաշվարկ, ձևավորել ապրանքի /ծառայության/ գինը
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) &lt;&lt;ծախս&gt;&gt; հասկացության բովանդակությունը ճիշտ է մեկնաբանում,</li> <li>2) տարբերակում է ծախսերի խմբերը,</li> <li>3) ծախսերը հիմնավորող փաստաթղթերի տեսակները և վավերապայմանները ճիշտ է ներկայացնում,</li> <li>4) ծախսերի տարբեր խմբերի հաշվապահական ձևակերպումները ճիշտ է,</li> <li>5) ապրանքների տարբեր տեսակների և ծառայությունների տարբեր խմբերի համար պահանջվող ծախսերի կազմը հիմնավոր է ներկայացնում,</li> <li>6) ապրանքի կամ ծառայության ինքնարժեքի մեջ ներառվող ծախսերի հոդվածները ճիշտ է ներկայացնում,</li> <li>7) ինքնարժեքի տարբեր հոդվածների մեծության հաշվարկման մեթոդաբանությունը ճիշտ է կիրառում,</li> <li>8) հաշվում է ապրանքի կամ ծառայության միավորի ինքնարժեքը,</li> <li>9) ինքնարժեքի իջեցման հնարավորությունները ճիշտ է գնահատում,</li> <li>10) ինքնարժեք-շուկայական գին մարժայի տարբերության հիմնավորումը ճիշտ է,</li> <li>11) անհատական գնից շուկայական գնի անցման տրամաբանությունը բացատրում է:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է շարունակական գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողներին հանձնարարվելու է ըստ ծախսերի առանձին հոդվածների կատարել միավոր արտադրանքի կամ ծառայության համար դրանց հաշվարկներ և որոշել ինքնարժեքն ու գինը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման հետ կապված ծախսերի հասկացությունը: Ուղղակի և անուղղակի ծախսեր, կայուն և փոփոխական ծախսեր: Ծախսերի մեծության հաշվարկման մեթոդաբանությունը: Ծախսերի հաշվապահական</p>

	<p>ձևակերպման կարգը: Անալիտիկ և սինթետիկ հաշվառման կազմակերպումը: Միավորի ինքնարժեքի ծախսային հոդվածները: Ինքնարժեքի հաշվարկը: Շահույթի նորմայի հասկացությունը և կիրառումը: Արտադրանքի գնի մեծության հաշվարկը: Անհատական գնից շուկայական գնին անցման գործընթացը: Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե հաշվարկները կատարվում է ճիշտ:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, մեթոդական ցուցումներ, գործնական հանձնարարությունների փաթեթներ, հաշվարկների կատարման ընթացքում օգտագործվող օրինակելի ձևաթղթեր:</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 6</b></p>	<p>Մշակել բիզնես պլան և գործողությունների ծրագիր</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1) բիզնես գործունեության համար բիզնես պլանի անհրաժեշտությունը հիմնավորում է,</li> <li>2) բիզնես պլանի բաժինների բովանդակության մեկնաբանությունները ճիշտ է,</li> <li>3) բիզնես պլանի մշակման համար անհրաժեշտ ելակետային տվյալների կազմը և ձեռք բերման աղբյուրները ճիշտ է ներկայացնում,</li> <li>4) ճիշտ է կատարում SWOT վերլուծություն,</li> <li>5) SWOT վերլուծության արդյունքները կիրառում է բիզնես պլանը մշակելու գործընթացում,</li> <li>6) բիզնես պլանով նախատեսվող միջոցառումները հիմնավորված է,</li> <li>7) բիզնես պլանի կատարումն ապահովող գործողությունների ծրագիրը, ժամանակացույցը հիմնավոր է,</li> <li>8) բիզնես պլանի կատարումն ապահովող ռեսուրսների մեծությունները ճիշտ է սահմանվել,</li> <li>9) բիզնես պլանով նախատեսված միջոցառումների իրականացման ռիսկերը և դրանց հաղթահարման քայլերը հիմնավոր են:</li> </ol>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է կազմված բիզնես պլանի հիման վրա, որում պետք է արտացոլված լինեն նախատեսված բիզնես գործունեության վերաբերյալ բոլոր հայտնի տեղեկությունները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Բիզնես պլանի բովանդակությունը և բաժիններում ներառվող հարցերը: Բիզնես պլանի կազմման համար անհրաժեշտ ելակետային տվյալները, դրանց աղբյուրները: SWOT վերլուծության արդյունքների կիրառումը պլանը կազմելու ժամանակ: Բիզնես պլանի</p>

	<p>կատարման գործողությունների ծրագիրը, դրա կազմման մոտեցումները: Գործողությունների ժամանակացույցը: Պլանի կատարման հնարավոր ռիսկերը, դրանց հաղթահարման միջոցառումները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե պլանը կազմված է ճիշտ և հիմնավորված:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ բիզնես պլանի բովանդակությանը համապատասխան ձևաթղթեր, մեթոդական հանձնարարականներ, պլանը կազմելու համար օգտագործվող ելակետային տվյալներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 7</b>	<p>Հաշվել հարկեր, տուրքեր, կազմել ֆինանսական հաշվետվություններ</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) հարկային օրենսդրության հիմնական դրույթները ճիշտ է մեկնաբանում,</li> <li>2) հարկային օրենսդրության հիմնական հասկացությունները ճիշտ է բացատրում,</li> <li>3) հարկերի և տուրքերի մեծությունը հաշվելու համար կիրառվող ելակետային ցուցանիշների հաշվարկը ճիշտ է կատարում,</li> <li>4) հարկերի և տուրքերի մեծությունը ճիշտ է հաշվարկում,</li> <li>5) հարկերի վճարման ժամկետների գնահատումը համապատասխանում է օրենսդրության պահանջներին,</li> <li>6) ֆինանսական հաշվետվությունների կազմը ճիշտ է ներկայացնում,</li> <li>7) անհրաժեշտ ֆինանսական հաշվետվությունները ճիշտ է լրացնում,</li> <li>8) ստուգումների իրականացման իրավական ակտերի պահանջները ճիշտ է բացատրում,</li> <li>9) ստուգումների հետ կապված տնտեսվարողի իրավունքներն ու պարտականությունները ճիշտ է ներկայացնում:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է շարունակական գործնական առջադրանքների կատարման հիման վրա: Ուսանողներին հանձնարարվելու է հաշվել հարկերի և տուրքերի գումարները, լրացնել ֆինանսական հաշվետվություններ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Հայաստանի Հանրապետությունում կիրառվող հարկերի և տուրքերի տեսակները, դրանց տնտեսական նշանակությունը:</p> <p>Հարկային օրենսդրության հիմնական դրույթները: Հարկերի հաշվարկման կարգը և դրույքաչափերը: Հարկատուների պատասխանատվությունը հարկային օրենսդրության պահանջների պահպանման համար: Ֆինանսական հաշվետվությունների տեսակները, հաշվետվությունների լրացման և ներկայացման կարգը: Ստուգումների անցկացումը, կարգը:</p>



	Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքները ճիշտ է կատարում:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, հարկերի վերաբերյալ օրենքներ և նորմատիվ փաստաթղթեր, մեթոդական նյութեր, հաշվետվությունների ձևաթղթեր, հաշվարկները կատարելու համար օգտագործվող ելակետային նյութերի փաթեթներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՀՂՇ 5-17-018
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլը մշակվել է գյուղական բնակավայրերի հատակագծման տեսական հիմունքների, մասնավորապես, գյուղական բնակավայրերի տարբեր գործառնական տարածքների ընտրության կարգի ու նորմաների մասին ուսանողին բավարար գիտելիքներ տալու և դրանք գործնականում կիրառելու հմտություններ ձևավորելու նպատակով: Մոդուլի ուսումնասիրման արդյունքում ուսանողի մոտ կձևավորվի հատակագծման վրա ազդող շրջակա միջավայրի գործոնների որոշարկման կարողություններ, ինչպես նաև հատակագծման նախագծի կազմման սկզբունքային մոտեցումները գործնականում կիրառելու հմտություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 30 ժամ, գործնական աշխատանք՝ 24 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) պարզաբանի բնակչության թվաքանակի շարժընթացի և հեռանկարային փոփոխման միտումները, 2) մեկնաբանի գյուղական բնակավայրերի բնակելի ֆոնդի հաշվարկման սկզբունքները, 3) ներկայացնի գյուղական բնակավայրերի հատակագծման և կառուցապատման նախագծային նորմաները:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Պարզաբանել բնակչության թվաքանակի շարժընթացի և հեռանկարային փոփոխման միտումները

<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է սահմանում «բնակչություն» և «բնակչության շարժ» հասկացությունները,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում բնակչության շարժընթացի վրա ազդող սոցիալական և տնտեսաքաղաքական գործոնները,</li> <li>3) ճիշտ է բացատրում բնակչության տարաբնակեցման ձևերն ու համակարգերը,</li> <li>4) ճիշտ է ներկայացնում բնակչության թվաքանակի փոփոխման հեռանկարային պատկերը,</li> <li>5) ճիշտ է մեկնաբանում գյուղական բնակավայրերի հասարակական դերը:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է խմբային քննարկումների հիման վրա: Ուսանողներին հանձնարարվելու է ըստ տարբեր համայնքների պարզաբանել բնակչության թվաքանակի շարժընթացի և հեռանկարային փոփոխման միտումները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>«Բնակչություն» և «բնակչության շարժ» հասկացությունները, բնակչության շարժընթացի վրա ազդող սոցիալական և տնտեսաքաղաքական գործոնները, բնակչության տարաբնակեցման ձևերն ու համակարգերը, բնակչության թվաքանակի փոփոխման հեռանկարային պատկերը, գյուղական բնակավայրերի հասարակական դերը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե պատասխանները ձևակերպվում են մեթոդապես ճիշտ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, մեթոդական ցուցումներ, ներհամայնքային հողաշինարարական և գյուղական բնակավայրերի հատակագծեր և նախագծեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 10 ժամ  գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	<p>Մեկնաբանել գյուղական բնակավայրերի բնակելի ֆոնդի հաշվարկման սկզբունքները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է բացատրում գյուղական բնակավայրերի բնակելի ֆոնդի կառուցվածքը,</li> <li>2) ճիշտ է բացատրում բնակելի ֆոնդի հաշվարկման սկզբունքները,</li> <li>3) հասարակական շենքերի ու կառույցների սահմանները ճիշտ է անցկացնում և հստակեցնում,</li> <li>4) ճիշտ է որոշում բնակելի և արտադրական գոտիների մակերեսները,</li> <li>5) ճիշտ է տարանջատում տարածքի գործառնական, բնակելի, արտադրական և կանաչ գոտիները,</li> <li>6) ճիշտ է բացատրում տարածքի գոտիավորման միավորների ընտրությունն՝ ըստ իրավիճակի:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է անհատական գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողներին հանձնարարվելու է</p>

	<p>մեկնաբանել գյուղական բնակավայրերի բնակելի ֆոնդի հաշվարկման սկզբունքները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Գյուղական բնակավայրերի բնակելի ֆոնդի կառուցվածքը, բնակելի ֆոնդի հաշվարկման սկզբունքները, հասարակական շենքերի ու կառույցների սահմանների անցկացման և հստակեցման քայլերը, բնակելի և արտադրական գոտիների մակերեսները, տարածքի գործառնական, բնակելի, արտադրական և կանաչ գոտիները, տարածքի գոտիավորման միավորների ընտրությունն՝ ըստ իրավիճակի:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե հաշվարկները կատարվում է ճիշտ: Թույլատրվում է որոշ ոչ էական թերություններ և բացթողումներ:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, մեթոդական ցուցումներ, ներհամայնքային հողաշինարարական և գյուղական բնակավայրերի հատակագծեր և նախագծեր:</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 3</b></p>	<p>Ներկայացնել գյուղական բնակավայրերի հատակագծման և կառուցապատման նախագծային նորմաները</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում բնակելի տների տեղաբաշխման պայմաններն ու նորմաները,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում հասարակական և սոցիալական նշանակության շենքերի և շինությունների տեղաբաշխման պայմաններն ու նորմաները,</li> <li>3) ճիշտ է կազմում բնակելի գոտու գրաֆիկական նախագիծ,</li> <li>4) ճիշտ է կազմում արտադրական գոտու գրաֆիկական նախագիծ,</li> <li>5) իրականացնում է հատակագծման նախագծի տեխնիկատնտեսական գնահատում,</li> <li>6) կազմում է հաշվետվություն կատարված նախագծային աշխատանքների վերաբերյալ:</li> </ol>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողներին հանձնարարվելու է ըստ տարբեր համայնքների ներկայացնել գյուղական բնակավայրերի հատակագծման և կառուցապատման նախագծային նորմաները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Բնակելի տների տեղաբաշխման պայմաններն ու նորմաները, հասարակական և սոցիալական նշանակության շենքերի և</p>

	<p>շինությունների տեղաբաշխման պայմաններն ու նորմաները, բնակելի գոտու գրաֆիկական նախագիծը, արտադրական գոտու գրաֆիկական նախագիծը, հատակագծման նախագծի տեխնիկատնտեսական գնահատում, կատարված նախագծային աշխատանքների վերաբերյալ փաստաթղթերը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե նախագծային հաշվարկները կատարվում է ճիշտ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, մեթոդական ցուցումներ, ներհամայնքային հողաշինարարական և գյուղական բնակավայրերի հատակագծեր և նախագծեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
<b>Մ Ո Ղ Ո Ւ Լ Ի Ա Ն Վ Ա Ն Ո Ւ Մ Ը «Հ Ո Ղ Ա Յ Ի Ն Ի Ր Ա Վ Ո Ւ Ն Ք»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՀՂՇ 5-17-019
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության և հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման սկզբունքների, հողերի պահպանությունը, հողային օրենսդրության կիրառման սահմանների ու հողօգտագործման նկատմամբ վերահսկողության իրականացման միջոցառումների վերաբերյալ գիտելիքներ և դրանք գործնականում կիրառելու կարողություններ
<b>Մոդուլի տևողությունը</b>	72 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 42 ժամ գործնական աշխատանք՝ 30 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1) բնութագրի հողային իրավունքի աղբյուրները,</li> <li>2) ներկայացնի հողային օրենսդրության կիրառման, հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ իրականացվող վերահսկողության իրավական կարգավորման համակարգը,</li> </ol>

	<p>3) ներկայացնի հողամասերի սեփականատերերի և օգտագործողների իրավունքներն ու պարտականությունները,</p> <p>4) ներկայացնի պետության և համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման գործընթացները,</p> <p>5) ներկայացնի հողային վեճերի լուծման իրավական կարգավորումը:</p>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարարման կարգակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Բնութագրել հողային իրավունքի աղբյուրները
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է պարզաբանում հողային իրավունքի հետ առնչվող ՀՀ Սահմանադրության համապատասխան հոդվածները,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում հողային իրավունքը կարգավորող ՀՀ հողային օրենսդրությունը,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում հողային իրավունքը կարգավորող այլ նորմատիվ իրավական ակտերը:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է թեստային առաջադրանքի միջոցով: Ուսանողին հանձնարարվելու է հողային իրավունքի վերաբերյալ հիմնական հասկացողությունների շարքը, որոնցից յուրաքանչյուրի դիմաց նա ներկայացնելու համառոտ նկարագիրը, սահմանումը և բովանդակությունը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Հողային իրավունքի հետ առնչվող ՀՀ Սահմանադրության համապատասխան հոդվածները, հողային իրավունքը կարգավորող ՀՀ հողային օրենսդրությունը, հողային իրավունքը կարգավորող այլ նորմատիվ իրավական ակտերը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը առաջադրանքը հիմնականում կատարում է ճիշտ: Թույլատրվում է որոշ ոչ էական թերություններ և բացթողումներ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ իրավական, օրենսդրական փաստաթղթեր, նորմատիվային ակտեր, որոշումներ և օրենսգրքեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում- 10 ժամ գործնական աշխատանք- 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Ներկայացնել հողային օրենսդրության կիրառման, հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ իրականացվող վերահսկողության իրավական կարգավորման համակարգը
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է ներկայացնում հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ պետական վերահսկողության խնդիրները,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները,</p>

	3) ճիշտ է ներկայացնում մարզպետարանի և համայնքապետարանի, որպես ղեկավարի, իրավասությունները հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ իրականացվող վերահսկողության բնագավառում:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը գնահատվում է թեստային առաջադրանքի միջոցով: Ուսանողին հանձնարարվելու է հողային օրենսդրության կիրառման, հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ իրականացվող վերահսկողության դրվածքի վերրաբերյալ հիմնական հասկացողությունների շարքը, որոնցից յուրաքանչյուրի դիմաց նա ներկայացնելու համառոտ նկարագիրը: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ պետական վերահսկողության խնդիրները, հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները, մարզպետարանի և համայնքապետարանի իրավասությունները հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ իրականացվող վերահսկողության բնագավառում: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը առաջադրանքը հիմնականում կատարում է ճիշտ: Թույլատրվում է որոշ ոչ էական թերություններ և բացթողումներ:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, պլակատներ, իրավական փաստաթղթեր և օրենսգրքեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում- 8 ժամ գործնական աշխատանք- 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Ներկայացնել հողամասերի սեփականատերերի և օգտագործողների իրավունքներն ու պարտականությունները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում հողամասերի սեփականատերերի և օգտագործողների իրավունքները, 2) ճիշտ է ներկայացնում հողամասերի սեփականատերերի և օգտագործողների պարտականությունները:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը գնահատվում է թեստային առաջադրանքի միջոցով: Ուսանողին հանձնարարվելու է հողամասերի սեփականատերերի և օգտագործողների իրավունքներն ու պարտականությունների վերաբերյալ հիմնական հասկացողությունների շարքը, որոնցից յուրաքանչյուրի դիմաց նա ներկայացնելու համառոտ նկարագիրը: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները Հողամասերի սեփականատերերի և օգտագործողների իրավունքները, հողամասերի սեփականատերերի և օգտագործողների պարտականությունները: Հարաբերությունները կարգավորող իրավական ակտերը: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը առաջադրանքը հիմնականում կատարում է ճիշտ: Թույլատրվում է

	որոշ ոչ էական թերություններ և բացթողումներ:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, պլակատներ, իրավական փաստաթղթեր և օրենսգրքեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում- 8 ժամ գործնական աշխատանք- 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Ներկայացնել պետության և համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման գործընթացները
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում պետության և համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերի օտարումն իրականացնող լիազոր մարմինները,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում պետության և համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման գործընթացը,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում պետության և համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերի վաճառքը,</li> <li>4) ճիշտ է ներկայացնում հողամասերի վաճառքի աճուրդի կազմակերպումն ու իրականացումը:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական առաջադրանքի միջոցով: Ուսանողին հանձնարարվելու է պետության և համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման գործընթացների վերաբերյալ կազմել անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Պետության և համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերի օտարումն իրականացնող լիազոր մարմինները, պետության և համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման գործընթացը, պետության և համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերի վաճառքը, հողամասերի վաճառքի աճուրդի կազմակերպումն ու իրականացումը: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը առաջադրանքը հիմնականում կատարում է ճիշտ: Թույլատրվում է որոշ ոչ էական թերություններ և բացթողումներ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, պլակատներ, իրավական փաստաթղթեր և օրենսգրքեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում- 8 ժամ գործնական աշխատանք- 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Ներկայացնել հողային վեճերի լուծման իրավական կարգավորումը

<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է ներկայացնում հողամասերի նկատմամբ իրավունքների պաշտպանությունը,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում հողային վեճերի լուծման իրավական կարգավորման սկզբունքները:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական առաջադրանքի միջոցով: Ուսանողին հանձնարարվելու է հողային վեճերի հետ կապված իրավիճակներ, որոնց համար նա պետք է ընտրի հիմնավորված լուծում:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Հողամասերի նկատմամբ իրավունքների պաշտպանությունը, հողային վեճերի լուծման իրավական կարգավորման սկզբունքները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե ուսանողը առաջադրանքը կատարում է ճիշտ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումը իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, պլակատներ, իրավական փաստաթղթեր և օրենսգրքեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում- 8 ժամ</p> <p>գործնական աշխատանք- 6 ժամ</p>
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՀՂՇ 5 - 17 - 020
<b>Մոդուլի նպատակը</b>	<p>Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել «աշխարհագրական քարտեզ» և «տեղանքի հատակագիծ» հասկացությունների վերաբերյալ գիտելիքներ և դրանց կիրառման ոլորտները հստակեցնելու, հիմնական տարրերն ուսումնասիրելու և տարբերությունները բացահայտելու, ինչպես նաև պարզ չափագրումներ կատարելու, քարտեզներ ու հատակագծեր ընթերցելու և կազմելու, դրանց վրա պարզ չափագրումներ ու հաշվարկներ կատարելու կարողություններ:</p>
<b>Մոդուլի տևողությունը</b>	<p>18 ժամ՝ որից՝</p> <p>տեսական ուսուցում՝ 10 ժամ,</p> <p>գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>
<b>Մուտքային պահանջները</b>	<p>Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:</p>
<b>Ուսումնառության արդյունքները</b>	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <p>1) ներկայացնի «աշխարհագրական քարտեզ» և «տեղանքի հատակագիծ» հասկացությունների սահմանումները և դրանց հիմնական տարրերը,</p> <p>2) դասակարգի աշխարհագրական քարտեզները,</p>



	<p>3) մեկնաբանի աշխարհագրական քարտեզի և տեղանքի հատակագծի տարբերությունները,</p> <p>4) չափագրի քարտեզի և հատակագծի վրա հեռավորություններն ու մակերեսները:</p>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել «աշխարհագրական քարտեզ» և «տեղանքի հատակագիծ» հասկացությունների սահմանումները և դրանց հիմնական տարրերը
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է սահմանում «աշխարհագրական քարտեզ» հասկացությունը,</p> <p>2) ճիշտ է սահմանում «տեղանքի հատակագիծ» հասկացությունը,</p> <p>3) ճիշտ է սահմանում «հորիզոնի և «ազիմուտի» հասկացությունները,</p> <p>4) ճիշտ է սահմանում «մասշտաբ» հասկացությունը և տալ դրա արտահայտչաձևերը. (թվային, անվանական, գծային),</p> <p>5) ճիշտ է ներկայացնում գեոդեզիական ցանցի (աստիճանացանցի) տարրերը. միջօրեական, զուգահեռական:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է հարց ու պատասխանի միջոցով: Ուսանողներին հանձնարարվելու է ներկայացնել «աշխարհագրական քարտեզ» և «տեղանքի հատակագիծ» հասկացությունների սահմանումները և դրանց հիմնական տարրերը: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>«Աշխարհագրական քարտեզ» հասկացությունը, «տեղանքի հատակագիծ» հասկացությունը, «հորիզոնի և «ազիմուտի» հասկացությունները, «մասշտաբ» հասկացությունը և տալ դրա արտահայտչաձևերը. (թվային, անվանական, գծային), գեոդեզիական ցանցի (աստիճանացանցի) տարրերը. միջօրեական, զուգահեռական:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե պատասխանները ձևակերպվում են ճիշտ: Թույլատրվում է որոշ ոչ էական թերություններ և բացթողումներ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, մեթոդական ցուցումներ, քարտեզներ, հատակագծեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Դասակարգել աշխարհագրական քարտեզները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում քարտեզների դասակարգումն՝ ըստ մասշտաբի,

	<p>2) ճիշտ է ներկայացնում քարտեզների դասակարգումն՝ ըստ բովանդակության,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում քարտեզների դասակարգումն՝ ըստ նշանակության,</p> <p>4) ճիշտ է մեկնաբանում աշխարհագրական քարտեզի պայմանական նշանները:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողներին հանձնարարվելու է ըստ տարբեր հատկանիշների դասակարգել աշխարհագրական քարտեզները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Քարտեզների դասակարգումն ըստ մասշտաբի, քարտեզների դասակարգումն ըստ բովանդակության, քարտեզների դասակարգումն ըստ նշանակության, աշխարհագրական քարտեզի պայմանական նշանները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե առաջադրանքը կատարվում է ճիշտ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, մեթոդական ցուցումներ, քարտեզներ, հատակագծեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 2 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	<p>Մեկնաբանել աշխարհագրական քարտեզի և տեղանքի հատակագծի տարբերությունները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է ներկայացնում քարտեզի վրա մակերևույթի անհարթությունների (ռելիեֆի) պատկերման սկզբունքը,</p> <p>2) ճիշտ է բացատրում հատակագծի վրա մակերևույթի անհարթությունների պատկերման սկզբունքը,</p> <p>3) ճիշտ է մեկնաբանում քարտեզի և հատակագծի տարբերություններն ըստ երկրագնդի մակերևույթի գնդաձևության հաշվառման /անտեսման, հորիզոնի կողմերի արտահայտման, մասշտաբների մեծության ու մանրամասնությունների պատկերման խորության:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողներին հանձնարարվելու է ըստ քարտեզների և հատակագծերի մեկնաբանել աշխարհագրական քարտեզի և տեղանքի հատակագծի տարբերությունները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Քարտեզի վրա մակերևույթի անհարթությունների (ռելիեֆի) պատկերման սկզբունքը, հատակագծի վրա մակերևույթի անհարթությունների պատկերման սկզբունքը, քարտեզի և հատակագծի տարբերություններն ըստ երկրագնդի մակերևույթի գնդաձևության հաշվառման /անտեսման, հորիզոնի կողմերի արտահայտման, մասշտաբների մեծության ու</p>

	մանրամասնությունների պատկերման խորությամբ: Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե առաջադրանքը կատարվում է ճիշտ: Թույլատրվում է որոշ ոչ էական թերություններ և բացթողումներ:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, մեթոդական ցուցումներ, քարտեզներ, հատակագծեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Չափագրել քարտեզի և հատակագծի վրա հեռավորություններն ու մակերեսները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է բացատրում թվային մասշտաբից անվանական և գծային մասշտաբ ստանալու սկզբունքը, 2) ճիշտ է հաշվարկում քարտեզի և հատակագծի վրա չափագրված հեռավորությունների ու մակերեսների իրական արժեքները:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողներին հանձնարարվելու է ըստ քարտեզների և հատակագծերի չափագրել քարտեզի և հատակագծի վրա հեռավորություններն ու մակերեսները: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները Թվային մասշտաբից անվանական և գծային մասշտաբ ստանալու սկզբունքը, քարտեզի և հատակագծի վրա չափագրված հեռավորությունների ու մակերեսների իրական արժեքները: Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե հաշվարկները կատարվում է ճիշտ: Թույլատրվում է որոշ ոչ էական թերություններ և բացթողումներ:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, մեթոդական ցուցումներ, քարտեզներ, հատակագծեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՀՂՇ 5 -17- 021
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլը մշակվել է հողաշինարարության հիմունքները և խնդիրները, ՀՀ հողային ֆոնդը, դրա կազմը, արդյունավետ օգտագործման հիմնախնդիրներն ու հողաշինարարության ձևերն ուսումնասիրելու նպատակով, ինչն անհրաժեշտ է ապագա

	մասնագետի մասնագիտական գործունեության համար:
<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 22 ժամ, գործնական աշխատանք՝ 32 ժամ:
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ՀՂՇ 5-17-018 «Գյուղական բնակավայրերի նախագծում» մոդուլը:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) պարզաբանի հողաշինարարության հիմնական դրույթները, խնդիրները և և ժամանակակից ձևերը, 2) գնահատի ՀՀ հողային ֆոնդի կազմը և ակնկալվող փոփոխությունները, 3) սահմանի հողերի նպատակային և հողատեսքերի գործառնական նշանակությունները:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Պարզաբանել հողաշինարարության հիմնական դրույթները, խնդիրները և և ժամանակակից ձևերը
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է սահմանում հողաշինարարության հիմնական դրույթները, 2) ճիշտ է վերլուծում հողաշինարարության խնդիրները, 3) ճիշտ է ներկայացնում հողաշինարարության բովանդակությունը, 4) ճիշտ է տարանջատում հողաշինարարության ժամանակակից ձևերը:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը գնահատվում է թեստային առաջադրանքի և գործնական հանձնարարությունների հիման վրա: Թեստերի միջոցով ստուգվելու է հողաշինարարության վերաբերյալ հիմնական հասկացությունների ճիշտ ընկալման ուսանողի կարողությունը, իսկ գործնական առաջադրանքների միջոցով նա կատարելու է իրավիճակին համապատասխան հողաշինարարական խնդիրների ձևակերպում: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները Հողաշինարարության հիմնական դրույթները, հողաշինարարության խնդիրները, հողաշինարարության բովանդակությունը, հողաշինարարության ժամանակակից ձևերը: Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե ուսանողը թեստային և գործնական առաջադրանքները ընդհանուր առմամբ

	ճիշտ է կատարում:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ամբողջ ուսուցման ընթացքում ըստ իրավիճակների անհրաժեշտ է կիրառել մտազրոհի տեխնիկան: Անհրաժեշտ է հողաշինարարական հատակագծաքարտեզագրական նյութեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Գնահատել ՀՀ հողային ֆոնդի կազմը և ակնկալվող փոփոխությունները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է մեկնաբանում ՀՀ հողային ֆոնդի ներկայիս կազմի առանձնահատկությունները, 2) ճիշտ է վերլուծում պահուստային հողերի ներկայիս վիճակը, 3) ճիշտ է բացահայտում պահուստային հողերի օգտագործման հեռանկարները:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը գնահատվում է թեստային առաջադրանքների հիման վրա: Թեստերի միջոցով ստուգվելու է ՀՀ հողային ֆոնդի կազմի և ակնկալվող փոփոխությունների բնագավառում ուսանողի ձեռքբերումը: Ուսանողը ներկայացնելու և վերլուծելու է ՀՀ հողային ֆոնդի քանակական և որակական բնութագիրը: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները ՀՀ հողային ֆոնդի ներկայիս կազմի առանձնահատկությունները, պետական սեփականություն հանդիսացող հողերի ներկայիս վիճակը, պահուստային հողերի օգտագործման հեռանկարները: Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ամբողջ ուսուցման ընթացքում ըստ իրավիճակների անհրաժեշտ է կիրառել մտազրոհի տեխնիկան: Անհրաժեշտ է հողաշինարարական հատակագծաքարտեզագրական նյութեր:, ՀՀ հողային ֆոնդի վիճակագրական տվյալներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Սահմանել հողերի նպատակային և հողատեսքերի գործառնական նշանակությունները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է տարբերակում հողերը ըստ նպատակային նշանակության, 2) ճիշտ է սահմանում<<հողամաս>> հասկացությունը

	<p>3) ճիշտ է տարանջատում հողերը ըստ հողատեսքերի,</p> <p>4) ճիշտ է կատարում հողերի և հողատեսքերի փոխակերպում:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է թեստային առաջադրանքի հիման վրա: Թեստերի միջոցով ստուգվելու է ՀՀ հողային ֆոնդի նպատակային և հողատեսքերի գործառնական նշանակության բնագավառում ուսանողի իմացությունը: Ուսանողը ներկայացնելու հողամաս հասկացողությունը և բնութագրելու է դրանց գործառնական և նպատակային նշանակությունը: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Հողամաս հասկացությունը, հողերի դասակարգումը ըստ նպատակային նշանակության, հողատեսքերը և դրանց գործառնական նշանակությունը: Հողերի և հողատեսքերի փոխակերպման անհրաժեշտությունը և իրականացումը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե ուսանողը առաջադրանքը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ամբողջ ուսուցման ընթացքում ըստ իրավիճակների անհրաժեշտ է կիրառել մտազրոհի տեխնիկան: Անհրաժեշտ է հողաշինարարական հատակագծաքարտեզագրական նյութեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 8 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 14 ժամ</p>
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՆԵՐՎԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՀՂՇ 5 -17- 022
<b>Մոդուլի նպատակը</b>	<p>Այս մոդուլը մշակվել է ներհամայնքային հողաշինարարության բովանդակությունը և խնդիրները, ներհամայնքային հողաշինարարական նախագծերի օգնությամբ համայնքների հողային ֆոնդի առավել ամբողջական, արդյունավետ ու նպատակային օգտագործման առանձնահատկություններն ուսումնասիրելու նպատակով: Այն կօգնի նաև ուսումնասիրել նախագծերի կազմման կարգը և կատարել տնտեսագիտական հիմնավորումներ:</p>
<b>Մոդուլի տևողությունը</b>	<p>72 ժամ, որից՝</p> <p>տեսական ուսուցում՝ 28 ժամ,</p> <p>գործնական աշխատանք՝ 44 ժամ</p>
<b>Մուտքային պահանջները</b>	<p>Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ՀՂՇ 5-17-019 «Հողային իրավունք» և ՀՂՇ 5-17-021 «Հողաշինարարություն և հողաշինարարական նախագծում» մոդուլները:</p>

<b>Ուսումնառության արդյունքները</b>	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1) ներկայացնի ներհամայնքային հողաշինարարության բովանդակությունը և խնդիրները,</li> <li>2) կատարի ցանքաշրջանառությունների տարածքի կազմակերպում,</li> <li>3) կատարի բազմամյա տնկարկների տարածքային կազմակերպում,</li> <li>4) կատարի բնական կերային հողատեսքերի տարածքային կազմակերպում,</li> <li>5) կատարի նախագիծը բնության մեջ փոխադրելու աշխատանքներ:</li> </ol>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	<p>Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարարմակարգակի ապահովումն է:</p>
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	<p>Ներկայացնել ներհամայնքային հողաշինարարության բովանդակությունը և խնդիրները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում ներհամայնքային հողաշինարարության բովանդակությունը,</li> <li>2) ճիշտ է վերլուծում ներհամայնքային հողաշինարարության խնդիրները,</li> <li>3) ճիշտ է կիրառում համայնքի հողային ֆոնդի առավել արդյունավետ ու նպատակային օգտագործման միջոցառումները:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է խմբային քննարկման արդյունքների հիման վրա, որի ընթացքում պարզաբանվում են ներհամայնքային հողաշինարարության հետ կապված հարցերը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Ներհամայնքային հողաշինարարության բովանդակությունը, ներհամայնքային հողաշինարարության խնդիրները, համայնքի հողային ֆոնդի արդյունավետ ու նպատակային օգտագործման ուղիները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե քննարկման ընթացքում ուսանողները ճիշտ են մեկնաբանում իրավիճակները և առաջարկում են առավել հիմնավորված մոտեցումներ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, մեթոդական ցուցումներ, հողաշինարարական հատակագծեր և նախագծեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	<p>Կատարել ցանքաշրջանառությունների տարածքի կազմակերպում</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է սահմանում ցանքաշրջանառությունների տարածքային կազմակերպման խնդիրները,</li> </ol>

	<p>2) ճիշտ է կատարում դաշտերի և տեղամասերի նախագծում,</p> <p>3) ճիշտ է կատարում դաշտային ճանապարհների, դաշտապաշտպան անտառաշերտերի և ջրամատակարարման կառուցվածքների տեղաբաշխում,</p> <p>4) մշակում է հողապաշտպան հակաէրոզիոն միջոցառումների քարտացուցակ,</p> <p>5) կատարում է ցանքաշրջանառությունների տարածքային կազմակերպման արդյունավետության տնտեսական հիմնավորում:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողներին հանձնարարվելու է կոնկրետ օրինակի վրա կազմել ցանքաշրջանառության սխեման:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Ցանքաշրջանառությունների տարածքային կազմակերպման խնդիրները, ցանքաշրջանառության դաշտերի և բանվորական տեղամասերի նախագծում, դաշտային ճանապարհների, դաշտապաշտպան անտառաշերտերի և ջրամատակարարման կառուցվածքների տեղաբաշխումը, հողապաշտպան հակաէրոզիոն միջոցառումների քարտացուցակ:</p> <p>Ցանքաշրջանառությունների տարածքային կազմակերպման արդյունավետության տնտեսական հիմնավորում:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե առաջադրանքը կատարվում է հիմնավորված:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, մեթոդական ցուցումներ, հողաշինարարական հատակագծեր և նախագծեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Կատարել բազմամյա տնկարկների տարածքային կազմակերպում
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է սահմանում բազմամյա տնկարկների՝ պտղատու, խաղողի և հատապտղային այգիների տարածքային կազմակերպման խնդիրները,</p> <p>2) ճիշտ է կատարում տեղամասերի նախագծում,</p> <p>3) ճիշտ է տեղաբաշխում այգամիջյան ճանապարհները, այգապաշտպան անտառաշերտերը և ջրամատակարարման կառուցվածքները:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողներին հանձնարարվելու է տարբեր հյոդակլիմայական պայմաններում հիմնավորելու բազմամյա տնկարկների կազմակերպման անհրաժեշտությունը և կոնկրետ</p>



	<p>օրինակի վրա կազմակերպել դրանց տարածքները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Բազմամյա տնկարկների՝ պտղատու, խաղողի և հատապտղային այգիների տարածքային կազմակերպման խնդիրները, տեղամասերի նախագծում, այգամիջյան ճանապարհների և այգապաշտպան անտառաշերտերի ու ջրամատակարարման կառուցվածքների տեղաբաշխում:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե ներկայացվում է տարածքների կազմակերպման հիմնավորված տարբերակ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, մեթոդական ցուցումներ, հողաշինարարական հատակագծեր և նախագծեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Կատարել բնական կերային հողատեսքերի տարածքային կազմակերպում
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է սահմանում բնական կերային հողատեսքերի տարածքային կազմակերպման խնդիրները,</li> <li>2) ճիշտ է նախագծում խոտհարքաշրջանառության և արոտաշրջանառության սխեմաներ,</li> <li>3) ճիշտ է կատարում նախիրային և անասնահոտային տեղամասերի նախագծում,</li> <li>4) ճիշտ է նախագծում փռված (զագոնային) արածեցման տեղամասերը:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողներին հանձնարարվելու է տարբեր հյոդակլիմայական պայմաններում հիմնավորելու բնական կերային հողատեսքերի կազմակերպման անհրաժեշտությունը և կոնկրետ օրինակի վրա կազմակերպել դրանց տարածքները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Բնական կերային հողատեսքերի տարածքային կազմակերպման խնդիրները, խոտհարքաշրջանառության և արոտաշրջանառության սխեմաներ, նախիրային և անասնահոտային տեղամասերի նախագծում, հերթափոխային (զագոնային) արածեցման տեղամասերը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե ներկայացված տարբերակը և առաջարկված լուծումները հիմնավոր են:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, մեթոդական ցուցումներ, բնական կերհանդակների հողաշինարարական հատակագծեր և նախագծեր:

<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Կատարել նախագիծը բնության մեջ փոխադրելու աշխատանքներ
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում հողաշինարարական նախագիծը բնության մեջ փոխադրելու եղանակներն ու մեթոդները, 2) ճիշտ է կազմում նախագիծը բնության մեջ փոխադրելու աշխատանքային գծագիր, 3) ճիշտ է կազմում նախագիծը բնության մեջ փոխադրելու հանձնման և ընդունման ակտ, 4) ճիշտ է ներկայացնում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողներին հանձնարարվելու է հողաշինարարական նախագծերը բնության մեջ տեղափոխել երեք եղանակներով: Ուսանողը ցուցադրելու է նշահարման հատակագծի մշակման հաջորդականությունը և նշանակությունը նախագիծը բնության մեջ տեղափոխելու համար: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները Հողաշինարարական նախագիծը բնության մեջ փոխադրելու եղանակներն ու մեթոդները, նախագիծը բնության մեջ փոխադրելու աշխատանքային գծագիր, նախագիծը բնության մեջ փոխադրելու հանձնման և ընդունման ակտ: Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե առաջադրանքը կատարվում է համապատասխան հիմնավորումներով:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, մեթոդական ցուցումներ, հողաշինարարական հատակագծեր և նախագծեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀՈՂԱՅԻՆ ԿԱԴԱՍՏՐ, ՀՈՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԱՌՈՒՄ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՀՂՇ 5 –17 - 023
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել հողային կադաստրի խնդիրների, զարգացման փուլերի, հողային կադաստրի վարման հիմնական սկզբունքների, հողերի պետական գրանցման գործառույթների և հաշվառման հիմնական սկզբունքների, հողերի դասակարգման ձևերի վերաբերյալ գիտելիքներ և դրանք գործնականում կիրառելու կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	72 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 40 ժամ,

	գործնական աշխատանք՝ 32 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՀՂՇ 5-17-007 «Հողաշինարարական գծագրություն» և ՀՂՇ 5 -17-019 «Հողային իրավունք» մոդուլները:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1) ներկայացնի պետական հողային կադաստրի նպատակը, առարկան և խնդիրները,</li> <li>2) մեկնաբանի պետական հողային կադաստրի վարման հիմնական սկզբունքները, հողերի դասակարգման ձևերը,</li> <li>3) պարզաբանի հողերի պետական գրանցման խնդիրներն ու բովանդակությունը,</li> <li>4) ներկայացնի հողերի հաշվառման նշանակությունն ու բովանդակությունը:</li> </ol>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար վաժ կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել պետական հողային կադաստրի նպատակը, առարկան և խնդիրները
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում պետական հողային կադաստրի նպատակը և առարկան,</li> <li>2) ճիշտ է պարզաբանում պետական հողային կադաստրի խնդիրները,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում պետական հողային կադաստրը՝ որպես հողային հարաբերությունների կարգավորման, հողօգտագործման և հողաշինարարության կազմակերպման հիմնական օղակ,</li> <li>4) ճիշտ է ներկայացնում պետական հողային կադաստրի զարգացման փուլերը ՀՀ-ում:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է հարց ու պատասխանի հիման վրա: Հարց ու պատասխանի միջոցով ուսանողի մոտ ստուգվում է պետական հողային կադաստրի նպատակը, լուծման ենթակա խնդիրները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <p>Հողային կադաստրի հիմնական սկզբունքները, պետական հողային կադաստրի նպատակը և առարկան, պետական հողային կադաստրի խնդիրները, պետական հողային կադաստրը որպես հողային հարաբերությունների կարգավորման, հողօգտագործման և հողաշինարարության կազմակերպման հիմնական օղակ, պետական հողային կադաստրի զարգացման փուլերը ՀՀ-ում:</p> <p>Արդյունքի ձեռք բերումը դրական է համարվում, եթե տրված առաջադրանքները կատարվում է հիմնականում ճիշտ, ոչ էական թերություններով, պատասխանները ձևակերպվում են մեթոդապես ճիշտ:</p>

<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում անհրաժեշտ է կիրառել առանձին իրավիճակների խմբային քննարկումներ: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական ու ցուցադրական նյութեր, կադաստրային հնահատման ելակետային տարբեր փաստաթղթերի նմուշներ, իրավական, օրենսդրական փաստաթղթեր, որոշումներ, հանձնարարականներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Մեկնաբանել պետական հողային կադաստրի վարման հիմնական սկզբունքները, հողերի դասակարգման ձևերը
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում պետական հողային կադաստրի վարման հիմնական սկզբունքները, 2) ճիշտ է ներկայացնում հողերի դասակարգման ձևերը:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը գնահատվում է թեստային առաջադրանքի հիման վրա: Թեստերի միջոցով ստուգվելու է պետական հողային կադաստրի վարման հիմնական սկզբունքների էության, հողերի դասակարգման ձևերի վերաբերյալ ուսանողի իմացությունը: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝ պետական հողային կադաստրի վարման հիմնական սկզբունքները, հողերի դասակարգման ձևերը: Արդյունքի ձեռքբերումը դրական է համարվում, եթե տրված առաջադրանքները կատարվում է հիմնականում ճիշտ, ոչ էական թերություններով, մեկնաբանությունները կատարվում են մեթոդապես ճիշտ:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում անհրաժեշտ է կիրառել առանձին իրավիճակների խմբային քննարկումներ: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական ու ցուցադրական նյութեր, կադաստրային հնահատման ելակետային տարբեր փաստաթղթերի նմուշներ, իրավական, օրենսդրական փաստաթղթեր, որոշումներ, հանձնարարականներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Պարզաբանել հողերի պետական գրանցման խնդիրներն ու բովանդակությունը
